

«DROSHAK»
REVUE MENSUELLE
Organe
de la F. R. A. D.

ԴՐՕՇԱԿ

№ 9
SEPTEMBRE
1931
PARIS (France)

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԹԵՅԸ ԴՆՆԵՆԿՑՈՒԹԵՐՆ» ՕՐԳԱՆ

Ն Ե Ր Գ Ա Ղ Ի Ք

Չորս տարի դուռները ամուր փակելէ յետոյ, խորհրդային իշխանութիւնը անցեալ Յուլիսի սկիզբը աւետեց թէ հնարաւոր կը գտնէ «որոշ թիւով» գաղթականներու տեղաւորումը Հայաստանի մէջ:

Հայաստանի Գործավարներու Խորհուրդին նախագահը, Փարիզի մէջ, տուաւ մանրամասնութիւններ ծրագրած ներգաղթի մասին: Եւ արդէն հրապարակի վրա է տասը հազար տարագիրներու փոխադրութեան պատմութիւն մը: (Երկու հազար ընտանիք):

Վերջնական է այս թիւը: Պիտի կրնան իրագործել: Ո՞րքան ժամանակէն: Դժուար է պատասխանել այս հարցերուն:

Օգոստոս 10ին, Հայաստանի Կեդր. Գործադիր Կոմիտէի եւ Գործավարներու Խորհուրդը այս մասին քէօքարեմ են բանաձեւ մը, որ որոշ տեղեկութիւններ չի տար քանակի եւ թւականի մասին: Անհրաժեշտ գտնելով «բանւորական նոր ձեռքերու պատրաստութիւնը», բանաձեւը կը խօսի յանձնաժողովի մը կազմութեան մասին: Այդ յանձնաժողովի է որ պիտի որոշէ ընդունելիք գաղթականներու թիւը, անոնց ընդունելութեան թւականը, պարենաւորման, տեղաւորման եւն. խնդիրները:

Կարեւորը այն է որ, Խորհրդային Հայաստանը, վերջապէ՛ս, պիտի ընդունի «որոշ թիւով» գաղթականներ, յառաջիկայ տարիներու ընթացքին: Պիտի ընդունի դասակարգային չափանիշով, — միայն աշխատաւորներ, մասնաբաժնիներ եւ անոնց ընտանիքները: Պիտի հրակէ, պիտի գտէ, որպէսզի «թշնամիներ» չսպրըղին ցանկերուն մէջ:

Արհամարհելով այս ստթիւ ալ արտասուած տիտուր հոգեբանութիւնը, նեղմտութիւնն ու խտրականութիւնը, կողջունենք ձեռնարկը, ի՞նչ ուղղութեամբ ալ գործադրի:

Տարագիր բազմութիւններու հոսանքը դէպի Երկիր՝ փրկարար քաղաքականութիւն է Հայ Ժողովուրդին համար, որո՛ւ ձեռքով ալ կատարի:

Ամբողջ բառասուն տարի, Հ. Յ. Դանակցութիւնը ունեցած է մէկ հիմնական նպատակ, — ստեղծել տանելի պայմաններ մեր երկրին մէջ, ապահովել ազատութիւն եւ ստեղծագործելու հնարաւորութիւն, համախմբել ժողովուրդը: Մէկ խօսքով՝ հայրենիք հաստատել, որպէսզի ցիրուցան չկորսուի ժողովուրդը:

Այսօրւան Հայաստանը այն չէ ինչ որ կը սպասէր Հայ Ժողովուրդը, դարերու գերութեանն եւ անհնարին զոհողութիւններէ յետոյ: Հայ մարդը լուծի տակ է նորէն, թէ՛ եւ բոլորովին տարբեր պայմաններու մէջ: Օտարն է դարձեալ իր թաթը դրած մեր գլխուն: Եւ բազմութիւնները կը տքան ծանր մղձաւանջի մը տակ:

Ի՞նչ փոյթ: Հայրենիքը պէտք է հաւաքէ իր գաւազները: Պանդխտութեան, «անորոշ ազգութեան» նւաստացումէն ու տառապանքէն պէտք է փրկելին թափառական բազմութիւնները:

Մենք չէ որ պիտի ուզէինք երկարաձգել օտարութիւնն ու անստուգութիւնը: Հայ աշխատաւորը, փոխանակ օտար պողոսաներու վրա սպառելու իր ուժերը, փոխանակ աննպատակ մաշելու եւ ծիրերու, թող կապի հայրենի հողին ու իր քրտինքով արգասաւորէր զայն: Հողը, հայրենիքն է որ պիտի փրկէ ե՛ւ իր ճակատագիրը ե՛ւ իր բարօրութիւնը:

Մեծ թիւ մը չէ յայտարարած տասը հազարը: Ո՛չ իսկ 17.000ը, ինչպէս կանկալեն աւելի լաւատեսներ: Իայց արժէք ունի թէ՛ բարոյապէս, թէ՛ Ֆիզիքապէս եւ թէ՛ տնտեսապէս, պայմանաւ որ գործադրի լրջութեամբ: Եւ առանց յապաղման:

Աւետարար տրեցաւ անցեալ Յուլիսի առաջին շաբթուն, իսկ այսօր Սեպտեմբեր է: Ի՞նչ պէս կը յուսան, տարւան այս եղանակին, ե՛ւ ցուցակագրել ե՛ւ փոխադրել ե՛ւ տեղաւորել: Գործին փութացումը կախում ունի ոչ թէ՛ գաղութներէն, այլ Երեւանէն:

Գիպենք որ արակցութիւն կը սպասեն գա-

դուժնեբէն: Եւ իրաւամբ: Անհրաժեշտ է լայնօրէն ապահովել այդ աջակցութիւնը, ոչ միայն օգնելու համար հայրենիքին, այլեւ ապացուցանելու համար թէ գաղութիւններ միշտ ալ պատրաստ են կատարելու իրենց պարտականութիւնը, երբ լաւ գործ կը կատարւի, երբ երկրի վերաշինութիւնը եւ զարգացումը չեն չփութիւր առօրեայ մարզանքներու հետ:

Ներգաղթի քաղաքականութիւնը պէտք է դառնայ հիմնական ուղղութիւն՝ Երեւանի, ինչպէս գաղութներու համար:

Ներգաղթ եւ վերաշինութիւն անհրաժեշտ, անյետաձգելի պահանջներ են այսօր: Եւ պիտի ուզէինք հաւատայ թէ՛ պատահական երեւոյթ չէ մաս մը գաղթականներ ընդունելու որոշումը: Թէ ներգաղթը պիտի շարունակւի տարւտարի, հասնելով պատկառելի համեմատութեան մը: Գացողները պէտք է ճամբայ բանան մնացողներուն:

Եւ ի՞նչ ճիշտ է որ արագօրէն կը զարգանայ երկրին ճարտարագործութիւնը, ապա ուրեմն պէտք է կարճ կապել բոլոր տաղտկալի ձեւակերպութիւնները, եւ լայն, կարելի եղածին չափ լայն բանայ դուռները: Նոյն իսկ բնակարանի տաղանայը կը լուծւի լայն բանալով դուռները: Հազարաւոր հայ աշխատաւորներ անհաստիական տուններ, ամբողջ գիւղեր շինած են Փրանսայի գանազան մասերուն մէջ: Եթէ անոնք հնարաւորութիւն ունենային իրենց հայրենիքին մէջ ի գործ դնելու իրենց Ֆիզիքական ու տնտեսական ուժերը, անշուշտ քաղաքներ շինած կըլլային:

Ներգաղթի եւ վերաշինութիւն: Անշուշտ, այսպէս կամ այնպէս կը ճարւի փոխադրութեան ծախքը: Անհրաժեշտը այն է, որ խորհրդային իշխանութիւնը նոր դիւրութիւններ ընծայէ, որպէսզի ամբապնդւի կապը Երեւանի եւ արտասահմանի միջեւ, եւ կարելի ըլլայ գործնապէս աջակցել երկրին վերաշինութեան եւ տնտեսական զարգացման:

Եւ յետոյ հանրօրոտ շինութիւնները ամէն բան չեն, բաւական չեն, երկիր շինելու համար: Ըլլայ իսկ միայն բանւորներու եւ գիւղացիներու երկիր:

Սակաւահողութիւնը առածի կարգ անցած է արդէի Հայաստանի մէջ: Սակաւահողութիւն ոչ միայն Ֆիզիքական տեսակէտով, այլ եւ սահմաններով: Ծահիճներ չորցնել, առուններ բանալ գնահատելի աշխատանքներ են անշուշտ:

Իսկ չեն բաւեր հող արտադրելու: Չեն բաւեր ժողովուրդը կանգուն պահելու եւ երկիրը ամրացնելու համար:

Եւ ինչո՞ւ ժայռեր ճանկատել, երբ կան վիճելի հողամասերը: Երբ աշխատաւոր, շինարար ձեռքերու, նոյն իսկ բնակիչի կը սպասեն Կարսն ու Սուրմալուն...:

Ազգերու ինքնորոշման իրաւունքը եթէ արժէք ունի Մարոքի, Թունուզի կամ Պեսարապիոյ համար, պէտք է ունենայ նաեւ եւ մանաւանդ Հայաստանի համար, որուն հողերուն երեք չորրորդը դարձած է միջազգային աւար եւ ժողովուրդին կէսը՝ «հայամթոյս»:

Դպրոցական մանուկներն անգամ գիտեն որ խորհրդային իշխանութիւնը քաջալերեց, վաւերացուց հայկական հայրենիքէն կատարուած յօշոտումները, արեւելքէն, հարաւէն թէ հիւսիսէն: Եւ աւելի քան կէս միլիոն ժողովուրդ — իսկական բանւորներ եւ գիւղացիներ — ահա կը տարուբերին երկիրէ երկիր:

Այս հալածական զանգւածին մէկ տասներորդն իսկ յոյս չունի հայրենիք տեսնելու, քանի որ հող չունի հայրենիքը: Յոյս չունի, իբրեւ հետեւանք այն քաղաքականութեան զոր կողք կողքի կը վարեն Մոսկւան ու Էնկիւրին:

Ժամանակ է որ, ներգաղթի քաղաքականութեան հետ, Երեւանը խորհի նաեւ ուրիշ հիմնական լուծումներու մասին:

Կը բաւէ տրամադրութիւն՝ գէթ մասամբ զարմանելու համար Հայաստանի դէմ գործուած անարդարութիւնը:

Կը բաւէ լսել բուն իսկ աշխատաւոր բազմութիւններուն ձայնը, եւ լրջօրէն սերտել նոյն ինքն խորհրդային իշխանութեան նշանախօսքերը:

Իսկ մինչեւ այդ, մենք սրտանց կը գնահատենք ներգաղթի կարգադրութիւնը, յանձնարարելով ամէն աջակցութիւն, եւ պարտականութեան հրաւիրելով բոլոր հանրային կազմակերպութիւնները:

Դէպի Երկիր, բոլոր հնարաւոր միջոցներով: Եւ հակառակ բոլոր դժուրակ պայմաններուն: Ո՛րեւէ իշխանութիւն աւելի զօրաւոր չի կրնար ըլլալ քան ժողովուրդը իր սեփական հողին վրայ: Մանաւանդ աշխատաւոր եւ արի ժողովուրդը:

Եթէ հայ ժողովուրդը կրցաւ անակնկալներ ստեղծել դարէ դար եւ տողալ այնքան փութորիկներու, գաղտնիքը հոն է որ եղաւ հաւատարիմ իր հողին եւ ունեցաւ ապրելու կամք՝ իր լեռներուն չափ ամուր:

Խ Օ Ս Ք Ե Ր Ե Ի Փ Ա Ս Տ Ե Ր

Բ .

ԿՈՎԿԱՍԵԱՆ

ԿՈՆՖԵԴԵՐԱՑԻԱ

Մեր առաջին յօդածում ասացինք, թէ Հասարակական հիւանդութիւնները բժշկելու լաւագոյն միջոցը ոչ թէ նրանց ջօղարկումն է, այլ մեթիլացումը: Վէրբը երեւան Հանելոյժ լուս կը դարձանին: Ընդհակառակը, ծածկեած ախտը պատճառ կը դառնայ ամբողջ մարմնի վարակման ու քայքայման:

Կովկասեան ժողովուրդների քաղաքականութիւնը միտեանց վերաբերմամբ մինչև այժմ ընթացել է վերջին ձևով: Որովհետև ծածկել են Հասարակաց հիւանդութիւնները, քօղարկել ու հերբել են ամենքին ծանօթ փաստերը և այնպէս է ցոյց տրել, որ, կարծես, ամէն ինչ լաւ է ընթանում, Հակամարտ շահեր ու ձգտումներ գոյութիւն չունեն, միմեանց հանդէպ վատ գործեր չեն կատարել և եթէ, այնուամենայնիւ, Համերաշխութիւնն ու ներգաշնակութիւնը բացակայէ է, պատճառը միայն սրա կամ նրա շար կամքն է կամ, շատ-շատ, մարդկանց ջեւեհական ճաշակների և շահերի մտահոգութիւնը»:

Մտաւորապէս, այս ձևով է դատում և Ռասուլ Չաղէն կովկասեան կոնֆեդերացիայի մասին խօսելիս: Նրա մտքերը այդ հարցի մասին զարգանում են հետևեալ ձևով: Նա գրում է. «Ազգրէջանում գաղափար է Համախորանակախոթեան իրապաշտ հոսանքը, որը կարողացաւ գաղափարախօսութիւնը զուգորդել երկրի իրական պահանջների հետ: Ազգրէջանեան թիւրքերովը գնաց դաշնակցական ուղղութեամբ, որը... ազգրէջանցիներին հասցրեց ո՛չ միայն Ազգրէջանի անկախութեան գաղափարին, այլ և կոնֆեդերատիւ Կովկասի ստեղծման անհրաժեշտութեան Համոզումին: Թիւրք ֆէդէրալիստների Ազգրէջանի «Մուսաւաթ» ուսկալար կուսակցութիւնը 1919թ. Բազելի իր Համազուգումարում... որուն շնորհունը ցանկալի կովկասեան Հանրապետութիւնների միութիւնը կովկասեան կոնֆեդերացիայի ազատ դաշնակցութեան մէջ և կոչ անել կովկասեան բովանդակ ուսկալարութեան, ինչպէս նաև Հարեան Հանրապետութիւնների կառավարութիւններին» աջակցել այդ գաղափարի իրականացման»:

Յետոյ. «Այդ նոյն թւականին ազգրէջանեան կառավարութիւնը Բազում զումարած Հայ-ազգրէջանեան խորհրդակցութիւնն առաջարկեց մի Նախագիծ՝ կովկասեան Հանրապետութիւնները կոնֆեդերացիայի վերածելու մասին: Ազգրէջանի առաջարկութիւնը, որ այն ժամանակ մերժեց հայկական պատուիրակութեան կողմից, 1920 թւին ստացաւ մասնակի իրականացում գինևորա-պաշտպանողական դաշնադրութեան ձևով ընդ մէջ Վրաստանի և Ազգրէջանի՝ պայմանով որ Հայաստանն էլ, եթէ կամենայ, յարի այդ դաշնադրութեան»:

Եւ, վերջապէս. «Ոչ միայն տիրող «Մուսաւաթ»

կուսակցութեան ներկայացուցիչները, այլ և ազգրէջանեան քաղաքական մտքի Համարեա բոլոր հոսանքներն ու ականաւոր քաղաքական գործիչները, Ազգրէջանի Հանրապետութեան ծագման հէնց սկզբից, կողմնակից են եղել բոլոր կովկասեան ժողովուրդների կոնֆեդերատիւ պետութեան մէջ միանալու անհրաժեշտութեան: Այդ մասին խօսել է երկրի պատասխանատու գործիչների ճտեղծում, այդ նշանաբանը քննել է խորհրդարանի ամբիոնից, զրա Համար, ինչպէս մատնանշեց վերը, բանաձևեր են Հանել կուսակցական Համազուգումարներում»:

Այստեղ կանգ առնեք մի պահ: Ուրեմն, ազգրէջանեան գործիչները «Ազգրէջանի համարապետութեան ծագման հէնց սկզբից» կողմնակից են եղել կովկասեան կոնֆեդերացիային: Այդ հարցը գրել են և հայերի աւելև, բայց սրանք մեթօ՛ւ են: Դուրս է դալիս, որ Հայերն են արգելել եղել Կովկասի ժողովուրդների միութեան և, անուղղակի կերպով, անկախութեան ապահովութեան: Այս՝ Ռասուլ Չաղէի խօսքն է, Հիմա քանք փաստին:

Նախ քան այդ, սակայն, երկու խօսք՝ Հանգուցեալ Նոյ Ռամիշվիլիի վերջերս Հրատարակեած մի յօդածով մասին*) և, որ, զարմանալի դուպաղկուցութեամբ, պաշտպանում են նոյն գաղափարները և միևնոյն մրտաշնութեամբ, ինչ որ և Ռասուլ Չաղէի զբօյլով:

Ռամիշվիլին էլ է Հաւատացնում, որ Վրաստանի անկախութեան հէնց սկզբի օրերին և դրանից էլ առաջ, պատերազմի սկզբին, վրաց սոցիալ-դեմոկրատիան ճնշպատակ է գրել Կովկասի քաղաքական կուսակցութիւնների Համաձայնութիւնը, բայց Հայկական գլխաւոր կուսակցութիւնը ընտրեց անջատման ուղին և մերժեց միութեան ճակատը: Ե՛րբ, ինչպէ՛ս, ո՞վ է առաջարկել «Հայկական գլխաւոր կուսակցութեան» Համաձայնութիւնը կամ «միութեան ճակատ» — այդ մտնում է Ռամիշվիլիի զարմոնքը: Մենք դիտենք, սակայն, որ այդպիսի առաջարկութիւն երբեք չի եղել: Ու այժմ, յետին թիւով, Ե. Յ. Դաշնակցութեան վրաց փաթաթի նման մեղադրանք՝ նշանակում է կրկին այն քաղաքականութիւնը, որին վրացի սոցիալ-դեմոկրատները, պատերազմի ընթացքին և պատերազմից առաջ, անշեղօրէն հետևում էին Հայկական գլխաւոր կուսակցութեան» վերաբերմամբ:

Ռամիշվիլին անում է և մի ուրիշ անհիմն մեղադրանք: Նա առում է, թէ 1918թ. 27 Հոկտեմբերին

*) Н. Рамишвили. «Конфедерация Республик Кавказа». «Горцы Кавказа», Июнь, 1931, № 24.

վրաց կառավարութիւնը, համերաշխութեան նպատակով, խորհրդաժողովի է հրահրել կողմաւ միւս հանրապետութիւնները, բայց, զոժտախտաբար, Հայկական Հանրապետութիւնը այս անգամ էլ չչարեց ընդհանուր ճակատին: Կողմասեան բոլոր հանրապետութիւնների համաձայնութիւնը մի առ ժամանակ հանդիպեց դժուարութիւնների»:

Յօսքը այն խորհրդաժողովի մասին է, որի հեղինակը ինքը Ռամիշվիլին էր: Սա, առանց նախօրոք համաձայնելու հարեան հանրապետութիւնների հետ, առանց նոյնիսկ տեղեկացնելու, որոշել էր խորհրդաժողովի ժամանակը, տեղը, կազմը, օրակարգը և Երեւան, Բազու ու լեռնակաաններին յայտնելի գործադրութեան, կարծես, Լեռնակաանների, Արբէշեանի ու Հայաստանի կառավարութիւնները վրաց կառավարութեան ստորադաս պաշտօնեաները լինէին: Վրացի պատմագիր և յայտնի քաղաքական գործիչ Աւալովը այդ առթիւ գրում է. «Ռամիշվիլիի ստորագրած «հրահրագրի» ոգին մի քիչ... ներքին գործոց նախարարի չըլարեբուկանն էր յիշեցնում»:

Այս զնդհանուր ճակատին» է, որ հայերը չչարեցին: Եւ ոչ ոք չչարեց կողմացիներից: Մենք այս դէպքի վրա երկար կանգ չենք առնի՝ մանրամասնութիւններով հետաքերտողները կարող են գտնել մի ուրիշ տեղ**): Բայց անհրաժեշտ ենք համարում արձանագրել, որ Ռամիշվիլիի գնահատականը անցեալ դէպքերի այնքան ենթակաական է, չափեց համար աւելին, որ, ի հարկէ, այդպիսի մտայնութեամբ ո՛չ մի համերաշխութիւն կամ միութիւն կարելի չէ գլուխ բերել:

Ի՞նչպէր էր Ռամիշվիլիի նկարագրած հովերգական բնոյթը շունչին, դժբախտաբար: Մինչ մի ձեռքով ժողովանիսն ու Ռամիշվիլին իրենց հարեաններին խաղաղութեան ձիթենի էին մատուցանում, միւս ձեռքով թնդապոթներ էին արձակում նոյն այդ հարեանների դէմ: Չորոզները անցեալից ցուտով վէրբերը. Լուրիի, Ախալքալաիի դէպքերի դառն յիշողութիւնները դեռ թարմ են. ջնջւած չէ և հայ-վրացական պատերազմի յիշատակը: Գողումաձէի թնդանօթների արձագանգները դեռ մարած չեն ուղոււղացիների ականջներում: Եթէ հարկաւոր է պատմական դէպքերի վերազնահատութիւն անել, միութեան հիմքեր գտնելու համար, պէտք է ազատագրուել հին եսական ոգուց և կանգնել փաստերի ու ճշմարտութեան գետնի վրա: Եւ այս դէպքում, Ռամիշվիլին համարձակութիւն չէր ունենայ բազմից կրկնելու, թէ իրենք՝ վրացի սոցիալ-դեմոկրատները գիշեր-ցերեկ միայն խաղաղութեան համերաշխութեան մասին էին մտածում, «բիւկ հայկական գլխաւոր կուսակցութիւնը» արգելք էր լինում համերաշխութեան և պատերազմական գաղափարների դր սնուցանում:

Ռամիշվիլիների ու Ռասուլ Ջաղէների մտայնութեամբ կոնֆեդերացիա կարելի չէ հաստատել: Բայց մենք շատ շեղեցիմք: Դառնանք մեր նիւթին:

Կոնֆեդերատիւ պետութեան ստեղծման հիմնական պայմանը ձեռակերպւած, որոշ, փոխադրաձաբար ճանաչած սահմաններով և անկախ պետութիւնների գոյութիւնն է: Զիցերակամ՝ կոնֆեդերացիան ազատ և

անկախ կանտոնների յօժարակամ միութիւն է: Ենթադրուում է, ուրման, որ Աղբրէշեանի հանրապետութեան ծագման հէնց սկզբին, Կողմասեան կողմից ունէին անկախ հանրապետութիւններ, ձեռակերպւած հողային ստարածութիւններով, որոնք, ըստ աղբրէշեանցի գործիչների, պէտք է իրար հետ հաստատէին կոնֆեդերատիւ յարաբերութիւններ: Այլ խօսքով, Աղբրէշեանի, Վրաստանի, Լեռնակաանների և Հայաստանի հանրապետութիւններից պիտի կազմէր կողմասեան Կոնֆեդերատիւ Հանրապետութիւն: Ա՛յս էին ուզում «աղբրէշեանեան քաղաքական մտքի բոլոր հոսանքները»:

Արդ՝ կա՞ր այդպիսի վիճակ: Աղբրէշեանեան գործիչներ և ինքը Ռասուլ Ջաղէն առաջին հերթին՝ խեղապէս ուզո՞ւմ էին, որ այդպիսի վիճակ զոյութիւն ունենար:

Կողմասի միութիւնը, Սէյմի չըլանում, զանդեց, ինչպէս յայտնի է, կողմասեան ժողովուրդների ներքին հակամարտութիւնների և, մեծ մասամբ, Թիւրքական ճնշումի հետևանքով: Թիւրքական սպառնալիք տակ՝ վրացիները, ժողովանիայի զիլաւարութեամբ, նախօրոք գաղտնաբար համաձայնելով Գեղամահայի հետ, լքեցին համակողմասեան դիրքերը, դուրս եկան կողմասեան միութիւնից և ընկան Վիլհելմ Բ-ի ուսմանապատեան գերիւր: Հրապուրած Թիւրքերից՝ աղբրէշեանցիները կողմաս բերին Վէհիւր և Նուրի փաշաների զօրքերը: Թիւրքերի անմիջական բուռնցքի տակ էր, որ սեղի ունեցաւ Կողմասը բաժանուածը. Ռասուլ Ջաղէն շատ լաւ պէտք է յիշէ, թէ ինչպէս կազմեցին Վրաստանն, Աղբրէշեանն ու Հայաստանը, որոնցից ինքը այնպէ՛ս հովերգական ձեռով ուզում էր, իբր թէ՛ կոնֆեդերացիա կազմէ: Եթէ մոռացել է, յիշեցնենք:

1918 թիւ մայիսը: Անձրևոտ երեկոյ: Քարափի «Բէլ Վիւ» պանդոկում, ուր իջած էր Անդրկողմասի հաշտաբար պատգամաւորութիւնը, խորհրդակցութիւն էր տեղի ունենում աղբրէշեանցի և հայ պատերազմների միջև: Աղբրէշեանցիները ներկայ են ինն Պոյսիի, Ուսուրպէզով, Մամէշ Զասան Գալիլանի, ինքը Ռասուլ Ջաղէն, հայերից՝ Յ. Քապուզունին, Ա. Պատիսեանը, Մ. Պապաշեանեանը և ուրիշներ: Պորհրդակցութիւնների, աւելի ճիշտ, բանակցութեանց նիւթը սահմանադժուում է Հայաստանի և Աղբրէշեանի միջև: Աղբրէշեանցի գործիչները պահանջում են Աղբրէշեանի թողնել ամբողջ Գանձակի նահանգը, ասել է՝ Ղապաին էլ, Գիւլիստանն էլ, Ղարաբաղն էլ, Ջանդեղուրն էլ. Երևանի նահանգի Նախիջևանի, Եարուրի մասերը, Երևանի գաւառի մեծ մասը Երևան քաղաքով հանդերձ, Սուրմալուի գաւառը, ամբողջ Կարյո նահանգը... Ի՞նչ էր մնում Հայաստանին: «Ախ մը մոխիր» միայն: «Էջմիածնիւր կը լինի ձեր մայրաքաղաքը», մեծահպտութեամբ զիջում էր հայերին Ուսուրպէզովը...

Սահմանազմման հարցի շուրջ մի զանի ժողովներ տեղի ունեցան: Անգուն գիշերներ մինչև լուսաբաց: Աղբրէշեանցի գործիչները — Ռասուլ Ջաղէն, անշուշտ, չի մոռացել — մտացին անողոր. աւելի ո՛չ մի թիղ հայերին: Եւ համաձայնութիւնը չկայացաւ: Քիչ յետոյ, Վեհիւր փաշան սրով դժեց այն սահմանադիժը, որ պահանջում էին աղբրէշեանցիները՝ ողորմաձաբար հայերին թողնելով Երևանը: Հետագային էլ, մինչև Թիւրքերի պարտութիւնն ու հետանալը, Աղբրէշեանի դե-

** Ս. Վրացեան, «Հայաստանի Հանրապետութիւն», Մաս Բ., գլուխ Գ.

կախարհները ո՛չ մի փոփոխութիւն չմտադրին իրենց մըտայնութեան ու դործնական զարգացրականութեան մէջ: Կազմեց 11,000 քառ. կիրովմբարտոցի ան Հայաստան, որն, աւելի շուտ ժամանակաւոր դադրեցական էր՝ յամենաժամ թիւրքերի ինամակալութեան, որպէսզի, Բազի դրամումից յետոյ, դան վերջնական բնաջնջման ենթարկեն...

Այսպէս էր իրերի վիճակը «Ազդեցչանի հանրապետութեան ծագման հէց սկզբին»: Կար Վրաստան գերմանական թեւարկութեան տակ. կար Ազդեցչան, ուր իշխում էր Նուրի փաշայի «խառնական բանակը». և կար, ինչպէս փորձեղեղեղեղեղ էր ասել, «դատապարտած» Հայաստանը, որի մարտաբազուքից 7 շերտեւոր հեռու դրամած էին թիւրքական թողանութները: Այսպիսի՞ պայմաններում ուզում էին ազդեցչանցի գործչները կոնֆեդերացիա ստեղծել: Ճիշտ է, այդ ժամանակ Բազի-Ֆեդերացիա ստեղծել: Ճիշտ է, այդ ժամանակ Բազի-Ֆեդերացիա ստեղծել էր կոնֆեդերացիայի մասին, բայց Ռասուլ Չաղէն շատ լաւ գիտէ, թէ ինչ կոնֆեդերացիայի մասին էր խօսքը — թիւրք փողովորդների միութիւն Ազդեցչանի անջե Գանուր, բայց ոչ Վրաստանի, Ազդեցչանի ու Հայաստանի կոնֆեդերացիա: Եւ այդ կոնֆեդերացիայի գաղափարասուր ինքը Ռասուլ Չաղէն էր և «Մուսալաթը»:

Այդ մէ՛կ: Անցաւ քիչ ժամանակ, և Նուրի ու Վեհերի աջակցի բանակներն էլ անցան: Կողմասը մաքրեց թիւրք սակեղանները: Բացեւ չոր դարաշրջան: Այս անգամ, իրօք որ, «Մուսալաթը» և Ազդեցչանի վարիչները զբին կոնֆեդերացիայի հարցը: Ծանր օրեր էին, թիւրք օգնող ձեռքը չկար այլևս. հիսիսից Գեներալին էր պալիս. Փարիզից ինչ որ անհանգստացնող լուրեր էին հասնում. «Թիւրքական կոնֆեդերացիան» այլևս ցնորք էր, և ահա «Մուսալաթը» մէջտեղ հանեց Անդրկովկասի կոնֆեդերացիան: Բնականաբար, հայերը զոնացին նման ձեռնարկի, նախ՝ որովհետև չէին հաւատում հարցը զնորդների անկեղծութեան. «Ելմիածին մարտաբազուքի յիշողութիւնը դեռ շատ թարմ էր: Երկրորդ՝ իրենց հերթին, այժմ իրենք էլ ունէին իրենց «կոնֆեդերացիան». ազդեցչանցիների «Ալթայից մինչև ձեռ Գանուր» նշանաբանի պէս հայերն էլ ունէին իրենց «ծովից ծովը»: Եւ, որ գլխաւորն էր, ազդեցչանցիները մի կողմից «կոնֆեդերացիա» էին կրկնում, իսկ միւս կողմից շարունակում էին գաղտնի դաւերը Հայաստանում և Հայաստանի շուրջ:

Ռասուլ Չաղէի յիշողութիւնը թարմացնելու համար առաջ բերենք մի-երկու փաստ:

1919թ. մարտի քսաններին: Երեւան հասաւ Ազդեցչանի հանրապետութեան դիւանադիւանական ներկայացուցիչ իման թէ՛քինսկին: Մի քանի օր յետոյ, մարտ 22ին, նա այցելեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին, և ահա թէ նա յայտ աւելի ինչ էր հեռուարում իր կառավարութեան: Ձեռ (կաթողիկոսը) շեշտեց հայերի և մասնատականների բարեկամութեան անհրաժեշտութիւնը և խոստացաւ կոչ ուղղել հայ փողովորդին՝ հաշտ ապրել մասնատականների հետ: Կաթողիկոսը իմ պահեց ճաշի և մինչև վերջին րոպէն չհետապնդեց ինձանից: Նախ չլինելու պատճառով իմիածին վանքն ու կաթողիկոսարանը զրկւած են կրկնորակաւ լոյսից: Ես խոստացայ մեքենաների համար նախ տալ, ուստի խնդրում եմ շուտով ցիտտերներով նախ ուղարկել կաթողիկոսը:

սի համար»: Ու յետոյ, ծածկագրով շարունակում է. «Ուղարկեցէ՛ք միայն 200 փութ նախ՝ աւելին կարող է կառավարութիւնը օգտագործել»:

Ապրիլ 10ին թէ՛քինսկին հեռագրում է Բազու. «Նուրիի համաձայն անգլիացիք Կարաբ յանձնել են հայերին... Կարծում եմ՝ անհրաժեշտ է բողոքել Հընդկաստանի, Ալեքսիստանի, Մալասան Կղզիների և Կովկասի ողջ մասնեղականութեան»:

Մայիս 5ին վարչապետ Ռան Ռոյսկին հեռագրում է թէ՛քինսկուն. «Անյապաղ կապ հաստատեցէ՛ք Կարսի շուրջի (կառավարութեան) հետ: Յոյց տւէ՛ք նրան ամէն տեսակ արկղայութիւն (անշուշտ, ընդդէմ հայերի): Իմացէ՛ք, թէ ի՛նչ կարեք ունի. հեռագրեցէ՛ք մեզ, որ անհրաժեշտ միջոցներ ձեռք աւնենք»:

Մայիս 10ի հեռագրով թէ՛քինսկին խորհուրդ է տալիս իր կառավարութեան. «Բոլշևիկները կողմից Բազուի վտանգ սպառնալով պատրուակ բռնեցէ՛ք և խնդրեցէ՛ք անգլիացիներին, որ Կարսի թողանութները փոխադրեն Բազու»:

Յունիս 4ին հեռագրում է. «Անհրաժեշտ է Հայաստանի համար վտանգ ստեղծել Ծարուր-Նախիջևանում: Գործը կազմակերպելու համար անյապաղ պէտք է դրամ բաց թողնէ՛ք: Իմ ձեռք առած միջոցները շնորհիւ Ծարուրը, Նախիջևանը և Օրբուրաթը արդէն միացել են մէկ ազգային խորհրդի մէջ, որը մշտական յարաբերութեան մէջ է ինձ հետ»:

Յունիս 8ին արտաքին գործոց նախարար Զափարովը պատասխանում է. «Հաւանութիւն եմ տալիս Ծարուր-Նախիջևանի հետ կապ հաստատելու նպատակով ձեր ձեռնարկած միջոցներին. համաձայն եմ դրամ տալ զինուորական կազմակերպութեան համար: Հաղորդեցէ՛ք ինչպէ՛ս և ո՞ւմ բաց թողնել դրամը»:

Յունիս 11ին հեռագրում է Բազու. «Ո՛չ մի ֆունտ նախ ու մաղութ բաց չթողնել Հայաստանին»:

Յունիս 22ին թէ՛քինսկին հեռագրում է. «Թուում է, որ այժմ Ազդեցչանը Հայաստանից բացի ուրիշ թշնամի չունի, ուստի անհրաժեշտ է Հայաստանի վրա առանձին ուշադրութիւն դարձնել: Պէտք է քերթ Սմիլոյին քաշել մեր կողմը»:

Ու կրկին ու կրկին պահանջում է զօրք ուղարկել Հայաստանի սահմանները. «Մեր զօրքերի երևալը սահմաններ վրա խուճապ կը ձգէ հայերի մէջ, կուժեղացնէ դասալքութիւնը և կը բարձրացնէ մասնատականների ոգին...»:

Եւ Բազուից ուղարկւած դրամներով ու գործակալներով կազմակերպւում ու զինւում է Հայաստանի մասնատականութիւնը, և երբ 1919թ. ամառը անգլիացիները քաշեցին, Հայաստանի բոլոր թրքաբնակ մասերում՝ Օլթիից մինչև Օրբուրաթ՝ բռնկացեց ընդհանուր ապստամբութիւն: Եւ մինչև 1920թ. ամառը Հայաստանի մի շարք թրքաբնակ շրջանները մնացին ապրտամբ վիճակում: Դաբաբարի ընդհանուր նահանգապետ դըր. Սուլթանովի ամբողջ և թիւրք շառուղիները հասնում էին մինչև Զաղթիբասար, Երևանից 8-10 վերստ տարածութեան վրա: Մի ամբողջ տարի Զանգիբասարը, Բոյիւք-Վէդին, Սուրբալուի մի մասը, Կոլք, Ծարուր-Նախիջևան և այլն մնացին ապստամբ խռովելով Հայաստանի ներքին անդորրութիւնը և լարելով հայ նորաստեղծ պետութեան տնտեսական ու

գինւորական ուժերը: Ապստամբական այս շարժումը վարուած էր Բագրէի, ազրբէջանեան դրամներով, ազրբէջանցի և թիւրք գործիչներէ ու գինւորականներէ ձեռքով:

Եւ այս դէպքերը տեղի էին ունենում ճիշտ այն ժամանակ, երբ «Մուսաւաթի» համալուծմարը Բագրուս կոնֆեդերացիայի բանաձև էր քաշարկում, երբ թեքիսուկիի գաղտնի հետազոտների պատճէնները գտնուած էին Հայաստանի կառավարութեան ձեռքը, երբ թիւքիսուկիին, Երեւանում մերկացելուց յետոյ, ի վարձաարութիւն իր ծառայութեանց արտաքին գործոց նախարարի օգնական էր նշանակուած:

Նոյնպիսի ընթացք ունեցան դէպքերը և Ղարաբաղում: Երկար ու յուզանալից անցուղարձերից յետոյ, 1919 թիւ ամսուք, ազրբէջանեան ընդհանուր նշանագրապետ թր. Սուլթանովի հրամանով աւերակցին հայկական 6 դիւղեր, կոտորուցին մօտ 600 հայ զինուորացիներ: Եւ երբ նման բռնութիւնների հետևանքով Ղարաբաղի հայերի ազգային համադուծմարը ստիպուած եղաւ ժամանակուոր ու պայմանական կերպով ճանաչել ազրբէջանեան իշխանութիւնը, «Մուսաւաթի» պարագլուխ Ռասուլ Չաղէն թուրքերէն «Ազրբէջան» թերթում (28 օգոստոս) ահա ինչպիսի ցնձապէն յօլուած գրեց, որով ողջուծում էր Ղարաբաղի ու Նախիճևանի դրամումը և յոյս էր յայտնում Ձանգեղուրն էլ շուտով կցուած տեսնել Ազրբէջանին: «Նախիճևանը... գրում էր նա, որ անբաժան մասն է Ազրբէջանի, չնորճի իր հերոս ու անձնէր գաւակներէ հայրենասիրութեան, օգուտեց պաշտամարտելու իրաւունքից՝ միայնալու համար հայրենիքին, որից բաժանուել էր խարւելով: Նախիճևանը իր սահմանից դուրս չպրտեց բռնազրաւող Հայաստանի բանակը:

Գալով Ձանգեղուրին, որ ցաւ է դարձել մեղ համար և մէջուեղը կանգնած է սպառնալով մեր նպատակներին,— կարող ենք յոյս ունենալ, որ նա էլ մօտ ժամանակում կը դուրի անլիշտս դրութեան մէջ և Աստուա դետից և Սամուրի կամուրջից սկսած մինչև Արաքս գետն ու Ջուլֆայի կամուրջը կը բացուի անարգել մի ճամբայ: Այլ նշանակում է, որ այս կերպով Ազրբէջանի հողային պահանջների կարևոր մասը լուծում է ստացելը:

Սրանք միայն նմոյշէ համար բերած փաստեր են: Նման փաստերով չափազանց հարուստ է 1918-20 թուականների Կովկասի պատմութիւնը: Այսպէս էին կոնֆեդերացիա մտցնում «Մուսաւաթ» կուսակցութեան ներկայացուցիչները և ազրբէջանեան քաղաքական մտքը համարեա թողը հոսանքներն ու ակնասուր քաղաքական գործիչները» «Ազրբէջանի հանրապետութեան ծագման հէնց սկզբից»: Իրաւունք չունէի՞ն հայերը չխանգաղաւուելու Ռասուլ Չաղէի փառաբանած «կոնֆեդերացիայ»ի ծրագրով:

Բայց այդ, հայերի համար կար և մի առանձնատուկ հանգամանք, որ Կովկասի միւս ժողովուրդները հաշիւ չէին առնում ու, կարծես, այսօր էլ չեն ուզում հաշիւ առնել—Թիւրքահայաստանի հարցը: Մեր հարևանները, համար Կովկասը վերջանում էր, լաւագոյն դէպքում, 1914թ. սահմանով, իսկ, առհասարակ, նրանք մեկնում էին սահմանային այն փաստից, որ ստեղծել էին թիւրքերը: Հայերը չէին հաշուում այդ

փաստի հետ. նրանց քաղաքական դիտակցութեան մէջ Հայաստանը միայն Մասսի մի կողմը չէր, այլ և միւս կողմը: Մասնաւորապէս ազրբէջանցի գործիչները երբեք չհաշուեցին հայերի այս ձգտումն հետ, և զարմանալի չէ, որ ազրբէջանցիները այս վերաբերումը հայերի կողմից դիտուում էր որպէս թիւրքական թեւադրանք: Այսպիսի հոգեբանական ու փաստական պայմաններում — ի՞նչ կոնֆեդերացիա:

Բայց, ի վերջոյ, կարող են ասել, թէ այդ ամենը անցեալի բաներ են. հին դարմանը քամուն տալու ժամանակը չէ: Անցեալում ո՞վ չի սխալել. աւելի լաւ է՝ մտածենք ապագայի մասին: Անցեալի սխալները թող խրատ լինեն ապագայի համար: Պէտք է ենթադրել, որ հէնց այդ մտահոգութիւններից էլ մեկնում է Ռասուլ Չաղէ՝ նորից ու նորից ջատագովելով կովկասեան կոնֆեդերացիայի պահանջը:

Ինչպէ՞ս է հասկանում նա այդ կոնֆեդերացիան: Կոնֆեդերացիան, նրա կարծիքով, թիւրքուում է «Կովկասեան պարանոցի ընդհանուր քաղաքական և սնտեսական պայմաններով»: Եթէ հնում Կովկասը հարևան երկրների համար փոխադարձ կուր մի թատերաբեմ էր, այդ երկրի համակեցութեան ու ստապալից կեանքի վերջին շրջանը ակներև կերպով ցոյց տեց, որ կովկասեան առանձնը ժողովուրդների անգատ գործելակերպը դժբախտութիւն էր բերում ոչ միայն այդ ժողովուրդի, այլ և Կովկասի բոլոր միւս ժողովուրդների գլխին: Ընդհանուր պատմութիւնը, ընդհանուր տանջանքը, աւելի ճիշտ, ընդհանուր ֆակտագիրը Կովկասի բոլոր ժողովուրդների մէջ էլ առաջ են բերել ընդհանուր, աւելի կամ պակաս մտան հոգեբանութիւն: Այստեղից և՛ կոնֆեդերացիայի անհրաժեշտութիւնը: «Ազրբէջանեան ժողովուրդը, իր ժամանակին ստարկայօրէն ոգևորելով համաթիւրքութեան յեղափոխականացնող գաղափարով՝ ենթակայօրէն յանգեց իր ազգային գոյութեան պաշտպանութեան գազափարին՝ քաջ լքբռնելով, որ Անկախ Կոնֆեդերատիւ Կովկասի բազախական գրութիւնից դուրս իրեն համար փրկութիւն չկայ»:

Իր գաղափարական անկունաքար ընդունելով Ազրբէջանի «առարկայական» և «ենթակայական» պայմանները՝ Ռասուլ Չաղէն, այնուհետև շատ հեշտութեամբ լուծում է Կովկասի կեանքը յուզող բոլոր բարք ու փշալից խնդիրները: Կովկասեան Կոնֆեդերացիան, նրա աչքում, պէտք է ուղղւած լինի Ռուսաստանի դէմ և յենի թիւրքերէի վրա. «Մեր կարծիքը այն է, որ Կովկասեան Ծեղերացիայի նպատակների իրագործումը հետապնդող կազմակերպութիւնները պէտք է բաղկանան ուրս իմպերիալիզմի հակառակորդներից» «Թիւրքիզմը ոչ մի վտանգ չի ներկայացնում Կովկասի համար, ընդհակառակը, իբրև ուրսական իմպերիալիզմի դէմ ուղղւած մի գաղափար, մա իր դաշնակիցն է» «Կովկասեան Կոնֆեդերացիան չի կարող արդէք լինել թիւրքութեան գաղափարին»: Ընդհակառակը, «մեր հարաւային հարևանները, որոնք յաւիտեանս հիւսիսային վտանգի տակ են գտնուում, իրենց ճակատագրի համար հանգիստ կարող են լինել միայն այն ժամանակ, երբ գոյութիւն ունենան ազատ Կոնֆեդերատիւ Կովկասը, որպէս բուֆեր (միջնորմ) պետութիւն»:

Ուրեմն՝ կովկասեան ժողովուրդների կոնֆեդերացիան

ցիա, Կոնֆեդերատի Կովկասը՝ միջնորմ Ռուսաստանի և Թիւրքիոյ միջև, Թիւրքիան՝ բարեկամ ընդդէմ Ռուսաստանի: Ռատուլ Ջաղէի ծրարները ներգաշնակութիւնից դուրկ չէ:

Սակայն, բաւական է անցնել այս ծրարի իրականացման գործնական պայմաններին, որպէսզի հէնց ստալինի քայլից երես առ երես դուրս դանք այն խոչընդոտներին, որոնք մի անգամ արդէն վիժեցրին կովկասեան միութիւնը: Եւ այդ այն պատճառով, որ Ռատուլ Ջաղէն խուսափում է շօշափել բոլոր փշոտ հարցերը և շարունակում է սաւառնել վերացականութեան ոլորտներում:

* * *

Նախ՝ այն հիմնական խնդիրը, որ մէկ անգամ արդէն պատճառ դարձաւ արիւնոտ ընդհարումների կովկասեան ժողովուրդների միջև և առանց որի լուծման, ոչ մի միութիւն հնարուոր չէ երևակայել — սառնամանիկի հարցը: Ինչպէս, ի՞նչ միաւորներից է կազմում Ռատուլ Ջաղէն Կովկասեան Կոնֆեդերացիան: Եթէ «Ատաբա գետին և Սամուրի կամուրջից սկսած մինչև Արքաբ գետն ու Ջուլֆայի կամուրջը» պատկանում է Ազրբէյջանի միւս կողմից՝ եթէ մինչև Արգահան Վերաստանն է տարածելու, իսկ Արփաշայի ու Արքաբի ափերին էլ թիւրքն է նստելու, — այդ ո՞ր Հայաստանն էր, որին Ռատուլ Ջաղէն հրահրում է մտնել կոնֆեդերացիայի մէջ: Եւ այն ո՞ր հայն է, որ այսպիսի երկաթէ օղակի մէջ առնւած, պիտի հաւատայ Ռատուլ Ջաղէների անկեղծութեան և յօժար կամքով իր պարանոցը դնի նրանց «կոնֆեդերացիայի» սուկ:

Կոնֆեդերացիան, ինչպէս ասացինք, անկախ պետութիւնների պատմութիւնն է: Որպէսզի մի ժողովուրդ յօժար կամքով մտնի կոնֆեդերատի միութեան մէջ, անհրաժեշտ է, ամենից առաջ, որ այդ ժողովուրդը լինի անկախ, ունենայ ձևակերպւած պետական սահմաններ: Արդ՝ որո՞նք են Կովկասեան Կոնֆեդերացիայի մաս կազմելիք պետութիւնների սահմանները: Այս հարցից կարելի չէ խուսափել. առանց այս հարցին որոշ պատասխան տալու բոլոր հրահրները անկեղծութիւնից դուրկ, անարժէք խօսքեր են:

Ռատուլ Ջաղէն այս հարցին պատասխան չի տալիս: Ինչո՞ւ: Արդեօք շարունակում է երազել Սամուրի ու Ջուլֆայի կամուրջները, թէ ուրի՞շ պատճառ ունի — չլիտենք: Իայց դիտենք շատ լաւ, որ քանի Ռատուլ Ջաղէների աչքը մնայ յառած Ջուլֆայի կամուրջին, ո՞չ մի հասկացողութիւն, ո՞չ մի միութիւն չի կարող լինել: Այս մէկը պարզ է:

Կոնֆեդերացիայի պայմաններից մէկն է կովկասեան ներքին սահմանների վերջնական զծումը: Երէկւայ փորձն էլ, այսօրայ փորձնութիւնն էլ հաստատում են այդ: Իայց ինչպէ՞ս, ի՞նչ սկզբունքներով դեկլարուել սահմանների զծման ժամանակ: Այնպէս, ինչպէս երէ՞կ, երբ տիրող բուն ոյժն էր. «սահման քաջաց՝ դէնն իւրեանց, որքան հատանէ, այնքան ունի», թէ՛ մի ուրիշ եղանակով:

Երէկւայ փորձի արդիւնքը յայտնի է: Ծարունակել կառչած մնալ այդ տխուր փորձի սկզբունքներին՝ նշանակում է կեանքից ոչինչ չստփոթել, նշանակում է նոր զինին լեցնել հին տիկերի մէջ: Տիկերը կը պատ-

ուին անպտոճառ: Երէկւայ այնչող փորձը անհրաժեշտօրէն պէտք է հարկադրել որոնել նոր միջոցներ: Եւ այդ միջոցը գտնում է Ռատուլ Ջաղէի գաղափարակից Նոյ ժողովրդիկան: Նա ցոյց է տալիս այն հիմնական սկզբունքները, որոնցով պէտք է առաջնորդել կովկասեան սահմանագծումը կատարելիս:

Այսպէս, 1928թ. փետր. 9ին, Ա.Կերեսկիի «Դնի» թերթում, պատասխանելով ընկ. Ա. Ջամայիսիի ջըն՝ նաղատութեան՝ նա գրում է. «Ազգերի ինքնորոշում՝ նշանակում է, որ մի հողամասի վրա մեծամասնութիւն կազմող իւրաքանչիւր ազգութիւն իրաւունք ունի ինքնուրոյն պետութիւն կազմելու: Իսկ սրա սահմաններում գտնուող փոքրամասնութիւնները, եթէ չեն կամենում, կամ աշխարհադրական պայմանների հետեանքով չեն կարող միանալ իրենց ազգային պետութեան, պէտք է վայելեն ազգային-մշակութային տեսակէտից, նոյն իրաւունքները, ինչ որ այդ բնագաւառում ունի ազգային մեծամասնութիւնը»:

Մի ուրիշ տեղ*) և նոյն խնդրի առթիւ, ժողովուրդների միութեան է կանչում «Սաղաղութեան և Ազատութեան Միջազգային Դաշնակցութեան» 1873 թ.ի յայտարարութիւնը, որից իւրացնում է հետևեալ կտորը.

«Ժողովուրդները հաւասար են միմիանց հետ՝ չընայաց հողի տարածութեան կամ ազգաբնակչութեան խտութեան: Ո՛չ մի անհայտ, ո՛չ մի կառավարութիւն, ո՛չ մի ժողովուրդ չի կարող ոչ օրինական կերպով, ո՛չ էլ որեւէ առիթով տիրել ուրիշ ժողովուրդների՝ բունազգաւան, նաճման կամ որեւէ այլ ձևով»:

Այս սկզբունքով, կովկասեան ներքին վէճերը շատ հնչաւորեամբ կը լուծին: Ախալքալաքի հայ դիւղացիները չեթէ չեն կամենում՝ Վրաստանի սահմաններում մնալ, կը միացին Հայաստանին: Հայկական Ղարաբաղը «եթէ չի կամենում» Ազրբէյջանի մաս կազմել, նոյնպէս կը միացնի Հայաստանին: Նախիլեանն ու Ծարուրը չեթէ աշխարհադրական պայմանների հետեանքով չեն կարող միանալ՝ Ազրբէյջանին, կը մտնեն Հայաստանի սահմանների մէջ: Նոյն սկզբունքով կը լուծուեն և՛ Կովկասի միւս սահմանավէճերը, եթէ միայն հաւանականութիւն կայ, որ Ժողովուրդի խօսքը երբ և իցէ կը վերածնի գործի: Անցնելի փորձը այդպիսի հաւանականութեան տեղիք չի տալիս, դժբախտաբար: Ինչքա՞ն արեան և ուղտների առաջն առնւած կը լինէր, եթէ ժողովուրդները երէ՛կ, երբ իշխանութեան զլուխ էին, զորքանակներում հետեւէին իրենց յայտ պաշտպանած սկզբունքներին...

Սակայն, Կոնֆեդերացիայի իրականացման համար միայն ներքին սահմանների զծումը հերիք չէ. պէտք է պարզ լինեն և ստեղծուող համադաշնակցային պետութեան արտաքին սահմանները: Վրացու կամ Ազրբէյջանցու համար, անշուշտ, նոյնն է, թէ ո՞րը կը լինի Կովկասի, օրինակ, հնչիսի սահմանը՝ Վլադիկաւկազը, Հանքային Ջրերը, Արմաւիրը, թէ Ռոստովը: Ըսկ լեռնակալներին վերաբերուող խնդիր չէ այս, որպէսզի կարելի լինի բաւականաւ միայն նրանց զծած

*) Н. Жордания, «Наши разногласия», 1928. Паржж, стр. 11.

քարտէսներով: Ընդհանուր Կովկասին վերաբերող հարց է:

Նոյնը պէտք է ասել և Հարաւային սահմանների մասին: Ե՞րբն է լինելու, ըստ Ռատուլ Չաղէի, սահմանագիծը Կովկասի և Թիւրքիայի միջև: ասորւայ Արաքան ու Արփաշա՛յը, 1913ի՞ գիծը, թէ՛ Սևւրի դաշնադրի սահմանը: Եթէ Ռատուլ Չաղէն անկեղծօրէն մտահոգւած է Կովկասի ճակատագրով, այս հարցերին լուծուած միայն Հայերին չպէտք է թողնէ՛: և եթէ ուրում է, որ Հայերն էլ յարեն իր դադափարին, պէտք է պարզ ու որոշ ասէ, թէ Կոնֆեդերատիւ Կովկասի Հարաւային սահմանները մինչև Ե՞րբ են տարածելու: ասլ կը լինի դրութիւնը, եթէ Ռատուլ Չաղէն դաւանում է Status-quo ի քաղաքականութիւնը, բոլորովին ասլ, եթէ նա, Հայերի հետ միասին, Թիւրքահայ հողերի սահմանն էլ ոտք է կոխում:

Արտաքին սահմանների հետ անխզիլ կապերով կապւած է և, այսպէս կըշուած, օրինատացիայի Հարցը: Ռատուլ Չաղէի համար կայ մէկ ճանապարհ՝ քիւլքի հետ առաջի դէմ: Յենւած Թիւրքիայի՝ բարեկամութեան վրա՛ պայքարել առևտրական իմպերիալիզմի դէմ: «Կովկասեան Ծեղերացիայի իրադրծումը հետապնդող կազմակերպութիւնները պէտք է բողկանան առև իմպերիալիզմի հակառակորդներին»:

Շատ բարի, բայց եթէ Թիւրքը Ռատուլ Չաղէի պէս չի մտածում, ի՞նչպէս պարել: Հին պատմութիւններ չբերենք: մտնանք մի պահ, որ 1918ին Կովկասի միութիւնը խորտակեց Թիւրքի ձեռքով: Ընդունենք մի բողկ, Ռատուլ Չաղէի հետ միասին, որ այսօրայ Թիւրքը երէկայ Թիւրքը չէ: Բայց այսօրայ Թիւրքն էր, որ ձեռք-ձեռք ճուտ իմպերիալիզմի՛ հետ, 1920-21ին, կործանեց ու «առև իմպերիալիզմին» յանձնեց կովկասեան հանրապետութիւնները: այսօրայ Թիւրքն է ահա, որ զենքը ձեռքին օգնում է «առև իմպերիալիստներին», որ Կովկասը անկախ չկառնայ: Ռ՛ւմ հաւատանք՝ այս փաստին, թէ Ռատուլ Չաղէին, որ պընդում է, թէ՛ «մեր Հարաւային Հարեանները, որոնք յաւիտեան հիւսիսային վտանգի տակ են գտնուած, իրենց ճակատագրի համար հանդիստ կարող են լինել միայն այն ժամանակ, երբ դոյութիւն ունենայ ազատ Կոնֆեդերատիւ Կովկասը, որպէս բուֆեր պետութիւն»: Տարը տարուց ասելի է «մեր Հարաւային Հարեանները» դաշնակից են «հիւսիսային վտանգին», կրակով ու արծիճով բնաջնջեցին Հայաստանը մեծ մասը, երկաթէ՛ բռունցքով քանդեցին Կովկասը և շարունակում են թշնամանքը Կովկասի դէմ, իսկ Ռատուլ Չաղէները այդ Թիւրքի վրա են հիմնուած իրենց քաղաքականութիւնը, օգուտին դղակներ են կատուցանում, ինչ որ անիմանալի հաշիւներ կապում այդ Թիւրքի հետ — որպէս լուրջ է նման մտայնութիւնը:

Բայց, դուցէ՛ «այսօրայ Թիւրքը» ասելով բուլղերիներին դաշնակից Թիւրքերը չպէ՛տք է հասկանալ: դուցէ՛, Ռատուլ Չաղէն ուրի՞շ Թիւրքեր ի նկատի ունի: Ռ՛ւջ, նրա երկակտու հէնց՝ հանձնարող պարագլուխ՝ Մուսթաֆա Քեմալի Ընդր Թիւրքիան է: նա իր ամբողջ յոյսը կապում է այս Թիւրքիայի հետ: Ու մտում է բոլորովին անըմբռնելի ու անորամաբանական, թէ ինչպէ՛ս հնարուոր է, «առևտրական իմպերիալիզմի» դաշնակից ու գործակից Թիւրքիայի վրա յենելով՝ պայ-

քարի դուրս գալ նոյն այդ «առևտրական իմպերիալիզմի» դէմ: Վերջին 10-12 տարւայ պատմութիւնը քնաւ չի խոսում Ռատուլ Չաղէի տրամաբանութեան օգուտին: Ընդհակառակը, «առևտրական իմպերիալիզմը», ինչպէս ասացինք, Թիւրքերի օգնութեամբ է գրաււած պահում Կովկասը: Եւ ո՛չ մի նշան չկայ, Ռատուլ Չաղէն ո՛չ մի փաստ չի տալիս հաւատարմու համար, որ Թիւրքիայի որդեգրած քաղաքականութեան մէջ որեւէ միջոցառութիւն կարող է լինել ի նպաստ այսպիսի լաւատեսութեան: նման խախուտ աւաղի վրա կարելի՞ է հիմնել լուրջ քաղաքականութիւն:

Նոյնքան մակերեսին է ու ոչնչով չհիմնադրւած և Ռատուլ Չաղէի հակաառևտրական քաղաքականութիւնը: Այստեղ էլ, ինչպէս Թիւրքական խնդրում, նա դեկալարում է բացառապէս զգացական դրդիչներով և ոչ կենսեցի աւարկայալան տեսանկերով: Առաջը փաստերով հիմնադրելու՝ նա պտազամում է, թէ՛ «Կովկասեան Կոնֆեդերացիայի նպատակների իրագործումը հետապնդող կազմակերպութիւնները պէտք է բողկանան առև իմպերիալիզմի հակառակորդներին»: Շատ բարի, բայց րնրեք պէտք է բողկանան և «Թիւրք իմպերիալիզմի» հակառակորդները: Չէ՛ որ միայն «առև իմպերիալիզմը» չէ Կովկասին տիրողը, «Թիւրք իմպերիալիզմն» էլ է նստած Արփաշայի ափին: Եթէ Ռատուլ Չաղէի միտքը գրապեցնողը Կովկասն է և ոչ միայն Թիւրքութիւնը, նա չպէտք է խորտակի զին թշնամիներ ի միջև: Թշնամին թշնամի է՝ առև է նա թէ Թիւրք: Կովկասցու տեսակէտով տարբերութիւն չպիտի լինի Կովկասի հիւսիսային մասը գրաւող կամ Հարաւային մասը յափշտակող թշնամիների միջև: Եթէ առևտրական կամ իմքը ցաւեցնում է ինտենսիւն կամ ագրէ՛կանցու մարմինը, Թիւրքական եաթաղանը կարում է հայի գրուելը: Լեռնականն էլ, Ագրբէջանցին էլ, Հայն էլ, ըստ Ռատուլ Չաղէի, կովկասցիներ են, ուրեմն՝ ինչպէ՛ս կարելի է ասել, թէ՛ առևը մեզ թշնամի է, իսկ Թիւրքը՝ բարեկամ: Բազի նախկին աշք ունեցող սուրը թշնամի, Հայաստանի երեք քառորդը բռնադրաւող Թիւրքը՝ բարեկամ — այսպիսի մտածելակերպով ո՛չ մի կոնֆիդերացիա չի ստեղծւի:

Ռատուլ Չաղէները բաց չաղով պէտք է նային դրութեան: կան կովկասեան ժողովուրդներ, կայ կովկասեան միութիւն ստեղծելու անհրաժեշտութիւն և կան թշնամիներ, որոնք գործում են ընդդէմ կովկասեան ժողովուրդների և Կովկասի միութեան: Այդ թշնամիներն են այսօր՝ բուլղերիները հիւսիսին, քեմալականները Հարաւին — «առևն» ու «Թիւրքը»: Երկուսն էլ հակառակորդ են Կովկասի անկախութեան, հետեաբար պատմութեան ձգտող Կովկասը Երկու դէմ էլ պիտի պայքարի: Երբորը ճանապարհ չկայ, քանի դրութիւնը չի փոխուած: Բայց Ռատուլ Չաղէն ուզում է երկու թշնամիներ ի մէջ նախընտրութիւն կատարել: Թիւրքը բարեկամ է կամ պակաս մնասակար: առևն է միակ և բացարձակ թշնամին: Եւ շարաշար սխալում է, որովհետեւ եթէ Թիւրքը ագրէկանցու աշքին բարեկամ է կամ պակաս թշնամի, հայու աչքին՝ մահացու թշնամի է: Եթէ Ռատուլ Չաղէին հետաքրքրողը լինէր ողջ Կովկասը և ոչ սոսկ Ագրբէջանի ետական շահը, նա հաշի կատնէր և հայի տեսակետն ու շահը: նա այդ չի տեսնում և դրանով հէնց կրկնում է հին պատմութիւնը

Թշնամիների մէջ էլ տարբերութիւն պէտք է զննել. «Ռուսական իմպերիալիզմը» հարիւրամեայ տիրապետութեան ընթացքին Կովկասը հասցրեց զայդքալիքութեան եւրոպական աստիճանին: Եւ այն ժամանակամիջոցին «Թիւրքական իմպերիալիզմը» անասարտի վերածեց Անատոլիի մեծ մասը: Եթէ Ռատուլ Չաղէն «Թիւրքիզիմ» գգազմունքից դրուած՝ Թշնամիներից նախադասում է շարդարար Թիւրքին, չպիտի գարմանայ, որ հայն ու վրացին էլ գերադասութիւն տան ռուսին: Եւ այս դէպքում՝ ո՞րը կը մնայ Կովկասի միութիւնը:

Կովկասեան միութեան ջատագովոյների մեծ մասս սխալը Հէնց այտոեղ է. նրանցից ամէն մէկը, ծրագիրներ կազմելիս, մեկնում է քաջառապէս սեփական գանգալատան շահից: Եւ այն ձեւով վարում է և Ռատուլ Չաղէն. «Կովկասեան Կոնֆեդերացիան չի կարող արգելք լինել Թիւրքութեան գաղափարին», պնդում է նա: Այդ մենք գիտենք, բայց «Թիւրքութեան գաղափարն» է արգելք լինում Կովկասեան Կոնֆեդերացիային: Այս է դիտար որ դժարութիւնը: «Թիւրքութեան գաղափարը», որ Արդրէլանում դեգերում է «Սամուրի ու Ջուլֆայի կամուրջների» միջեւ, իսկ Թիւրքիայում՝ տարածում է աւելի հեռուները, «Ալթայից մինչեւ Դանուբ» և իր հետաւոր հաշիւներից դրուած, ահա 10 տարի է, եղբայրացած «Ռուսական իմպերիալիզմ» հետ՝ անհնար է դարձնում Կովկասեան ժողովուրդների անկախ գոյութիւնն ու Կովկասեան Կոնֆեդերացիան: Այս խնդիրը թողած՝ Ռատուլ Չաղէն մեզ ինչ որ հեքիաթներ է պատմում. Հէքեաթներով քաղաքական գործ կարելի չէ անել:

Մենք շօշափեցինք Կովկասեան Համակեցութեան վերաբերող հրատապ հարցերի մի մասը — այնքան, որքան նրանք ջննութեան առարկայ են դարձել Ռատուլ Չաղէի գրքոյի մէջ: Կովկասեան կնճիւր աւելի բարդ

է և ուրիշ կարեւոր հարցեր էլ է առաջադրում, բայց մեր նպատակը բոլոր հարցերի սպասումը չէ, ոչ էլ Կովկասեան ներդաշնակ քաղաքականութեան մշակումը: Ուրիշ առիթով, գուցէ, այս հարցին էլ անդրադառնանք: Այսօր բաւականանք միայն Ռատուլ Չաղէի յարուցած խնդիրներով: Մեր ասածներից կտրելի է հանել հետեւեալ, թւում է թէ, անլիճելի եղբայրացութիւնները Կովկասեան Կոնֆեդերացիայի գաղափարը ջատագովոյների համար.

1) Կովկասեան ժողովուրդների խաղաղ համակեցութիւնը անհրաժեշտութիւն է թէ իրենց՝ այդ ժողովուրդների աղաւ և ինքնուրոյն գոյութեան գարգացման համար և թէ համար Կովկասի միութեան ապահովութեան տեսակէտից:

2) Կովկասի միութեան իրականացումը հնարաւոր չէ հին միջոցներով ու հին մտայնութեամբ, այլ միայն բոլոր վիճելի խնդիրները լուծելով և հին ստաբիլիտէտ մեթոդներից ու ներհակ գործելակերպից հրաժարելով: Կովկասի միութեան դրուական կարող է լինել միայն նրա բաղկացուցիչ մասերի շահերի հաւասարութեան գիտակցութիւնն ու ապահովութիւնը:

3) Դրա համար, ամենից առաջ, հարկաւոր է վերացնել ներքին սահմանների վէճը՝ ղեկավարելով ագգերի ինքնորոշման սկզբունքով, որոշել արտաքին սահմանները՝ պարզելով բոլոր հանրապետութիւնների հողային տարածութիւնը, ինչպէս և բովանդակ Կովկասի ծաւալն ու բովանդակութիւնը:

4) Կովկասի Թշնամիների միջեւ տարբերութիւն չընել: Ինչպէս մինչեւ այժմ, այսօր էլ Թիւրքիան Կովկասին ամենէն զգալի վնաս հասցնող ոյժն է: Հետեւաբար, անկախութեան համար պայքարող Կովկացիները ոչ միայն չեն կարող յենել այդ Թշնամի ոյժի վրա, այլ և պարտաւոր են մէկ ճակատ կազմել նրա դէմ, մինչեւ որ նա ճանաչէ Կովկասեան հանրապետութիւնների գոյութեան իրաւունքը և ազատէ Թիւրքահայկական հողերը:

ՍԻԳՄԱ

Ա Ն Գ Լ Ի Ա Կ Ա Ն Տ Ա Ք Ն Ա Պ Ը

Գերաբարկաց յետոյ Անգլիան: Նոր էր վերջացել գերմանական մարիի տաքնապը, երբ արտակարգ սրութեամբ հրատարակ եկաւ անգլիական ոսկիի հիւանդութիւնը և, իբրև անմիջական հետեւանք, աշխատաւորական կառավարութեան անկումն ու «ազգային կառավարութեան» կազմութիւնը Մակդոնալդի նախագահութեան տակ, և Աշխատաւորական Կուսակցութեան ծոցում առաջ եկած անհամաձայնութիւններն ու պառակտման վտանգը:

Բնականաբար, բուրժուական մամուլը բոլոր երկրներում ցնծութեան մէջ է: Եւ ինչպէս շուրախանալ՝ երկրորդ անգամ է՝ անյաշտութեամբ է վերջանում «ընկերավարական փորձը» Անգլիայում. ասել է՝ ընկեր-

վարութիւնն, առհասարակ, դատապարտած է անյաշտութեան: Երկու անգամ է աշխատաւորական կառավարութիւնը տեղի է տալիս կեանքի առաջադրած բարդ խնդիրները առջեւ. նշանակում է թէ ընկերավարութիւնը, առհասարակ, ընդունակ չէ լուծելու կեանքի կրճատ հարցերը: Աւելին. աշխատաւորական կառավարութեան անկումը ապացոյց է, առհասարակ, ընկերավարութեան սնանկութեան: Երկու փորձ — մէկը Ռուսաստանում, միւրը Անգլիայում — բուրժուազիայի աչքին միեւնոյն արդիւնքի են յանգում. այնտեղ սնանկ ուղարկ եկաւ յեղափոխական ընկերավարութիւնը, այտեղ՝ խաղաղ, օրինական, խորհրդարանական ընկերավարութիւնը: Ի՞նչ աւելի ուրախալի բան:

Մակայն, բուրժուազիայի ցնծութիւնը զեռ շատ վաղաժամ է: Եթէ ի նկատի ունենանք Աշխատաւորական կառավարութեան ծաղման և գոյութեան պատճառները, Հեշուտեթեամբ կը համոզուենք, որ նա բարի իսկական արեւմտի ընկերավարական իշխանութիւն չէր, ու չէր կարող լինել և, հետեւաբար, նրա յաջողութիւնները կամ ձախողութիւնները բնաւ չեն բնորոշում ընկերավարութեան վերելքը կամ անկումը: Բաւական է յիշել, թէ կուզ, կուսակցական ուժերի դատաւորումը խորհրդարանում՝ տեսնելու համար, թէ որքան անհիմն է հակաուսկորդ տարրերի հրճանքը:

Այսպէս, Աշխատաւորական կառավարութեան անհիման նախորեակին անզլիական խորհրդարանում կար 280 աշխատաւորական պատգամաւոր, 261 պահպանողական, յիսուն հինգ ազատական և տասնութ անկախ: Ասել է երկու հարիւր ութսուն ընկերավարականների յիմաց կանգնած էին 334 բուրժուաներ: Աշխատաւորական կառավարութեան գործունէութիւնը ամբողջապէս կախած էր 55 ազատականների բարեհաճ վերաբերմունքից: Մակտոնալըն իր բոլոր օրէնսդրական ծրարիները յարմարեցնում էր ազատականների տեսակէտներին: ո՛չ մի գուռ ընկերավարական օրէնք նա չանցկացրեց ու չէր էլ կարող անցկացնել: Ազատականները, իբրև բուրժուական կուսակցութիւն, բնականաբար, չէին բէտարիք որևէ ծրագրի, որ հակապէս դրամատորական դրութեան: Այն վայրկեանին, երբ աշխատաւորականները փորձեցին դանակը կոչնել դրամատորութեան մարմին, նրանք մնացին մենակ, փոքրամասնութեան մէջ:

Այսպիսով, Աշխատաւորական կառավարութեան անկումը ընկերավարութեան անկում չէ բնաւ, այլ սրնանութիւն է այն գործելակերպի, որին դատապարտւած էր հետեւելու անզլիական ընկերավարականների աւանդապաշտ միտքը: Այստեղ հակաուսկորդները իրաւայի են: Մակտոնալդի գործելակերպը իբրց որ սնանկ դուրս եկաւ: Մի աւելորդ անգամ հաստատուեց այն ճշմարտութիւնը, որ, իբրև խորհրդարանական փոքրամասնութիւն, ընկերավարական կուսակցութիւնը չի կարող երկրի իշխանութիւնը մենակ ձեռք առնել: նա անխուսափելիորէն կընկնի մեծամասնութիւն կազմող բուրժուական կուսակցութիւնների միացեալ դրոհի տակ: Բոլորովին այլ է փոքրամասնութիւն կազմող բուրժուական կուսակցութեան իշխանութեան անցնելը: նա միշտ կարող է վայելել ուրիշ բուրժուական կուսակցութիւնների աջակցութիւնը: Ընկերավարականները ուրիշ կուսակցութիւններից կարող են միայն պայմանական օչնութիւն ստանալ: այն չափով, ինչ չափով որ չեն խախտում դրամատորական հասարակակարգի հիմքերը, ընկերավարական և բուրժուական կուսակցութիւնների միջև կայ հիմնական տարբերութիւն: նրանք ձգտում են իրականացնել ու ամբարպնդել ըստ էութեան միմիանց տարբեր գրութիւններ, որոնք չեն կարող ամփոփելը քաղաքական ու տնտեսական միեւնոյն ծրագրի մէջ: Այլ պատճառով, բացի արտակարգ պայմաններից, երբ երկրի համար անհրաժեշտ է կօլլիսիոն իշխանութեան գոյութիւնը, ընկերավարական կուսակցութիւնը կառավարական ղեկը յաջողութեամբ ձեռք կարող է առնել միայն այն ժամանակ, երբ խորհրդարանում ունի ձայն

ների մեծ մասը, այսինքն՝ երբ երկրի ժողովրդի մեծամասնութիւնը իր հետ է:

Այսպիսով, ուրեմն, անզլիական տաղանալի այն մասը, որ վերաբերում է Աշխատաւորական կուսակցութեան, արդեւնք է միայն այն սխալ գործելակերպի, որին հարկադրւած էր հետեւել Մակտոնալդը իր ընկերներով: Այլ գործելակերպը քննադատուում ու դատապարտուում է ոչ միայն ընկերավարութեան հակաուսկորդների, այլ և ընկերավարականների կողմից: Այս կամ այն գործելակերպը կամ այս կամ այն կուսակցութեան գործունէութիւնը կարող է սխալ դուրս գալ, բայց այլ դեռ չի նշանակում ընկերավարութեան անանկութիւն: Ընդհակառակը, «անզլիական փորձը» մի նոր դաս կը լինի պայթուող ընկերավարութեան համար:

Այսուհանդերձ, Աշխատաւորական կառավարութեան երկամեայ գործունէութիւնը չի կարող անցնել աննշմար Անզլիայի ներքին՝ ազգային, բայց մանաւանդ, արտաքին՝ միջազգային քաղաքականութեան տեսակէտից: Պահելով հանդերձ երկրի տնտեսական կուսուցածքը անփոփոխ՝ նա ջանաց նախ և առաջ բարեկալ Աշխատանքի և Աշխատաւորութեան վիճակը, մեղմացնել գործազրկութիւնը և, առհասարակ, ժողովրդական տնտեսութիւնը դուրս հանել այն փակուղիից, որի մէջ զտնուում է պատերազմից ի վեր: Արտաքին քաղաքականութեան բնագաւառում նա յամառօրէն հետամուտ եղաւ դիմաթափան, խաղաղութեան և միջազգային համերաշխութեան ամբարշնդման աշխատանքներին: Եւ բարեացակամութեան ու եռանդի պակասը չէր, ի հարկէ, պատճառ, որ ծրագրւած մէլոցներից շատերը մնացին թերի. ուսանք էլ չուէին ակնկալւած պտուղները:

Մեզ համար մասնաւորապէս կարևոր էր Աշխատաւորական կառավարութեան բռնած դիրքը խորհրդային իշխանութեան վերաբերմամբ: Հէնց առաջին օրից վերականգնելով խցած յարաբերութիւնները և առևտրական լայն վարիեր բանալով Մոսկուային՝ Մակտոնալդը յոյս ունէր դէժ մասամբ թեթևացնել գործազրկութեան բնոր: Փորձը ցոյց տուց հակառակը: ո՛չ գործազրկութիւնը մեղմացաւ, ո՛չ էլ բողբոկները հակաբարեախական քաղաքականութիւնը փոխեց: Հնդկաստանում և զաղութիւններում ծագած դժարութիւնները մեծ չափով սնուում են Մոսկուայից:

Ընդհակառակը, խորհրդային իշխանութեան հանդէպ կրակորական, տարտամ, գործնական երբեմն նոյն իսկ բարեհաճ դիրք բռնելով՝ Մակտոնալդի քաղաքականութիւնը նպատակ էր Ստալինի բուխարտութեան ուժեղացման և հետեւաբար, բողբոկի քայքայի զերի սաստկացման թէ՛ դուրսը՝ արտասահմանում և թէ՛ երկրի ներսը:

Այսպէս թէ այնպէս, Անզլիայի Աշխատաւորական կառավարութեան անկումը պէտք է դիտել սոսկ որպէս մի հանգրւան, մի ցաւաղին արտայայտութիւն ընկերավարութեան յառաջնթացութեան ուղիղ լուրջ զրգ, բայց ամենևին ոչ որպէս ընկերավարութեան տագնապ: Տագնապ է անզլիական ազգային գարջացման տեսակէտից: Անզլիական դէպքերը, իրենց ամբողջութեան մէջ, արտայայտութիւն են և ուր ուրիշ խորհրդ երևութի՝ դրամատորական կարգի՝ ճշմանամի՝ — մի խնդիր, որ արժանի է առանձին քննութեան: Ս. ՄԱՍ.

ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԹԻՆԵՐՈՎ

Ընկերվարական Աշխատությունների Ինտերնասիոնալի Համագործակցության Թիւրքի Ինտերնասիոնալին յարած Իւրաքանչիւր կուսակցութիւն տեղեկագիր է ներկայացնում Գործադիր Կոմիտէին իր վիճակի և, նախկին Համադաշնութեան ի վեր տեղի ունեցած, գործունեութեան մասին:

Վիեննայի Համագործակցության Թիւրքի և ներկայացած են այդպիսի տեղեկագրեր, որոնք, ի մէջ այլոց, մի շարք թւական տեսակներ են պարունակում ընկերվարական շարժման մասին:

Ըստ այս վերջին տեղեկագրերի՝ Ը. Ա. Ինտերնասիոնալի մէջ միացած են 45 կուսակցութիւններ, որոնք պատկանում են 35 երկրներին: Կուսակցութիւնների թիւն աւելի է, քան երկրների թիւը, որովհետեւ մի քանի երկրներում մէկից աւելի ընկերվարական կազմակերպութիւններ կան:

Այս երկու թիւ քայտարում է երկու կարգի պատճառներով: Առաջին՝ որ ազգային փոքրամասնութիւններին փաստկանող կուսակցութիւններն անհրաժեշտ են գտնում պահել իրենց կազմակերպական ուրոյնութիւնը, որովպէս կարողանան մի կողմից իրենց ազդեցութիւնը տարածել այդ փոքրամասնութիւնների վրա, իսկ միւս կողմից՝ նրանց ազգային շահերն ու իրաւունքները պաշտպանել տիրող ժողովրդի ազգայնական ոտնձգութիւնների դէմ: Երկրորդ՝ որ մի քանի կուսակցութիւններ ծրարաբային և տակտիքական լուրջ տարակարծութիւններ ունենալով՝ չեն կարողանում միանալ իրար հետ:

Այս պատճառներով ընկերվարական շարժումը ճիւղաւորւած է հետեւեալ երկրներում.

Անգլիայում գործում են երկու՝ ընկերվարական կուսակցութիւններ. Աշխատատարական Կուսակցութիւն (2.461.000 անդամ) և Անկախ Աշխատատարական Կուսակցութիւն (40.000 անդամ):

Լեհաստանում կան հինգ ընկերվարական կուսակցութիւններ. Լեհական Ընկերվարական Կուսակցութիւն — P. P. S. (50-60.000 անդամ), Հրեական Ընդհանուր Բանուորական Միութիւն, որ յայտնի է «Բուրձ» անունով (15.000 անդամ) Լեհաստանի Անկախ Ընկերվարական Կուսակցութիւն (3500 անդամ), Լեհաստանի Գեորգիանական Ընկերվարական Կուսակցութիւն (11.800 անդամ) և Լեհաստանի Ուկրաինական Արմատական-Ընկերվարական Կուսակցութիւն (10,189 անդամ):

Չեխոսլովակիան ունի երեք** ընկերվարական

*) Անգլիայում կան նաև երեք ընկերվարական խմբակցութիւններ, խիստ փոքրաթիւ անդամներով. — Սոցիալ-Դեմոկրատական Դաշնակցութիւն, Ֆարիան Ընկերվարիւն և Հրեական Բանուորական Կուսակցութիւն (Poale Zion), որոնք չեն ձև ազդեցութիւն ունին այս երկրի ընկերվարական շարժման վրա և մեր հաշիւներից դուրս են մնում:

**) Մինչև 1930ի ապրիլը, Չեխոսլովակիայում

կուսակցութիւն. — Չեխոսլովակեան Սոցիալ-Դեմոկրատական Բանուորական Կուսակցութիւն (155,483 անդամ), Չեխոսլովակիայի Գեորգիանական Սոցիալ-Դեմոկրատական Բանուորական Կուսակցութիւն (67,459 անդամ) և Չեխոսլովակիայի Լեհական Ընկերվարական Բանուորական Կուսակցութիւն (2150 անդամ):

Աւստրիայում կան երկու ընկերվարական կուսակցութիւններ. — Աւստր-Գերմանական Սոցիալ-Դեմոկրատական Բանուորական Կուսակցութիւն (698,181 անդամ) և Աւստրիայի Չեխոսլովակեան Սոցիալ-Դեմոկրատական Բանուորական Կուսակցութիւն (8760 անդամ):

Ռուսաստանի ընկերվարական կուսակցութիւնները երկուս են. Ռուսաստանի Սոցիալիստ Եղբայրականների Կուսակցութիւն և Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանուորական Կուսակցութիւն: (Սրանց անդամների թիւը անյայտ է):

Հունգարիայի Հաշիւն արձանագրւած են երկու կուսակցութիւն. Հունգարիայի Սոցիալ-Դեմոկրատական Կուսակցութիւն (150,156 անդամ), որ գործում է բուն երկրում և Հունգար Տարագրիներին Ընկերվարական Խմբակցութիւն (2600 անդամ), որ գտնուում է արտասահմանում:

Միևնոյն երկրում իրար կողքի գործող այս ընկերվարական կուսակցութիւնները յաճախ տարակարծութիւններ են երևան հանում, որոնց արձագանքները հասնում են և Ինտերնասիոնալին: Սակայն, ըդհանուր քաղաքական հարցերում և մանաւանդ խորհրդարանային ընտրութիւններին ժամանակ, նրանք, ընդհանրապէս, միասին կամ համերաշխօրէն են հանդէս գալիս: Ճաւախ քայտուցութիւն են կազմում գլխաւորապէս Լեհաստանի կուսակցութիւնները, որոնք դեռ չեն կարողացել իրենց ազգային և տակտիքական տարակարծութիւնները բաւարար չափով յաղթահարել՝ բուրձուպիսի դէմ՝ միացեալ ընկերվարական ճակատ կազմելու հմար:

Վերոյիշեալ տեղեկագրով իրենց վիճակը թւական տեսակներով պարզում են այն կուսակցութիւնները միայն, որոնք օրինական կեանք, հետևաբար և հնարաւորութիւն ունին վիճակագրութիւն կազմելու իրենց անդամների թիւի, պատանեկական կազմակերպութիւնների և ստացած ընտրական ջրէների մասին: Իսկ այն կուսակցութիւնները, որոնք գործում են Փաշիստական և բոլշեկեան դիկտատուրաների տակ, կամ թւական տեղեկութիւններ չեն հաղորդում իրենց մասին և կամ կցկտուր, ստուգման կարօտ թւեր են արձանագրում: Այս կուսակցութիւններն են.

1. Ռուսաստանի Սոցիալիստ Եղբայրականների կուսակցութիւն,

կար մի չորրորդ կուսակցութիւն եւս — կարպատո-Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական՝ Բանուորական կուսակցութիւն, որ այդ թւին միացաւ Չեխոսլովակեան Սոցիալ-Դեմոկրատիայի հետ:

- 2. Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանուրական Կուսակցութիւնը,
- 3. Իտալական Սոցիալիստական Կուսակցութիւնը,
- 4. Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը,
- 5. Վրաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանուրական Կուսակցութիւնը,
- 6. Իւգոսլավիայի Ընկերվարական Կուսակցութիւնը,
- 7. Լեհաստանի Սոցիալ-Դեմոկրատական Կուսակցութիւնը,
- 8. Ուկրաինական Սոցիալ-Դեմոկրատական Կուսակցութիւնը,
- 9. Պորտուգալիայի Ընկերվարական Կուսակցութիւնը:

Օրինական պայմաններում*) գործող կուսակցութիւնների թիւն է 36: Սրանցից մէկը՝ Հունգար Տարազիւնների Ընկերվարական իմրակցութիւնը՝ գործում է Հայրենիքից դուրս, զանազան վայրերում, ուր տեղաբնակ է Հունգար տարագրութիւնը, իսկ մնացած 35 կուսակցութիւնները բաժանւած են 27 երկրների վրա:

Ընկերվարական շարժման վիճակը այս 27 երկրներում երևան է դալիս ստորև գետեղւած աղիւսակից**), որի մէջ գուշադրւած են Բրիւսելի Համագումարի (1928) և Վիեննայի Համագումարի (1931) ժամանակ հաստատուած թւերը:

Աղիւսակի մէջ մենք գետեղւած ենք նաև Արհեստակցական Միութիւնների Միջազգային Դաշնակցութեան մէջ (Ամստերդամի Ինտերնասիոնալ) կազմակերպւած բանուրների թւերը՝ նկատի ունենալով այն պարագան, որ այս կազմակերպութիւնը, թէև ձևականօրէն կապ չունի ընկերվարական շարժման հետ, սակայն, իրապէս սերտօրէն միացած է ընկերվարական կուսակցութիւններին և բոլոր կարևոր տնտեսական, ընկերային և քաղաքական հարցերում նեղուկ է հանդիսանում նրանց:

Տեղեկագրի մէջ պակասող թւերը նշանակւած են գծերով (—):

Մեր աղիւսակում գծւած սիւնակներն ու թւերը տեղիք են տալիս հետևեալ մեկնութիւններին և դիտողութիւններին:—

Երկրների քանակութեան թիւը:— Այս սիւնակում առաջ բերւած թւերը, որ քաղւած են Ազգերի Դաշնակցութեան վիճակագրական տարեգրքերից (1927 թ. և 1930թ.) ստուգութեան կարօտ են: Առանց ստուգութեան անկարելի է ընդունելի համարել քանկութեան նւագումը Դանեմարքում, Զւիցերիայում, Յունաստանում և, մասնաւոր, Անգլիայում, ուր այդ նւագումը 1926 - 1929ի ընթացքին, մօտ 2,580,000ի է հասցւած: Անհասանական է նաև, որ իշխելով ժամանակամիջոցում Բրիտանական Գիւտանայի, Իտալիայի և Սպանիայի բնակչութիւնը որևէ փոփոխութիւն կրած չլինի:

*) «Օրինական պայմաններ» դարձածքը պէտք է յարաբերական մտքով հասկանալ, որովհետև մի քանի երկրներում, ինչպէս օրինակ, Հունգարիա, Լեհաստան, Քիմաստան և Բալկանեան երկրներից մի քանիսը, այդ պայմանները ձևակախօրէն միայն գոյութիւն ունին:

**) Աղիւսակը գետեղւած է յայտարար եղում:

Ընկերվարական կուսակցութիւնների անդամների թիւը:— Ըստ 1928ի տեղեկագրերի՝ մեր աղիւսակում նշանակւած 27 երկրների մէջ կազմակերպւած են եղել 6-619-122 անդամներ, իսկ ըստ 1931ի տեղեկագրերի՝ 6-196-812 անդամներ: Ստանում ենք, որ Բրիւսելի Համագումարից մինչև Վիեննայի Համագումարը ընկերվարականների թիւը պակասել է մասնաւորաբար կուսակցութիւնների մէջ 427-310ով:

Անդամների թիւ նւագումը ցոյց են տալիս Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգների, Բուլղարիայի, Բրիտանական Գիւտանայի, Պարտուգալի, Ռումանիայի, Ֆինլանդիայի և Անգլիայի կուսակցութիւնները: Առաջին 6 երկրների մէջ այդ նւագումը հասնում է 14-672-ի, իսկ միմիայն Անգլիայի մէջ 887,276ի: Հետևաբար, նւագումը կատարւած է զգաւորապէս անգլիական կուսակցութեան հաշիւին: Սա բացատրւում է, առաջին հերթին այն նախագամներով, որ Անգլիայի արհեստակցական միութիւններից մի քանիսը, որոնք ամբողջութեամբ մտնում են Ալյատաուորական Կուսակցութեան մէջ, խիստ թուլացել են, չնորհիւ յարաճուն գործուղերկութեան:

Միւս 20 երկրների կուսակցութիւնների մէջ, մենք ոչ միայն անդամների նւագում չենք տեսնում, այլ և 479-638 անդամի յաւելում ենք տեսնում: Առանձնապէս ուշադրւած է յաւելումը Գերմանիայում, Դանեմարքում, Լատվիայում, Լեհաստանում, Հրանդիայում, Շվեդիայում, Զիխուրվակիայում և Ֆրանսայում:

Այս յաւելումը խիտ խրախուսական պէտք է համարենք՝ նկատի ունենալով այն պարագան, որ Բրիւսելի Համագումարից մի վեր, աշխատաւորութիւնը, զբեթ է բոլոր երկրներում, մասնաւոր է ծանր գործազրկութեան: Իսկ գործազրկութիւնը, ինչպէս յայտնի է, ընդհանրապէս, պատուհասող դեր է կատարում ընկերվարական կազմակերպութիւնների կեանքում:

Անդամների թիւ տեսակէտից Լ.Ա.Ինտերնասիոնալի ոյժը գնահատելու համար, չպէտք է աջաբող աւել, որ մեր աղիւսակից դուրս են մտնւոյ կիսաֆաշիստական, Փաշիստական և խորհրդային երկրներում գործող 9 կուսակցութիւններ, որոնց ցանկը վերև առաջ բերիւք: Նկատի ունենալով, որ այս կուսակցութիւնների շարքին են պատկանում և իտալական ու ռուսական կուսակցութիւնները, որոնց անդամների թիւը հարիւր հազարներով էր հաշււում զիլիստոորական բեժիմների տակ ընկնելուց առաջ՝ վստահօրէն կարող ենք ասել, որ Լ. Ա. Ինտերնասիոնալի դրօշի տակ համախմբւած ընկերվարականների թիւն աւելացն մէկ միլիոնով աւելի է այս սիւնակի տակ նշանակւած 6-196-812-ից:

Պէտք է աւելացնել նաև, որ Լ.Ա.Ինտերնասիոնալի ազդեցութիւնը չէ սահմանափակւում իրեն յարած կուսակցութիւններով: Կան մի քանք կուսակցութիւններ էլ, որոնք տեխնիքական և այլ պատճառներով դեռ ևս չեն յարած մեր Ինտերնասիոնալին, բայց գտնւում են նրա գաղափարական ազդեցութեան տակ: Այդ կուսակցութիւններից են, օրինակ, Նորվեգիայի Նոր Բանուրական Կուսակցութիւնը, որ 76,597 անդամներ ունի, Իրլանդական Բանուրական Կուսակցութիւնը, որ խորհրդարանի մէջ ներկայացւած է 13 պատգամաւորներով, Հիւսիսային Իրլանդիայի Բանուրական Կուսակցու-

Թիւնը, Աւստրալիայի Բանւորական Կուսակցութիւնները, որոնք այդ երկրի կառավարական գործերում յաճախ վճռական դեր են կատարում, Կանադայի, Նոր Զելանդիայի, Հարաւային Ամերիկայի և անդրիական միւս դոմինիոնների ընկերվարական կուսակցութիւնները, որոնք օր ըստ օրէ սերտացնում են իրենց յարաբերութիւններն Անգլիայի Աշխատաւորական Կուսակցութեան հետ, Լատինական Ամերիկայի բանւորական կազմակերպութիւնները, Հնդկաստանի, Ծափոնիայի և Հեռավոր Արեւելքի մի քանի այլ երկրների նորակազմ ընկերվարական կուսակցութիւնները ևն ևն:

Այս կուսակցութիւններից մի քանիսն արդէն յարաբերութիւններ մէջ են Ը.Ա.Ինտերնասիոնալի հետ՝ նրա գլուխ տակ մտնելու համար, և ժամանակի խնդիր է, որ միւսներն էլ հետեւեն նրանց օրինակին: Մինչ այդ՝ նրանք միջոց են հաշիսանում, որ Ը.Ա. Ինտերնասիոնալը իր բարոյական ազդեցութիւնը տարածի երկրագնդի սահմանեւտուր անկիւններում իսկ:

Կուսակցական պատմիկների կազմակերպութիւնը:

— Պատանեկական կազմակերպութիւնների վրա, ընկերվարական կուսակցութիւնները վերջին տարիներն են սկսել ուշք դարձնել: Բրիւսելի Համազումարի ժամանակ, այս կազմակերպութիւնների մէջ կային — միշտ աղիւսակում յիշատակած երկրներն ունենք աչքի առաջ — 247-434 պատանիներ: Այս թիւը Վեննայի Համազումարի ժամանակ բարձրացել է 277,927ի, որ սառել է թէ ընկերվարական պատանիների թեանկը երեք տարում աւելացել է 30-493 հոգով: Եթէ ընդունենք, որ Արգենտինայում ներկայումս նոյնքան պատանիներ կան, ինչքան կային 1928ին, այն ժամանակ այս յաւելումը կը հասնի 32-993ի:

Տարակոյտ չունենք, որ առաջիկայ շրջանին այս թիւը պիտի բարձրանայ, որովհետեւ ընկերվարական կուսակցութիւնները հիմա շատ մեծ կարեւորութիւն են տալիս պատանիներին ընկերվարական ուղով դաստիարակելու գործին:

Ընտրական փէններ:— Ը.Ա.Ինտերնասիոնալի հանրային ազդեցութեան լուսազոյն չափանիւնն են հանդիսանում այն ընտրական քէնները, որ շահել են ընկերվարական կուսակցութիւնները աղիւսակում յիշատակած երկրներում, վերջին խորհրդարանային ընտրութիւններին:

Բրիւսելի Համազումարին նախորդող ընտրութիւնների ժամանակ, նրանց շահած քէնների թիւն էր 24-405-375: Վեննայի Համազումարին այդ թիւը բարձրացած էր 27-396-579ի՝ ցուցահանելով 2-991-204ի կամ մօտ երեք միլիոնի յաւելում:

Այս յաւելման արժէքը հասկանալու համար, պէտք է նկատի ունենալ, որ վերջին խորհրդարանային ընտրութիւնները Փաշխտական կամ արգելադրական նշանակի տակ կատարուեցին Գերմանիայում, Լեհաստանում, Հատվիայում, Դանցիգիւում, Բուլգարիայում, Աւստրիայում և մինչև իսկ Բելգիայում: Առանձնապէս բացառիկ քննադատութիւն ստացան լեհական ընտրութիւնները, որոնց ժամանակ ընկերվարական ջոյրը պարզաբոլորները բանտարկւած էին և որոնց հետեւեցով մեր աղիւսակի մէջ մօտ 500-000 քէնների նւազում է արձանագրւած Լեհաստանի ընկերվարական կուսակ-

ցութիւնների հաշին: Եթէ այս պարագաները չլինէին, Ը.Ա. Ինտերնասիոնալն աւելի՛ մեծ յաջողութիւններ կարձանագրէր ընտրական մարզի մէջ:

Աւելորդ է ասել, որ այս օրագրութիւնը բաւական չէ լլիւս գաղափար կազմելու համար, թէ ի՞նչ ազդեցութիւն ունի ընկերվարական շարժումը հանրային տրամադրութիւնների վրա: Որովհետեւ մեր դիտողութիւնը դուրս են մտնում ութ երկիրն — դրանք թուած նաև Բուսաստանի, Իտալիայի, Ուկրաինայի և Իւգոսլաւիայի պէս բազմամարդ երկրներ — որոնք զրկւած են խորհրդարանային ընտրութիւններ կատարելու և մասնակցող ընկերվարական համակրանքներ արտայայտելու հնարաբարութիւնից: Բնականաբար դուրս են մտնում մեր դիտողութիւնից և այն երկրները, որոնց ընկերվարական կուսակցութիւնները դեռ ևս չեն յարած Ը.Ա.Ինտերնասիոնալին:

Եթէ կարելի լինէր այս բոլոր երկրներում ազատ ընտրութիւններ կատարել, ընկերվարականների քէնները քան և չորս միլիոնից շատ աւելի մեծ թւով կարտայայտէր, անշուշտ:

Մեր աղիւսակում յիշատակւած 27 երկրներում, ընկերվարականները 5961 պատգամաւորական աթոռներէց զբաւել են 1199 աթոռ: Եօթը երկրներում — Անգլիա, Աւստրիա, Բելժիկ, Դանեմարք, Շվեդիա, Պարագուայի և Ֆինլանդիա — ընկերվարականները պատգամաւորների ընդհանուր թիւի մի երրորդից աւելին են կազմում:

Արիւստակցական Մուքիկներ:— Աղիւսակի մէջ նշանակւած երկրներում արհեստակցական միութիւնների մէջ կազմակերպւած են 25-327-062 բանւորներ: Սրանցից միայն 13-994-381 հոգին են միացած Արհեստակցական Միութիւնների Միջազգային Դաշնակցութեանը: Մնացած 11-332-681ը մեծ մասամբ անկախ են իսկ փոքր մասով՝ որոշ յարաբերութիւնների մէջ են գտնուում կոմունիստական արհեստակցական կազմակերպութիւնների և բուրժուական կուսակցութիւնների հետ:

Բրիւսելի Համազումարի ժամանակ Ա.Մ.Մ.Դաշնակցութեան միացած էին 13-697-936 բանւորներ: Հետեւաբար, անցած երեք տարիների ընթացքին Ը.Ա. Ինտերնասիոնալին այնքա՞ն մօտիկ կանգնած այս միջազգային արհեստակցական կազմակերպութիւնը ուժեղացել է 296-445 նոր անդամներով:

Ա.Մ.Մ. Դաշնակցութիւնը, բացի Անգլիայից և Լեհաստանից, ուր զգալիօրէն թուլացել է բարձրագրկութեան և Փաշխտական հայտնանքների պատճառով և բացի Աւստրիայից, Դանցիգիւի և Էստոնիայից, ուր նրա անդամների թիւը խիստ փոքր չափով է նւազել՝ մնացած երկրներում զգալիօրէն ուժեղացել է: Սա էլ նշանակալից մի պարագայ է, որ այս երկրներում տիրող բարձրագրկութիւնը չէ կարողացել բացասական ազդեցութիւն ունենալ արհեստակցական շարժման վրա:

Ընկերվարական մամուլ:— Բրիւսելի Համազումարի ժամանակ ընկերվարական օրաթերթերի թիւն էր 354: Վերջին երեք տարիների ընթացքին, այդ թիւը բարձրացել է 373ի*): Թերթերի շատութեան տեսակէ-

*) Այս բերքերից միայն չորսն են վեցօրեայ (Ֆինլանդիայում): Մնացած բոլորը եօթօրեայ են:

տեց առաջին տեղը բռնում է Գերմանիան, երկրորդ տեղը Դանեմարքը իսկ երրորդ, չորրորդ և հինգերորդ տեղերը՝ Զլիցերիան, Շվեդիան և Ձեխոսլովակիան: Միև երկրները 10ից պակաս օրաթիվերով ունին:

Բացի օրաթիվերից՝ խնդրոյ առարկայ ընկերվարական կուսակցութիւնները հրատարակում են և այլ պարբերական թերթեր — երկօրեայ, եռօրեայ, հինգօրեայ, շաբաթաթիվեր, երկշաբաթաթիվեր և ամսազիւր: Սրանց ընդհանուր թիւն է ներկայիս 503: Գժբարխտաբար, տեղեկութիւններ պակասում են ստուգելու համար, թէ Բրիտանիայի Համազումարից ի վեր ի՞նչ յառաջդիմութիւն է նկատուում այս կարգի պարբերական հրատարակութիւններին մէջ:

* * *

Այս թաւական տեղեկութիւններն այնքան պերճախօս կերպով վկայում են Ը.Ա. Ինտերնասիոնալի վերելքը, որ աւելորդ է դառնում այդ մասին խօսք աւելացնելը: Պատկերն աւելի՛ ցայտուն կը դաւնար, եթէ մենք կարողանայինք ընկերվարական և համայնավարական շարժման գարգացումը 1928—1931ի շրջանին համեմատել:

Գժբարխտաբար, շենք կարող այս համեմատութիւնը լրիւ չափով կատարել որովհետև համայնավարական կուսակցութիւնների անդամների թիւ մասին միայն հետեւել տեղեկութիւնները կան ընկերվարական տեղեկագրերի մէջ:—

Համայնավարական կուսակցութիւնները ունեցել են

Անգլիա	1928ին	7:377	անգամ	1931ին	2.000
Բելգիկ	,,	1.500	,,	,,	500
Գերմանիա	,,	124.722	,,	,,	134.000
Գրանմարք	,,	?	,,	,,	400
Դանցիկ	,,	?	,,	,,	800
Զվիցերիա	,,	4.000	,,	,,	4.000
Շվեդիա	,,	16.732	,,	,,	3.527
Չեխոսլովակիա	,,	138.000	,,	,,	35.000
Ֆրանսա	,,	35.000	,,	,,	30.000

Ինչպէս տեսնում ենք, բացի Զլիցերիայից, ուր համայնավարներին թիւը փոփոխութիւն չէ կրել և Գերմանիայից, ուր այդ թիւը մօտ 7%ի յաւելում է ունեցել, մնացած երկրներում համայնավարական շարժումը յետադիմել է:

Ա. ԱՐԻՍԵԱՆ

ՄԱՐԲՍԻԶՄԸ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՅԸ

Ըստ մարքսիզմի՝ ազգութիւնը որպէս պատմական երևոյթ պիտի դադարի գոյութիւն ունենալուց այն վարկեանից երբ պատմութեան անը դատավճիռը կը հնչի, երբ «անհրաժեշտութեան» սահմանից հասարակութիւնը կանցնի «ազատութեան» սահմանը: Այդ վարկեանից պատմութիւնն այլևս գործ չի ունենալու ազգութիւնների հետ. հասարակութիւնը կը կարճակերպի միջպայանքին կամ դերպագայանքին:

Մարքսիզմի համար ազգային հարցը և ընդհանրապէս ազգութիւնը սերտորէն կապուում է այն տնտեսական քաղաքական հարցերի հետ, որոնց շուրջը և որոնց համար բանւորութիւնը պայքար է մղում: Է՛լ աւելի.— մարքսիստական վարկադեպտութեան մէջ ազգութիւնը երբեք երևան չիկալ որպէս պատմական կենսիչ ուրոյն գործօն. սրանից հետևում է նաև, որ նրա ազատադրումը երբեք նպատակ չդարձաւ: Նա յարակցեց տնտեսական ուժերին, դարձաւ «վերնաէնք» և որպէս այդպիսին համարուեց լոկ անդրադարձումն տնտեսական-արտադրական ձևերի ու նրանց շուրջը ստեղծած հասարակական ուժերի փոխարարութեան:

Մարքսիզմը ազգութեան խնդիրը երբեք չըմբռնեց որպէս մշակութի ռուրոյն ինչպէր. ուստի և ազգութիւնը իր իսկական մաքուր ստոււով՝ նրա ուսումնաբերմէ մէջ հանդէս չեկաւ և տեղ չդրուեց ապագայ՝ ընկերվարական հանրակարգում:

Նախորդ դարի վերջին, և իրկնիստը հրապարակային մի ճառում ասում էր. «Մեկ, սոցիալիստներին հա-

մար ազգութեան հարցը գոյութիւն չունի: Մենք ճանաչում ենք միայն երկու ազգ՝ մի կողմից կապիտալիստների, բուրժուազիայի, տիրող դասակարգի ազգը, իսկ միւս կողմից՝ պրոլետարիատի, զրկածների, աշխատանքի դասակարգի ազգը»: Այստեղ ազգութիւնը նոյնացել է դասակարգի հետ: Դասակարգն ու դասակարգային պայքարը չեն, որ գտնուում են ու տեղի ունեն ազգային կենդանի մարմնի մէջ, այլ ազգութիւնն է, որ գտնաւորում է դասի ու դասակարգի աղօտ ճառագայթներով:

Ըստ «Կոմունիստական Մանիֆեստի»՝ բանորը ոչ ազգ է ճանաչում, ոչ հայրենիք: Բուրժուազիայի պատմական դերը նրանումն է, որ չտեսնած չափով նպաստեց տնտեսական ու քաղաքական ուժերի կենտրոնացման: Այդ վաստը ունեցաւ այն հետևանքը, որ «բուրժուազիայի զարգացումով առևտրի ազատութեան, համաշխարհային շուկայի ընդլայնումով, արդիւնաբերական ձևերի միանմանութեամբ և նրանց համապատասխան գոյութեան պայմանների հետ զուգընթաց աւելի ու աւելի կորչում են ազգային առանձնացած վեճակները և ժողովուրդների մէջ եղած հակամարտութիւնը: Բանւորութեան տիրապետութիւնը էլ աւելի կը նպաստէ նրանց շքանարուն»: Տրամաբանորէն մտածելով պիտի ասենք, ինչ որ սկսել է բուրժուազիան, պիտի շարունակի բանւորութիւնը: Պատմութեան ընթացքում ազգութիւնն ի՛նչու նորագոյն՝ կապիտալիստական տնտեսութեան հետ, սակայն նրա աստիճանական կենտրոնացումով վերանում են ազգային ճառանձնայատկութիւնները»:

Շարունակելով ընթանալ Մարքսի և Լիբկնեխտի գծած ուղիով՝ Կ.Կառուցիկն իր սկզբնական աշխատանքների մէջ՝ ներկած ազգային հարցին՝ պնդում էր, «որ անտեսական մտնիզմը պիտի ստեղծի և ամբողջ մշակոյթի մոնիզմ»:

Քէ Լիբկնեխտի «ազդ-դասակարգը», թէ Կ. Մարքսի առանձնաշատութիւնները կտրելով, թէ Կ. Կառուցիկը «մշակոյթի մոնիզմը» ոչ այլ ինչ էն, եթէ ոչ լեռեյայն պնդելը, որ ազգութիւնը մէկ ժամանակաւոր, պատմական երևոյթ է, որ դալիք, աւելի կատարեալ անարակարգում զոյուցիւն ունենալ չի կարող: Այնտեղ յղված են բոլոր յատկանշական կողմերը. «բանտութեան իշխանութեան» օրով ազգային հարցը մարդկանց յուզել չի կարող. չի յուզելու, ոչ թէ նրա համար, որ աւելի կատարեալ և լաւագէտ լուծում կը լինի, այլ որովհետև ազգութիւնը որպէս փաստ զոյուցիւն չի ունենալու:

Մարքսի և նրա հետերդները այս մտածողութիւնը մշակել 19րդ դարի կէսին, ազգային ուժեղ պայքարների շրջանում: Այդ ժամանակի ազգութիւնը խորագնս գունաւորում էր քաղաքական ու անտեսական ազգակներով: Ստեղծում և կատարուում էին նորագոյն ազգային պետութիւնները և յաճախ ազգութիւնների այդ կատուցման պրոցէսը երևան էր գալիս թունոտ, հիւանդազին ձևով: Նա հանդէս էր գալիս որպէս շովին, կլանող, հալածող ազգայնամուրթիւն (նացիոնալիզմ): Եւրոպական կենսելի այդ խոր վերիվայրումների մէջ, փոքր ազգերի իրաւունքը բնադատուում էր, գոյութեանը վտանգ սպառնում: Հէնց նման փաստերի դիտողութիւնն հետևանք էր, որ Կ. Մարքսը ազգային հարցը համարեց «ժողովուրդների մէջ եղած հակամարտութիւն», ի հարկէ, այդ հակամարտութիւնն էլ ըմբռնելով որպէս նւթական ու քաղաքական հակադրութիւն:

Մարքսը շխտանցեց հարցի խորքը և չըմբռնեց, որ այդ ահուր պայքարների մէջ, որոնք շատ յաճախ երևան էին դալիս հիւանդազին ձևով, ժողովուրդները կազմակերպուում էին որպէս ազգեր, ձգտում էին գրունելու կայուն յինտրաններ իրենց «ազգային առանձնաշատութիւնը» յաւերժացնելու համար: Այդ պայքարների ներքին իմաստը ազգութեան յարատև գարծնելու մեծ խնդիրն է: Ուստի և գարծնաւի չէ, որ Մարքսի համար ազգութիւնը հէնց այդ չովին, նեղ, ազգայնամուրթ, հալածիչ արտայայտութիւնն է, որ յաճախ տեղի էր ունենում բովանդակ նախորդ դարում: Արտայայտութեան այդ կոպտ եղանակները Մարքսիզմը նոյնացրեց ազգութեան հետ, համարեց նրա ներքին, էութիւնից բխող մի երևոյթ:

Սակայն, ազգութիւնը որպէս մշակոյթային երևոյթ, բնա պատասխանատու չէ այդ ազգայնամուրթ արտայայտութիւնների համար, մի ազգայնամուրթիւն, որից այնքան տառապում էր հէնց ինքը Կ. Մարքսը:

Մեծպետական դերման ազգայնամուրթութիւնը նրան թելագում էր պահանջել ոչնչացումն յլաւոնական ազգերի: Նա ծագրել, արհամարհել է այդ փոքր ազգերի ազատազրական փորձերը, համարել է նրանց պատմութիւնից գուրկ ազգեր: Նրանք լոկ ազգազրական տարրեր են, որոնք դատապարտուած են վաղ թէ ուշ ձուլ-

ւելու դերման ազգութեան մէջ: Եւ այս բանը նրա ցանկութիւնն է ու թելադրանքը և այդ բոլորը... յանուն ընկերվարութեան:

Շատ մարքսիստներ համաձայն են, որ ազգային հարցը արտակարգօրէն հրատապ հարց է և որ նրա լուծումը ընկերվարական շարժման մէջ շատ կարևոր խնդիրն է: Յատկապէս նոր ազգութիւնները, ազգային պայքարների ազդեցութեան տակ, նախորդ դարի վերջին փորձեցին շտկուել ենթարկել իրենց ուսուցչի ստեղծչունբը: Սակայն, նրանք թէպէտ ընդունեցին հարցի կարևորութիւնը և նրա լուծման անհրաժեշտութիւնը՝ շատ չհեռացան Մարքսի պատմա-հասարակագիտական տեսութիւնից:

Նրանց հայեցողութեամբ, ազգային հարցի լուծումը նախապայմանն է յաջող և գոտ դասակարգային պայքարի: Ազգային զգացումը մթաղնում է, աղճատում բանտութեան դասակարգային գիտակցութիւնը, չաղկապում է նրան իր ազգութեանը, որի դադարափարաօտութիւնը անյարիր է նրա շահերին: Բանտութիւնը ընթանում է իր դասակարգային հակառակորդի՝ բուրժուակիայի գեկավարութեամբ: Վերջինի շահագործում է նրա ազգային զգացումը և ուղղութիւն տալիս իր իսկ ցանկութեան համաձայն: Որպէսզի այս շահագործումը տեղի չունենայ՝ պէտք է լուծել ազգային հարցը՝ տալով նրան ազատ դարգացման բոլոր հնարաւորութիւնները: Այդ պայմաններում դասակարգային պայքար էլ աւելի ցայտուն կը լինի, գտած, գերծ ամէն օտար և խորթ տարրերից:

Անգամ Բրիւնի Քորհրաւժաժողովի որոշումները, որոնք շատ հետաքրքիր էլ են բանում ազգային դադարափարի դարգացման համար մարքսիստական աշխարհում, այլ բան նկատի չունեն իրենց հիմնաւորումների մէջ, քան այդ. «Աչքի առջ ունենալով, որ ազգային կուի շարունակելը հանդիսանում է իբր լաւագոյն միջոց, որի օգնութեամբ տիրող դասակարգները ապահովում են իրենց տիրապետութիւնը և խանդարում են իսկական ժողովուրդական շահերի արտայայտման...» Ըստ այսմ, ուրեմն, ազգային հարցի լուծումը դառնում է ոչ թէ ընկերվարական-փոխտոհայական աշխարհահայեցողութիւնից բխող սկզբունքային պահանջ, այլ լոկ գործնական կենսելի թելադրանք: Նա ոչ թէ մշակոյթային արժէքների ուսմունք է, այլ մի միջոց բուրժուակիայի կամ բանտութեան դասակարգային շահերը իրացնելու: Նա խանդարում է «քաղաքական յառաջդիմութեան», որը միայն առաջնորդում է դէպի լաւագոյն հանրակարգը:

Հարցի յայտիսի ձևակերպումով, Բրիւնի Քորհրաւժաժողովը մտաց մարքսիստական դետիի վրա: Այստեղ նպատակն ու միջոցը իրենց տեղն ու դերը փոխել են: Ազգութիւնը որպէս մարդկային մշակոյթի մի անհրաժեշտ ձև չի ըմբռնում, հետևապէս, հանդէս չի դալիս որպէս պատմութեան մնայուն, յարատև փաստերից մէկը, այլ նա միայն գործնական խնդիր է կապուած բանտութեան դասակարգային պայքարի հետ, և արժէքաւոր է այնքան, որքան խանդարում կամ նպատում է նրա վերելքին:

Այստեղ մենք չենք ուզում նսնմայնել Բրիւնի Քորհրաւժաժողովի որոշումների արժէքը, որոնք մօտ երկու տասնամեակ դարձած լաւագոյն բանաձևուած գործնա-

կան թելադրանքները ազգային հարցի լուծման խնդրում: Մեզ հետաքրքրում է լուի այդ որոշումների մեկնակէտը: Իսկ քննելով այդ մեկնակէտը մենք յանգեք ենք այն եզրակացութեան, որ կանգնած մնալով մարքսիզմի պատմա-հասարակագիտական հիմունքների վերա, անկարելի է ըմբռնել ազգային հարցը իր ինկական ուղւումով և համապատասխան գործելակերպ ընդգծել:

Մարքսիզմի պատմափիլիսոփայական ուսմունքը մէջ շատ մեծ դեր է խաղում քաղաքա-տնտեսական կենտրին կենտրոնացման փաստը: Քաղաքական ու տնտեսական կենտրին կենտրոնացումը Մարքսն այն եզրակացութեան եկաւ, որ դա ոչ միայն միակ ուղին է դէպի ընկերավարութիւնը առաջնորդող, այլ և միակ ճանապարհն է, որով մարդուցութիւնը աստիճանաբար միջնադարանում է, կորցնելով ազգային յատկանշական կողմերը: Նա այդ եզրակացութեան հասաւ նոր դարերի, յատկապէս 19րդ դարի պատմութեան ուսումնասիրութեամբ: Կ. Մարքսը ընկերավարութեան և քաղաքա-տնտեսական կենտրին կենտրոնացման մէջ գրեց մի սերտ պատճառական կապ, որով ընկերավարութիւնը դառնում էր առարկայական երևոյթների զարգացման հետեւանք: Նա մեր բարոյական կամքի ու մեր գաղափարական պայքարների արդիւնքը է, այլ հասարակական կենտրին առարկայական բնարջման հետեւանք: Ընկերավարութիւնը բարոյափիլիսոփայական ուսմունք է հանդիսանում, այլ միայն քաղաքա-տնտեսական մի սխտով: Տնտեսական ու քաղաքական կենտրոնացումը Մարքսի համար ոչ միայն պատմութեան խոշոր փաստերից մէկն է, այլ և աւետարելը ապագայ հանրակարգի:

Այն ժամանակաշրջանում, երբ գործում ու հեղինակում էր Կ. Մարքսը, դրամատիորութիւնը որպէս տնտեսական զարգացման նորագոյն հանդրան, զարգանում էր Եւրոպայի մի քանի երկրներում՝ Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում: Այս պետութիւնների մէջ առաջանում էին դասակարգային նոր շերտաւորումներ, որոնց հետեւանք լինում է բանտորութեան դասակարգային դիտակցութեան գալը և ապագայ ընկերավարական հանրակարգի իդէալի մշակումը: Դրա հակառակ, Եւրոպայի միւս երկրներում դեռ եւս հին տնտեսական ձևերն են պահպանում: Նրանք անհանդուր են մնում դրամատիորութեան յեղափոխիչ աղբյուրութիւններին: Եթէ դրամատիորական երկրներում բանտորութեանը վիճակած էր, դասակարգային հակամարտութեան հետեւանքով, ապատարբը հանդիսանալ բոլոր ազգերի ու ժողովուրդների, ապա այդ ապատարբական պայքարի մէջ ոչ դրամատիորական տնտեսութեամբ ապրող ժողովուրդները մաս չունեն, որովհետև նրանց մէջ չեն հասունանում նորագոյն դասակարգերը, իրենց յեղափոխական արքամարդութիւններով: Նրանց մէջ դեռևս միջնադարական ծանրաքաղ գասերն են իշխում — գիւղացիութիւնը, մանր արհեստարտութիւնը, հողերարականութիւնը և անլակահանութիւնը:

Երկու տնտեսական ձևերի այս հակադրութիւնից Կ. Մարքսը չհանց այն եզրակացութիւնը, թէ տնտեսակէտ յետամնաց ժողովուրդներն էլ աստիճանաբար ընկնելու են դրամատիորական կարգերի մէջ, այլ կանգ առաւ այն տեսակէտի վրա, թէ այդ ժողովուրդները անհրաժեշտաբար պիտի կլանեն մեծ պետութիւնների

և ազգերի կողմից և այդ միջոցով միայն դառնան պատմութեան ազգակ ու նպաստեն ընկերավարական հանրակարգի արագացման: Ուստի և 19րդ դարի փոքր ժողովուրդների ազգային շարժումները ոչ միայն կարելի Մարքսի բարեցեղած ուշադրութեան շարժանացան, այլ ընդհակառակն հարածանքի և ծարրի ենթարկեցին: Այդ ազգային շարժումների ներքին իմաստն էր վերականգնել երբեմնի քաղաքական անկախութիւնը, մի բան՝ որ կը նշանակէր՝ մեծ քաղաքական կենտրոնացումները փլուզումի ենթարկել: Կ. Մարքսը չնկատեց, որ իր ժամանակի քաղաքական ու տնտեսական կենտրոնացումները բունութեան գործ են և ոչ թէ ժողովուրդների գործակցութեան արդիւնք: Այս պարագան չնկատեց Կ. Մարքսը, ուստի և փոքր ազգերի քաղաքական ու մշակութային վերածնունդեան փորձերը և նրանց ազատազրկան ձգտումները գոտապարտեցին Մարքսի գրչի տակ՝ որպէս յետադէմ, հակալեզափոխական գործեր:

Քաղաքական ու տնտեսական կենտրոնացման խնդիրը Կ. Մարքսը չէ, որ առաջին անգամ քննութեան նիւթ է դարձնում: Որպէս պատմագիտութեան տեսութիւն, նա աւելի հին է: Տնտեսական կենտրոնացման ուսմունքը կայ Սէն-Սէմոնի վարդապետութեան մէջ, քաղաքական կենտրոնացման ուսմունքը շատ ուժեղ ձևով երևան եկաւ յատկապէս Գերմանիայում, որ ազգութիւնների ծագման ու զարգացման խնդիրը սերտորէն յարակցեց գերման ազգութեան քաղաքական զարգացման հետ: Միայն, այստեղ պիտի շեշտել, որ Մարքսը տարբեր ըմբռնում տեղ քաղաքական աղբյուրին: Մինչ նախորդ դարի գերման պատմաբանների ուսումնասիրութեան խնդիրն էր՝ սկսած Բանկէից և վերջացած Մայէրով ու Լամպիխով՝ թէ ի՞նչ ազգակաների տակ, ցեղային, հասարակական ու քաղաքական ինչպիսի պայմաններից է ստեղծում ազգն ու ազգութիւնը, Մարքսի ու մարքսիստների քննութեան առարկան է թէ ի՞նչ բնոյթ ստացաւ ազգութիւնը նոր ժամանակներում և թէ հասարակական զարգացման պրոցեսում ի՞նչ ապագայ է սպասում նրան: Անտորէն յարակցելով ազգութեան խնդրը հասարակական այլ ուժերի հետ՝ նրանք յանդեցին այն եզրակացութեան, թէ ազգութիւնը որպէս ընկերային-պատմական մի երևոյթ, որի ծագումը պայմանաւորում է նոր դարերի տնտեսական ուժերի զարգացումով անվերապահորէն դատապարտւած է մահան՝ նոյն քաղաքական և տնտեսական ուժերի կենտրոնացման օրէնքով:

Սակայն, այս պնդումները ակնբախ կերպով հակասում են պատմական իրականութեան: Պատմութիւնն ապուութիւնների ստեղծումն ու ինճահաստատումն է: Եթէ տնտեսութեան ու քաղաքականութեան կենտրոնացումը նպատած լինէր միայն մի քանի խոշոր, մեծ ազգ-պետութիւնների ստեղծման, որոնք արտիճան առ աստիճան կենտրոնացնէին աշխարհն ու նրս պատմութիւնը: Եթէ նորագոյն դարը դեպր այն յնթացքով, որ Անգլիան, Գերմանիան, Ռուսաստանը դառնային հաւաքող, ձուլող, զոդող քաղաքական ու մշակութային ուժեր ու նրանց շուրջն ու ներս գտնող բազում ազգ է ազդեցութիւն աստիճանաբար կուլ ապրին նրանց ջրապտոյտի մէջ, դեռ կարելի կը լինէր բնութենել Կ. Մարքսի ազգային ուսմունքի ճշմարտութիւնը:

Սակայն, ոչինչ այնքան ճշգրտակից փոքր ազդերի վերագործնեցին, մշակոյթային շարժման, ազգային դիտակցութեան հորեղանի ընդլայնման, քաղաքական իդէալի մշակման, որքան նոյն քաղաք-տնտեսական կենտրոնացումը, որը ե պատճառ դարձաւ մեծ քաղաքական միութիւնների փլուզումին: Պատմութիւնն օտայնացնում է, որ ազգերը չեն ձուլուում, չեն ոչնչանում, այլ բազմանում են զանախով ե խորանում որակով: Պատմութիւնը ցոյց է տալիս, որ ազգերի շերտաւորումն այդ պրոցեսը տեղի է ունենում դրամատիորական տնտեսութեան դարաշրջանում էլ աւելի արագ ու ներոյժ, քան նախորդ ժամանակներում: Պատմութիւնը ցոյց է տալիս, որ բազմաթիւ այլ ազգակիներին գուգակից՝ դրամատիորութիւնը իր դերն ունի ազգային ցարթնեքի, նրա ինքնազարգացութեան դարուն ե քաղաքականապէս ձևաւորելու մէջ:

Ահա այս է ցուցանանում պատմութիւնը: Եւ չկայ հակառակը պնդող մի փաստ, չկայ մէկ լուրջ ուսումնասիրութիւն, որ համոզէր մեզ, թէ ազգը որպէս փաստ, ե ազգութիւնը որպէս սկզբունք անկման են դիմում:

Պատմութեան մէջ տեղի է ունենում ոչ թէ «մշակոյթի մոնիզմ», այլ մշակոյթի շերտաւորումն ու երկրաշերտում: Եւ կրկնում ենք, ազգութիւնների բազմացումն ու ազգային մշակոյթի դուռնեղորէն դուրսուելը տեղի են ունենում նաև այն քաղաքական ու տնտեսական ուժերի ազդեցութեան տակ, որոնցից Կ. Մարքսըն ու մարքսիստները հակառակ հետևանքներ էին օպտուստ:

Սակայն, սա պատմական կեանքի մի դէմքն է — անհատականացնող դէմքը: Ինքնահատատաող ե անհատականացող ազգերը չեն մեկուսանում, չեն ամփոփում իրենց իրենց մէջ, այլ աշխատակցում են իրար հետ, ազգում են իրար վրա ե ազգում են իրարից: Ստեղծուում է միջազգայնութիւնը, որ գուրչնթաց է աղբայնութեանը: Զկայ մի դարաշրջան, որ ազգերի մէջ փոխադարձ կապ, ազդեցութիւն, խաղաղ ու ռազմական յարաբերութիւն եղած չլինի: Նորագոյն շրջանում միջազգայնութիւնը դառնում է աւելի ներոյժ, աւելի ազդեցիկ. պատմութիւնը դառնում է համաշխարհային պատմութիւն:

Նորագոյն միջազգայնութեան ընտրուիչ կողմն այն է, որ նա զօրւում է զարի լուսադոյն դադափարների՝ ընկերվարութեան ե ուսմիվարութեան հետ ե ձգտում է դառնալ համերաշխութեան, գործակցութեան ե յառաջդիմութեան արտայայտութիւն:

Սակայն, Մարքսն ու մարքսիստները այս ինչդրում ես իւրաքայնով տեսակէտ երևան բերին: Ելակէտ ունենալով քաղաքական ու տնտեսական կենտրոնացման ուսմունքը՝ նրանք յանդեցին, եթէ կարելի է այսպէս ասել, «ազգութիւնների կենտրոնացման» ուսմունքին, կամ «մշակոյթի մոնիզմին»: Բայց սա նշանակում է նաև, որ ազգութիւնը հակադրւում է միջազգայնութեան, որ սրանք պատմական կեանքի գարգացման տարբեր էտապներ են համարւում ե անյարիք իրար: Մարքսիստների մօտ միջազգայնութիւնը հաստատարող է դառնում ապազգայնութեան: Ըստ այսմ փոքր ազգերը դրամատիորութեան կենտրոնացման պրոցեսում կորցնում են իրենց առանձնատկութիւնները. կոր-

ցնում են լեզուն, ձուլուում մեծերի մէջ, ապազգայնանում: Դրամատիորութիւնը ապազգայնացնող ոյժ ունի: Արդեօք այդպէս է:

Մենք արդէն տեսնք այդ տեսակէտի սխալ լինելը պատմութեան տեսնների տեսակէտից: Այժմ տեսնենք թէ տրամաբանական ինչ հետևանքների է հասնում Մարքսի այդ ուսմունքը:

Ենթադրենք, թէ ազգութեանց ձուլումն անխուսափելի է: Սակայն, մի ազգ ձուլուում է որեէ որոշ ազգութեան հետ: Ապազգայնանալ նշանակում է կապւած չզգալ իրեն ծնող ազգային հաւաքականութեան հետ, չզգալ իրեն ազգային մարմնի անդամ, չհամարել իրեն մի որոշ մշակոյթային հաւաքականութեան մասնիկը, կապւած չլինել իր ազգութեան հետ լեզով, հոգով, ապրումներով, պատմական անցեցումով: Ապազգայնացող կախւած չէ մնում օդի մէջ. մէկ ազգային մարմնից կտրելով, նա պիտի մասնիկը դառնայ մէկ ուրիշ հասարակական համակցութեան, որ նորէն ազգային է: Մշակոյթային ապազգայնացումն կատարւում է միշտ որեէ ազգութեան օգտին, որն ընդհանուր ամումար մշակոյթով աւելի բարձր է, քաղաքական ու տնտեսական տեսակէտից աւելի զօրաւոր: Այսպիսով, ապազգայնացումը տեղի է ունենում ազգայնանալու համար. այլ ինչդիր է, թէ ինչպիսի «ազգային» է դառնում նա այս նոր միջազգայնութիւն: Ու երբ ասում ենք, որ տնտեսութիւնը ե քաղաքականութիւնը առաջ են բերում «մշակոյթի մոնիզմ» — սրա իրական իմաստն այն է, որ ազգութիւնների ապազգայնացումն տեղի է ունենում յօշոտում մէկ կամ մի քանի զօրաւոր ազգութեանց: Ուրեմն, դարձեալ ազգութիւնն է, որ մնում է, դարձեալ յանուն ազգութեան է, որ կատարւում է ապազգայնացումը: Նա է, որ մնում է, որպէս փաստ, որպէս մնալուն իրականութիւն:

Ապազգայնացումն ապազգայնակարգը ես մենք չենք պատկերացնում ազգային ձեւից դուրս: Եւ ընդհանրապէս հասարակական կեանքը միշտ ազգային-հասարակական կեանք է: Մարքսիզմի համար այդպէս չէ հասարակութիւն, հասարակական կեանք ասածը նրա համար վերացական գաղափար է, դասակարգային-արտադրական յարաբերութիւնը, ազգութեան մէջ է տեղի ունենում: Հասարակութիւնը այս կամ այն ազգի հասարակութիւն է: Եւ ապազգայն պատմութիւնն էլ գործ պիտի ունենայ այդ ազգային հասարակութիւնների հետ:

Կ.Մարքսը ե մարքսիստները նոր սկզբունք չյայտնաբերեցին ազգային հարցի նկատմամբ: Բուրժուական հասարակակարգում տեղի ունեցող ապազգայնացման պրոցեսը՝ մի դրական փաստ համարելով՝ նրան տեցին մնալուն ընդդէմ ե ընկերվարական հանրակարգն էլ ըմբռնեցին որպէս այդ երևույթի աւելի լայն ու կատարեալ արտայայտութիւնը: Դրա համար էլ նրանց ընկերվարութիւնը հանդէս չբերեց նոր սկզբունք, քան այն ձուլող, լուծող ազգային քաղաքականութիւնը, որ նա տեսնում էր իր ժամանակում:

Եթէ մարքսիզմի դ վերջու չի ժխտում, որ ազգութիւնների ձուլումն էլ կատարւում է յանուն ազգութեան, թող դա լինի մէկ, համայնապարփակ ազգ, ապա կը նշանակէ, որ նա միայն փոքր ազգերի գոյութեան հակառակ է ե ոչ թէ ընդհանրապէս ազգութեան: Եթէ դա ճիշտ է, ապա ուրեմն նրա իղէալը

մնում է մեծ պետութիւնը, մեծ ազգ-պետութիւնը: Այս տեսակետից էլ Կ. Մարքսի անունը չի կարող դրուել ազգութիւնների, յատկապէս փոքր ազգերի իրաւունքների պաշտպան պայծառ անունների շարքում ու նա չի կարող տեղ գրուել ազգերի ազատութեան համար մարտնչող անշահահնդէր գործիչների մէջ:

Այս բոլորից պիտի եզրակացնենք, որ միջազգայնութեան ինդիւրը մեզ մօտ այլ իմաստ է ստանում, քան մարքսիստների մօտ: Միջազգայնութիւնը մենք չենք հակադրում ազգութեան, և ոչ էլ ազգութիւնը նոյնացնում ենք միջազգայնութեան հետ: Սրանք երկու տարրեր զազափարնեք են, որոնք իրար տեղը բռնել չեն կարող: Միջազգայնութիւնը է մշակոյթային աշխատակցութիւն, սակ է, որ նա ուրոյն, ազատ ազգային մշակոյթների գործակցութիւնն է: Միջազգային մշակոյթ դոյութիւն չունի: Միջազգայնութիւնը մշակոյթի արբիւր չէ. որպէս այդպիսին հանդիսանում է ազգութիւնը:

Միջազգայնութիւնը մշակոյթի առարկայցման ձևը չէ: Նա հետեանք է ազգային մշակոյթների յարակցութեան, մօտիկութեան, գործակցութեան: Միջազգայնութիւնը մշակոյթի միջազգայնօրէն կազմակերպելն է: Ժամանակակից կեանքը և քաղաքակրթական արժէքները կազմակերպում են միջազգայնօրէն: Կան բազմաթիւ միջազգային կազմակերպութիւններ, որոնց դոյութիւնը կախած է իրենց հետապնդած նպատակներից: Միջազգայնութիւնը որպէս մշակոյթի կազմակերպութիւն կարող է լինել, և է՝ մեր նպատակը — այդ տեսակետից մենք համոզուած միջազգայնականներ ենք. սակայն, միջազգայնութիւնը որպէս մշակոյթի առարկայցման ձև — մենք ընդունել չենք կարող:

Մշակոյթը միշտ ազգային է, նրա առարկայացումը ազգային ձև է մէջ է տեղի ունենում: Այս ըմբռնումով ազգութիւնը միջազգայնութեան հակադրելը անհեթեթ բան է. նրանք մշակոյթի տարրեր աստիճանները չեն, ինչպէս յաճախ մարքսիստների մօտ հանդէս է գալիս, այլ միաժամանակ դոյութիւն ունեցող երկու սկզբունքներ, որոնք իրար լրացնում են: Մէկը վերաբերում է մշակոյթին, միւրը նրա կազմակերպութեան: Կազմակերպութիւնն արդէն ենթադրում է կազմակերպչութիւնը՝ և չի ժխտում այն, չի բռնում նրա տեղը: Միջազգայնութիւնն է անտեսական, քաղաքական և հոգեւոր մշակոյթի գործակցութիւնը: Եւ ընկերվարական միջազգայնականն էլ ոչ այլ ինչ է, եթէ ոչ աշխատակցութիւնը գիտակցութեան հասած աշխատուորութեան, որ ձգտում է ազգային հաւաքականութեան մէջ լինել մշակոյթի ստեղծողն ու պայելողը և որ իր նպատակներին հասնելու համար կազմակերպում է միջազգայնօրէն: Մշակոյթի միջազգայնօրէն կազմա-

կերպւելն է, որ առիթ է տալիս թիրխմացութեան:

Մշակոյթների միջազգայնացման հետեանքով, մարդիկ սովորում են մէկից աւելի լեզուներ: Սակայն, պատմական իրաւարձութիւններից ցոյց են տալիս, որ մեծ ու զարգացած լեզուներն ու մշակոյթները միջազգային դիրք են ստանում ոչ թէ ի հաշիւ փոքր ազգերի լեզուի ու մշակոյթի, այլ նրանց կողքին են մնում, յաճախ գորավիզ լինելով նրանց ազգային վերադարձօնքին: Ոչ մի փաստ, ոչ մէկ սպացոյց չկայ, որ բարձր մշակոյթը աւելորդ դարձնէր փոքր ազգերի լեզուն և ստեղծագործութեան կարողութիւնը: Ընդհակառակն, փոքր ազգերի դեղեցիկ տնակը կառուցում է մեծ ազգերի պայտանների կողքին: Եւ յաճախ, փոքր ազգերի աւելի են որակաւորում, քան յայտնա կոչւած մեծերը: Պատմութիւնը բարձրաթիւ օրինակներ է տալիս որպէս այսցոյց այդ մտքի: Ճիշտ է մի քանի լեզուներ այժմ իսկ դառնում են միջազգային. սակայն, դրա հետ միասին՝ մեր դեմոկրատիկ դարաշրջանում փոքր ազգերի լեզուները պահում են իրենց դոյութիւնը և դառնում են այն միակ միջոցը, որով ազգի անդամները վերահասու են լինում ժամանակակից քաղաքակրթութեան բարիքներին:

Լեզուի արժէքը՝ նրա՝ ազգային ընդհանրութեան ծառայելու մէջն է: Եթէ նա արտայայտում է ազգային հաւաքականութեան հոգին, դառնում է ստեղծագործութեան աղբիւր, կուտակում է իր մէջ այն լաւագոյնը, ինչ որ ստեղծել է ազգային միաւորը՝ սերունդ առ սերունդ, նշանակում է այդ լեզուն ունի կենսունակութիւն, կապւած է անքակտելի կապերով նրանով խօսող մարդկանց հետ: Միայն պէտք է պայմաններ ստեղծել նրա ազատ զարգացման համար: Լեզուն ազգութեան հաւաքման, միացման կենտրոնն է:

Լեզուի ազգայնացման և ազգի ուսմակալարացման պրոցեսը տեղի է ունենում մի այնպիսի ժամանակ, որ իրօք կարելի է անանել միջազգայնութեան ուժերի և զաղափարների դարաշրջան: Սա ցոյց է տալիս, թէ որքան սխալ է ու միակողմանի Կ. Մարքսի կենտրոնացման ուսմունքը և Կ. Կառուցելու նրանից հանած «մշակոյթի մոնիթինգ» եզրակացութիւնը:

Մշակոյթը իր էութեամբ և հիմքով մարդկային է, կապւած է մարդու զաղափարի հետ. մարդն է, որ մշակում է, ստեղծում է նոր բան. սակայն, մարդը սպրում է ու ստեղծում է ազգային միջավայրում ու կրում է նրա կնիքը: Մարդու ստեղծագործութիւնը ազգային ձևով է հանդէս գալիս: Իր հիմքով մարդկային՝ մշակոյթը արտայայտութեամբ արգային է, կազմակերպութեամբ միջազգային է: Այս երեք պարագաները չպէտք է մոռացութեան տալ և չպէտք է չփոթել:

Գ. ԳԻՒՋԱԼԱՆՆ

ԻՆՏԵՐՆԱՍԻՈՆԱԼԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ

Իր հիմնադրութիւնից ի վեր, Ընկերվարական Աշխատաւորական Ինտերնասիոնալը երբեք համաշխարհային համագումար է ունեցել— որոնցից իւրաքանչիւրը ընկերվարական մտքի և գործի մի նոր հանգրան է յատկանշում:

Առաջին համագումարը, որ կայացաւ 1923ի Մայիսին Համբուրգում, Բ-րդ Ինտերնասիոնալի փլատակների վրա բարձրացած նոր միջազգային կազմակերպութեան հիմնադիր ժողովն էր հանդիսանում:

Չափազանց ծանր խնդիրների առաջ էր կանգնած այս ժողովը: Նա պէտք է վերջնականապէս գոցէր այն ահաւոր ճեղքածքները, որ ընկերվարական կուսակցութիւնների մէջ և նրանց միջև առաջ էր բերել չորս տարւայ արիւնահեղ պատերազմը: Այս խնդրի դժարութեան մասին դադարաւ կազմելու համար՝ բաւական է յիշել, որ, ժողովից 2-3 տարի առաջ, բելգիական և Ֆրանսական կուսակցութիւնները չէին ուզում գերմանական սոցիալ-դեմոկրատ պարագլուխների հետ միեւնոյն սեպանի շուրջը նստել մինչև իսկ հաշտութեան դաժնագրերի մասին ընդհանուր ընկերվարական լեզու գտնելու համար: Պատկերը լրացնելու համար, պէտք է յիշել նաև, մի քանի ազգեցիկ կուսակցութիւններ, ինչպէս օրինակ գերմանական կուսակցութիւնը, Համբուրգի Համագումարի նախորեակին էին միայն յաղթահարել իրենց ներքին պառակտումները և դեռ ևս հոգեբանական ու կազմակերպչական շտապ անհարթութիւններ ունէին իրենց ներսում՝ որպէսզի կարողանային Համագումարին ներկայանալ միաձուլ տրամադրութիւններով և կազմակերպութեամբ:

Այժմ ճեղքածները գոցելու հետ միասին, Համբուրգի Համագումարը պէտք է նոր Ինտերնասիոնալի կազմակերպութեան սկզբունքներն ու կանոնները մշակէր: Սա էլ դիրքին խնդիրներից էր, որովհետև տեսակէտները նոր Ինտերնասիոնալի իրաւասութիւնների մասին շտապ տարբերում էին միմիանցից: Հին դեկաւարները, որոնք Բ-րդ Ինտերնասիոնալի աւանդութիւններով էին սնւած, ցանկանում էին, որ նորը ևս ընկերվարական պայքարի սկզբունքները պարզաբանող մի հաստատութիւն լինի՝ առանց իր որոշումները կուսակցութիւններին կազմակերպօրէն պարտադրելու իրաւասութեան իսկ աւելի՛ երկտարադիւրը, մեծապէս ազգւած Գ-րդ կամ Կոմունիստական Ինտերնասիոնալի օրինակից, կամե՞նում էին ընկերվարական միջազգային պայքարի դեկաւարութիւնը կենտրոնացնել վերակազմաւող Ինտերնասիոնալի մէջ՝ կուսակցութիւնները դարձնելով սոսկ գործադիր մարմիններ համապատասխան երկրներում: Այս երկու հակոտնեայ ձգտումների միջև, Համբուրգի Համագումարը պէտք է որոշէր մի միջին դիմ, որպէսզի մի կողմից՝ նոր Ինտերնասիոնալը նախորդի պէս, «հոգեւոր խորհրդածութիւնների» ժամադրաւայր չըլաւանոր, այլ ընկերվարական գործի մի օրգան, իսկ միւս կողմից՝ սեղանակա կամ ազգային կուսակցութիւնները անգամ գործակատարների վիճակի մէջ չըլըրէին:

Վերջնապէս՝ Համբուրգի Համագումարը պէտք է ուղեղիմ մշակէր պատերազմից մնացած քաղաքական և տնտեսական հարցերը հաշիւարգարի ենթարկելու համար: Այս հարցերը միջաւաննի պէս ծանրացած էին մնում մարդկութեան վրա, շնայած որ պատերազմը չորս տարուց ի վեր դադարած էր: Հայտնութեան դաշնագրերը վաղուց ստորագրւած էին, խորհրդածողով խորհրդածողովի էր յաղորդւում, ամենահաշակաւոր էքսպերտները գլուխ էին կոտրում, Ալգերի Դաշնակցութիւնը իր ամբողջ հեղինակութիւնը կռիւ մէջ էր նետել — բայց կարելի չէր լինում վերացնել պատերազմող կողմերի, մասնաւորապէս Տրանսայի ու Գերմանիայի միջև յարատեղ անվտանգութիւնն ու ներհակութիւնները, որպէսզի խաղաղութեան սայլը տեղից չարժէր: Իմ խնդրից դուրս է վերլուծել Համագումարի շրջահայեան և իմաստուն որոշումները այս հաշիւարգարի մասին. այլապէս՝ հեշտ է ապացուցանել, որ 1923ից ի վեր, աշխարհի խաղաղացման համար կատարւած բոլոր իրակամ փայլերը այս որոշումների աղղեցութիւնն են կրում իրենց վրա, աւելի կամ պակաս չափով:

Մարսէլի Համագումարին, որ կայացաւ 1925ի ամառը, օրակարգի մեկն էր կազմում այսպէս կոչւած Արեւելեան Եւրոպայի խնդիրը: Մի կողմից ուսուական բուլշեւիզմը յարածին թափով շարունակուած էր զրնկերվարութիւն կառուցանելու իր խօսքով վերածել, միւս կողմից բուլշեւիկան բոնաստիլութեան նուկ ընկած ազգերը լարում էին իրենց ճիւղերը վայրագ լուծը թօթափելու համար, իսկ երրորդ կողմից՝ Եւրոպայի իմպերիալիստ պետութիւնները գաղտնի և յայտնի ինտերմանսիոնների (միջամտութիւն) ծրագրերն էին որոճում Ո. Հ. Միութիւնը տնտեսական պաշարման և նոյնիսկ քաղաքական փլուզման ենթարկելու համար:

Այս գոյալիճակը, բացի այն, որ պատերազմական վտանգի տագմէն էր կրում իր մէջ, նաև պատճառ էր հանդիսանում, որ ընկերվարական կուսակցութիւնները հակոտնեայ տրամադրութիւնների մէջ ընկնէն թէ՛ Ո. Հ. Միութեան, թէ՛ հակախորհրդային ազգային շարժումների և թէ՛ նոյնիսկ արտաքին միջամտութեան հարցերում:

Մարսէլի Համագումարը եկաւ վերջ տալու այս կարգի գարտուղութիւններին: Նա յայտարարեց, որ վճռականապէս դժմ է աշխարհակալ պետութիւնների միջամտութիւններին Ո. Հ. Միութեան զործերում՝ աղբաղարարելով ո՛ւմ հարկն է, որ այս միջամտութիւններին, մասնաւոր էթէ՛ նրանք դիմակալ բնոյթ կրեն, ինքը պէտք է հակազդէ իր տրամադրութեան տակ գտնւած բոլոր միջոցներով: Նա յայտարարեց նաև, որ մինչև բուլշեւիկները ձեռք չբռնեն «ընկերվարութիւն կառուցանելու» յիմարական փորձերից և, մասնաւորապէս, մինչև նրանք չհրաժարեն իրենց վանդալական դիկտատուրայից և տեղորոշեցին՝ անկարելի է լինելու Արևելեան Եւրոպան դուրս բերել այն քաղաքական և տնտեսական փակուղից, որ մշտական առիթ է հանա

դիտանում ամէն տեսակի խռովութիւնների և դաւերի համար: Վերջապէս, Համագումարը, աւելի՛ ևս մշակելով ազգային ինքնորոշման իրաւունքի սկզբունքները, որոնք ուրազածուած էին արդէն Համբուրգի Հիմնադիր Ժողովի Ժամանակ, յայտարարեց, որ բուլղարիկեան իմպերիալիզմի կողմից նաճուած Հայաստանը, Վրաստանը և Ուկրաինիան անկապտելի իրաւունք ունին պահանջելու իրենց ազգային անկախութեան վերականգնումը և բուլղարիկները, այս երկրներին պետական անկախութիւնը ոտնահարելով, ինչպէս և միւս ազգերի ինքնորոշման իրաւունքը արհամարհելով՝ պատճառ են դառնում բազմապիսի ազգային պողտիւմների, որոնք կարող են մի նոր պատերազմական արհաւիրքի մատնել աշխարհը:

Այս որոշումները եթէ չկարողացան բուլղարիկներին խելք բերել, անշուշտ զսպիչ դեր ունեցան եւրոպական իմպերիալիստների արկածախնդրական ակորթակները վրա: Նրաք խիստ մեծ դեր կատարեցին և այն տեսակէտից, որ վերջ տին ընկերավարական կուսակցութիւններին մէջ նկատուած տարրած և հակասեանյ վերաբերմունքներին Արեւելեան Եւրոպայի ինդիւստրիալ:

Ինչ վերաբերում է Բրիտանի Համագումարին՝ (1928թ.) նրա զբաղմունքներն անցան «գաղութային քաղաքականութեան» նշանակի տակ: Մարտի կռիւնները սպանիացիներին և Ֆրանսացիներին դէմ, սիւրիական զորուկներին ապստամբութիւնը, Հնդկաչին յեղափոխական շարժումները, անգլիական Հնդկաստանում ծայր տուած ազգային զարթոնքը ևն ևն մի-մի դրդապատճառ էին հանդիսանում, որ Բ.Ա.Ինտերնասիոնալը դիրք ճշտէ գաղութային Ժողովուրդների ազատագրական ձգտումներին հանդէպ, ինչպէս և աշխարհակալ պետութիւնների գաղութային քաղաքականութեան հանդէպ:

Եւ Իրիւսելի Համագումարը, հաւատարապէս հետևող մնալով թէ՛ նախկին, Բ-րդ Ինտերնասիոնալի անուարբեր կեցածքից դէպի այսօրինակ հարցերը և թէ՛ Գ-րդ Ինտերնասիոնալի ամբոխավար կարգախօսքերից՝ դորձնական քաղաքականութեան ուղեգիծ մշակեց ընկերավարական կուսակցութիւնների համար՝ հիմք ունենալով ազգերի ինքնորոշման սկզբունքը և հաշի առնելով գաղութային Ժողովուրդների հասունութեան չափը՝ ազգային-քաղաքական անկախ կեանքով ապրելու համար:

Այսպիսով, տևուած ենք, որ Ընկերավարական Աշխատաւորական Ինտերնասիոնալի նախկին Համագումարումարերից իւրաքանչիւրը մի առանձին նշանակի

տակ է հանդէս դալիս միջազգային ընկերավարական շարժման պատմութեան մէջ:

Բացառութիւն չէր կարող կազմել, այս տեսակէտից և Վեննայի Համագումարը, որ մի քանի օր առաջ աւարտեց իր աշխատանքը:

Գործադիր կոմիտէի կողմից նախապէս պատրաստուած օրակարգի մէջ արտոյ դիրք ունէր ընդհանուր դինաթափութեան և Համաշխարհային տնտեսական տաղանայի հարցը: Առաջինը՝ որովհետև Ազգերի Գաշնակցութեան մէջ տարիներ առաջ ծրագրուած Զինաթափութեան Պորճրաժողովը պիտի գումարել յալորդ տարւայ սկզբներին. հետևաբար՝ Ինտերնասիոնալը պէտք է ուղեգիծ և միջոցներ մշակէր իր տեսակէտները այդ Պորճրաժողովի մէջ արժեցնելու համար: Երկրորդը՝ որովհետև տնտեսական տաղանայի հետևանքով գործադրութիւնը սպանալից հանգամանք է առել բազմաթիւ երկրներում:

Սակայն, վերջին պահին հրապարակ եկաւ մի խնդիր, որ երկրորդական դժերի վրա դրաւ մնացած բոլորը: Պօքը վերաբերում է Գերմանիայի դրամական ճգնաժամին, որ յուլիսի կէսերին ահաւոր չափերի հասաւ:

Եթէ այս ճգնաժամը օր-առօր չլարմանէր՝ Գերմանիայի սնանկութիւնն ու տնտեսական փլուզումն անխտափելի պիտի դառնային՝ քաղաքացիական կռուիւնների և միջուկի դէպտերազմի արհաւիրքներին մատնելով ոչ միայն միջին և արեւելեան Եւրոպան, այլ թերեւ և ամբողջ աշխարհը:

Այս սոսկալի հետանկարի առջև դրած՝ ընկերավարական կուսակցութիւնները ընկալանաբար պէտք է որ իրենց ամենալիսաւոր ուղարկութիւնը կենտրոնացնէին «գերմանական ինդիւստրիալ» վրա: Սրա համար էլ, Համագումարի նախօրեակին նիստի հրաւիրուած Գործադիր կոմիտէն, Բիւրոյի առաջարկով փոփոխութեան ենթարկեց Համագումարի օրակարգի նախագիծն. այնպէս, որ յիշեալ ինդիւրը քաղաքական բանաձեւի յիւթը՝ հետևաբար, և Համագումարի գրադումներին առանցքը կազմէր:

Այդպէս էլ եղաւ: Համագումարը ոչ մի խնդրով այնպէս մտահոգուած չէր, որքան Գերմանիայի դրամական ճգնաժամով: Նրա բանաձեւն այս մասին խիստ լուրջ ազդարարութիւն է հանդիսանում ամբողջ քաղաքակրթ աշխարհին վերահաս քաղաքական կռիւնների մասին, որոնք արդէն բարխուծ են այդ աշխարհի դրոները:

ՊԱՏԳԱՄԱՌ

Թ Ի Ի Ր Ք Ի Ո Յ Ը Ո Ւ Ր Զ

Ազատ խօսքի շրջանները մեղրալուսնի նման եկած ու անցած են Թուրքիայ մէջ:

Երբ Թուրքը Հլր արթնացած տակաւին և սուլթանական իշխանութիւնը ոչիսլամները կը համարէր Ժառանգական աւանդ, երկիր ատեն տուած է անդիր ազատութիւն մը՝ միարժէն անցածը գրելու: Դեռ 1840-ին, «Հայաստան» աւանդով թիւթ է հրատարակուած

Պոլսոյ մէջ, և այնուհետև եղած հրատարակութիւններն ալ, նոյնիսկ հայաստա թուրքերէն, միշտ կրցած են խօսել մեր ազգային-պատմական փառքերու, երկրի և աշխարհադրութեան, քաղաքական ծրագրիներու և երադներու մասին:

Հայ Ժողովուրդի անասան հաւատարմութիւնն էր որ թոյլ կուտար այս ազատութիւնը, թէ վարել իշխա-

նութեան ինքնապատճառութիւնը: Թերևս երկուքն ալ: Հարցը այն է որ, Թուրքիան զանի ծօնեցաւ Եւրոպային, և զանի հպատակ ժողովուրդները դուրս վերցուցին, այնքան չըբէր հիւշ դարձաւ մամուլը: Իսկ համետեան վերջին շրջանին, ճշմարիտ արկածանկարներով մըն էր լրագրական ասպարէզը, նոյնիսկ դասագիրքի հրատարակութիւնը: Կարծիր Սուլթանը հպատակ ազգերուն չափ, եթէ ոչ աւելի, վախ ունէր նաև իր հարազատ ժողովուրդէն: Եւ ինչ որ կը պատմէ Ռուսիկանական նախկին նախարար Նազըմ փաշան իր Յուշերուն մէջը, աղօտ պատկերն է միայն ամբողջ ողբերգութեան:

Հայրենական դէպքերու դարգացման հետ զուգընթաց, գորգացաւ դրաքննական հայածանքը, և թերթերը դարձան «չտնտնարան պիտանի և անպիտան գիտելեաց», սուլթանական դեկոյցներով և փորաբանական մրցակցութեամբ: Ոչ միայն գրութիւններն էին որ կը հարածէին, կը մկրատէին, այլ և բառերն ու տառերը: Բառեր կային որ չէին կրնար սպազորութեան յանձնելի առանց չեղորացուցիչ անականի մը: «Յառաջ դիմութիւնը իր դիտուել պիտի ունենար անպատճառ «կրթական»ը կամ «գիտական»ը կամ «առևտրական»ը: Եւ անպատճառ չարժուած»: Օձիբը չէին կրնար արդտան, եթէ Մուշէն, Վանէն, առ հասարակ «արեւելեան նահանգներէն» եկած լուրերու և թղթակցութիւններու մէջը, «գործեր», «խնդիրներ» բառերը չբարեխառնէին «եկեղեցական», «կրթական» կամ «կրօնական» անականներով: Ատեն եղաւ որ «ազգային» բառն ալ խոշորացոյցով սկսան փնտռել, և «Ազգային Լուրեր»-ու խորագիրը դարձաւ «Պատրիարքարանի Լուրեր» կամ «Եկեղեցական Լուրեր»:

Օսմ. Սահմանադրութիւնը բացաւ լեզուները: Կարելի էր ազատ գրել մինչև որոշ ստեն մը, իսկ հետզհետէ դրաքննութեան փոխարէն, իր թաթն երկարել սկսաւ Պատրիարքական Ատենը կամ գիւղերական իշխանութիւնը: Սովորական դարձան թերթերու խափանումը՝ «խոտլայոյց» հրատարակութեան պատրաստով կամ «տարբերու համերաշխութիւնը» խանդարած ըլլալու ամբաստանութեամբ: Իսկ բուն թրքական ճակատին վրա, Իթթիհատին ընդգիծալի Թուրքերը, զանի մը խմբագիրներ, ողջունեցան դաւադիր հնդկակով: Գիտենք թէ ի՞նչպէս փակեցաւ Հայերու անշուք, երևութական բարեացակամութիւն մը յետոյ...

Ձկնազարարին, Թուրքերու սեւ օրն էր արդէն, և դաշնակից իշխանութիւնները լրացուցին պակասը: Մեղրապետինը հաղի անցած, Հաստատուեցաւ զատութեւ դրաքննութիւն մը, — Փրանսիական, անկլիական, իտալական և թրքական: Իւրաքանչիւրը ո՞ր և է գրութիւն կը թլգիտուէր համաձայն իր հայեցողութեան: Բանի կը գործարար Մ. Գեմալի ազգային շարժումը, այնքան ամօր կը իջնէր այս միջազգային դրաքննութեան թաթը, այնքան կը բարձրանար Թուրքերու ճայ: Եւ Եւ եղաւ որ Հաճընի, Մարաշի, Ուրֆայի շարժերուն լուրերը շարժեցան անպէս ինչպէս եթէ Թուրքը ինքն ըլլար անէրն ու տիրական Պոստլ մէջը: Իսկ Փոքր Ասիոյ սարսափները հազիւ կարելի եղաւ արձանագրել, զանի մը տող մտտուելով պարսպ էջերու վրա:

Քեմալական իշխանութեան Հաստատումէն յետոյ, սարսափը բռնած էր բոլորին գրիչն ու լեզուն: Շուտով

Ննջեցաւ դրաքննութիւնը: Բայց դրաքննութիւնէն աւելի ծանր մղձաւանջ մը կը աւառանէր օդին մէջ: Գրե՞լ թէ չգրե՞լ... Հայա եթէ...

Եւ երբ, ժամանակի ընթացքին, մարդիկ վարժեցան զիչ մը բաց խօսելու, երբ անցան աննախընթաց յաղթանակին գինարուքը, վրա հասան Շէյխ Սալիտի պատաստութիւնը և Իզմիրի դաւադրութիւնը (1925-26): Պոստլ խմբագիր պէյ-էֆէնտիները իրենք գիրքեր գրան Պարբերդի բանտը և մինչև Տիպրասակերտ: Ամենէն զօրաւորն իսկ, Հիւսէյին Ճահիտ, որ ամբողջ սերունդ մը հասցուցած է, հաղիւ ազատեցաւ խեղդկապէն: Նախ աքսոր և յետոյ ներում, — անդամ մըն ալ գրիչը ձեռք չառնելու պայմանով:

Անդորրութեան ամբարակող մաս — Անկախութեան ատենները — չըջանն էր, և մարդիկ ստիպեցան համրել ու մարդի բառերը: Երբ վերահաստատուեցաւ ընականտն յիճակը, և միեւնոյն ստեն չեջուեցան տնտեսական տաքնապը, նորէն ճլորորիլ սկսաւ թուրք մամուլը: 1929ին դժգոհութեան հով մը կը փչէր բուսական զգալի: Իրարմէ ոյժ առին զանազան թերթեր, — «Ճարբն» (Արիֆ Օրուճ) որ նիպակ կը ճօճէր Լամէթ փաշայի դէմ եւ դաճիճիկ հրատարականը կը պահանջէր. «Սօք Մէօք» (Ապտիլ Գաֆիր Քեմալի պէյ, փախտական), որ մեղադրանքներ կարողէր նոյնիսկ Մ. Գեմալի դէմ: Ուրիչ թերթեր ալ, Պոլիս կամ Իզմիր, կը փորձէին թարգման հանդիսանալ զանազան ցաւերու:

Եւ ահա Ֆէթհի պէյի հոչակաւոր եղերազաւեջող (1930 օգոստոս): Հաղիւ հարեւր օր տեւեց Մ. Գեմալի արքած այս դաւը — ճշմարիտ աքլորամար մը Լամէթի և էթհի միջև — բայց առաջին օրէն իսկ իրարակեց թուրքերը, անուրի վայնասուն մը արձակելով տայով թուրք մամուլի էջերէն, լսարաններու բեմերէն և նոյնիսկ փողոցներու մէջը:

Փոթորիկը անցաւ Ֆէթհի անփառունակ նահանջով, Ազատ Հանրապետական Կուսակցութեան լուծումով, և թերթերը սկսան իրենց հին երգը երգել: Եկաւ Մէնէմէնը (1930 դեկտ.): Նորէն փոթորիկ, նորէն փոխադարձ ամբաստանութիւններ ու մասնութիւններ: Շատեր ինկան իրենց պատւանդանէն, ինչպէս Ֆէթհի անկաման օրերուն: Կասկածելիներուն գլուխը դաւեցաւ Բազուի տիրահաշակ Աղաթեւը — Աղա Օղլու Ահմէտ, որ թուրանականութեան ամենէն թթու աւետարանիչն էր 1908էն ի վեր, Թուրքերոյ մէջ:

Ու վերջապէս, զանի մը ամիս առաջ, իբրև հետեւանք Ազգ. Մեծ Ժողովի «Նոր ընտրութեանց», նորէն թանձր թոյն մը սկսաւ հոսիլ մամուլին մէջ: Երկու աքլորներ, զեմալական խուժանաժար Եօնուա Նատին և նախկին հրոսապետ Արիֆ Օրուճ պէյը զարբէլի պայքար մը բացին իրարու դէմ, իրար խոտնելով «դաւանան»ը, «չուն»ը, «դաստակապորտ»ը, «աւազակ»ը, «հէրիֆ»ը, և ուրիչ ինչ որ կարելի է գտնել թրքական բառարանին մէջ:

Հեռանքը, — խնդիրը փոխադրեցաւ Ազգ. Մեծ Ժողով: Ահուրի գոտուճ-գոտուճ: Սպանախիքներ՝ շանսատակ ընելու «Հանրապետութեան թշնամիներ»: Եւ այսքան ազատութիւն շատ համարելով, մշակեցաւ մամուլի նոր օրէնք մը, որուն հետեւանքով ոչ միայն ինքնին կը դադարէին կարգ մը թերթեր, այլ և շատ մը

խմբագրները արդէն կոտորած են իրենց գրիչները, յօդ-
ւած գրելու իսկ իրաւունքը չունենալով:

Նոր օրէնքին տրամադրութեամբ, թերթի տէր և
խմբագրական տնօրէն չեն կրնար ըլլալ անոնք որ գրաւ-
ման շրջանին Հրատարակութիւններ ըրած են ի նպաստ
թշնամիին: Խմբագիր չեն կրնար ըլլալ անոնք որ դա-
սակալարուած են այս կամ այն յանդանձրով: Կարձուած է
ցանկը զինտաղադրել շրջանին թերթ հանող կամ յօդ-
ւած գրող անձերու — ինչ ազդի ալ պատկանին — և
քննութիւն կը կատարուի թէ անոնք դաւաճանա՞ծ են
ազգային (թուրք) շահերուն և զգացումներուն: Անոնք
որ «հոլճի խայթ» ունին, լուռ ու մունջ տեղի կուտան,
իսկ անոնք որ կը կարծեն պարտկել իրենց հին «մեղ-
քերը», գրիչները բուն շունին մատնիչներու վախէն:
Թրքական այս բանուկ արհեստը, մատնութիւնը գոր-
ծարարարեւտի վերածեցին բոլշևիկները, նոր ասպի-
րէզ կը գտնէ այստեղ ալ, ինչպէս «լքեալ» գոյքերու
աւարին մէջ:

Օրէնքի տրամադրութեամբ, թերթի մը տէրը և
խմբագրական ջարտուղարը պէտք է վկայուած ըլլան
բարձրագոյն վարժարանէ մը: Պէտք է պետական պաշ-
տօնեայ ըլլան: Առաջինները 25, իսկ վերջինները 30
տարեկանէն պակաս չեն կրնար ըլլալ: Անփոփոխ կը
պահուի 500 ոսկիի աւանդը (Հանդէսներու Համար 200
ոսկի): Ստորագրուած յօդաձեւներու և պատանկարներու
հերինակներն ալ թղթակցներուն մէջ պատասխանա-
տու են իրենց Հրատարակութիւններուն Համար, ինչ-
պէս թերթին սեփականատէրն ու խմբագրական ջար-
տուղարը: (Բոլորովին նորութիւն է այս տրամադրու-
թիւնը: Առջև պատասխանատու կը Համարէր միայն
պատ. տնօրէնը (gérant): Հրատարակիչները պար-
տաւոր են դատաւորին յայտնել կեղծանուններուն ինք-
նութիւնը: (Նորութիւն մը այս ալ): Արդիււած է ո՞ր
և է գրութիւն Հրատարակի կայս. գերպատասխի ան-
դամներէն կամ 1500ոց սեւ ցանկին: Բոլոր թերթները
պարտաւոր են ոտսիկանութեան Հաղորդել իրենց խմբ-
ագրիչներուն և լրագրիչներուն ցանկը: (Դարձեալ նորու-
թիւն): Թղթակիցներն ու լրագրիչներն ալ պէտք է վը-
կայած ըլլան ինչէ մը:

Եւ զեւ շարք մը նորութիւններ որ կապ ունին օր-
ւան կենսեցին հետ — Արդիււած է ո՞ր և է Հրատարա-
կութիւն անհատներու անձնական կամ ընտանեկան
կենսեցի մասին: Արդիււած է Հրատարակել անձնասպա-
նութեան լուրերը, առանց նստիկանական արտօնու-
թեան: Մարդասպանութեան դէպքերը պիտի արձանա-
գրուին իբրև պարզ ոճի արկած: Արդիււած է Հրատա-
րակել անձնասպաններու և ձերբակալուած մարդասպան-
ներու նկարները: Արդիււած են արքայական կամ խա-
լիֆայական և Համայնալմարական Հրատարակութիւն-
ները, Հրտակութիւնը փոռարանող գրութիւնները:
Ընդհ. դատախազը կրնայ իր իսկ նախաձեռնութեամբ
դատ բանալ երեսփոխաններու և բարձր պաշտօնատար-
ներու և որևէ անձի պատի ին հետ խաղցող գրած ք-
ննու կամ նկարներու Հրատարակութեան նկատմամբ: Կա-
նալարութիւնը կրնայ առժամայէս խափանել ո՞ր և է
թերթ կամ Հանդէս, եթէ անոր այս կամ այն Հրատա-
րակութիւնը փնտասկար Համարէ իր քաղաքակրթու-
թեան: Թերթ և Հանդէս ծախող անհատներն ալ պէտք
է իրենց ինքնութիւնը յայտնեն ոտսիկանութեան: Առ

նազն վեց ամիս բանտարկութեան կը դատապարտուին
անոնք որ կը ձգտին վարկաբեղել կառավարութիւնը,
պետական պաշտօնատուները և անոնց գանապան բա-
ժինները: Արդիււած են այնպիսի Հրատարակութիւններ
որոնք կրնան վնասել պետութեան տնտեսական վարկին:

Այս բոլորը կապացուցանեն թէ քեմալայականութիւ-
նը իսկապէս մեծ կարևորութիւն կուտայ մամուլի
ապատութեան, ինչպէս բարձրարարաւ յայտարարեց
Ըսմէթ փաշա, Ազգ. Մեծ Ժողովին մէջ...

Մ. Քեմալ այս ասպարէզին մէջ ալ բունած է միջին
ճամբան, խորհրդային իշխանապետութեան և Փաշա-
մին միջև:

Օգտուեցէք առիթէն, պէյեր և էֆէնտիներ, քանի
որ բարեխաճ կառավարութիւնը կը հսկէ ձեր վրա
խմբագրապետէն մինչև փողոցի ցրելի:



Իրականութիւն է այլևս: Թուրքիան Հասալ իր
նպատակին, Արարատի անգործութեան դատապարտե-
լու Համար, գէթ ժամանակի մը Համար:

Անցեալ ամսան, երբ ծանր տաղանալի մը մատուած
էր Թուրքիան, Արարատի և Ջիլանի շարժումներուն հե-
տևանքով, իրեն օգնութեան Հասան խորհրդային էշ-
խանութիւնն ու Պարսկաստանը: Առջինը նոյնիսկ ա-
ռաջարկեց զօրք և թղթաօթ զրկել, բայց ինչիւրի մը բ-
ժեց: Այն ատեն Մոսկա պարտք սեպեց սուլտանութիւ
գունդ մը կէզրոնայնել ուսմանակատարն վրա, իսկ Հայ
բոլշևիկները, որոնք միշտ պատրաստ են օրւան եղա-
նակին Համեմատ ոտստուելու, Վերմ ընդունելութեամբ
և պատուախորութիւններով ողջունեցին թրքական զօրու-
մաս մը, որ ասպատանած էր Ղամարլու...

Նորութիւն մը չէր խորհրդային իշխանութեան
դիրքը: Նորութիւն Համարեցաւ Պարսկաստանի վըճ-
ողական ընթացքը՝ այս դէպքերուն առթիւ և այնուհե-
տև: Թեհրանը, միշտ ջանադիր լաւագոյն յարաբերու-
թիւններ պահելու իր դրացիներուն հետ, և միւս կող-
մէ մտահոգ՝ քրտական շարժման ծաւալումէն, ըրաւ
ինչ որ կրնար ընել, փութացնելու Համար Արարատի
Գիւրտերուն զգույնը: Այս նպատակին իրագործման
Համար, նոյնիսկ տուա զոհեր, որովհետև էնկիւրի յա-
ջողած էր Պարսկաստանի զէմ դարձնել մաս մը Գիւր-
տեր: Դեռ վերջերս տեղի ունեցան արիւնալի կռիւներ,
ուր սպանեցաւ Նախըլանի հուշակաւոր խանը:

Թուրքիա և Պարսկաստան Համաձայնած են ծրա-
գրի մը վրա, որուն Համաձայն Արարատի շրջանը
պիտի մնայ անբաժել: Թոյլ չպիտի տրուի որ քրտական
ո՞րևէ ցեղ տեղաւորուի այդ արարած վրա կամ անոր
շրջականները: Պարսկաստան իր մասին տեղահանած է,
արդէն, սահմանամերձ շրջաններու քերտ ցեղախում-
բերը: Մինչև իսկ պարսկահպատակ Գիւրտերը չեն կըր-
նար Հաստատուիլ այդ կողմերը: Թուրքիա կը պահանջէ
նաև Արարատի պարսկական մարտ, փոխարէն խոստա-
նալով ուրիշ հողամաս մը: Պարսկաստան սկզբունքով
ընդունած է այս պահանջը, եթէ ոչ գործնապէս տեղի
տուած:

Այս ճակատին հոգեբը թեթեւեղեղ յետոյ, Թուր-
քիա Հիմա ծրագրիներ կորոճայ, ամէն կերպով թըր-
քացնելու «արեւելեան նահանգները»: Չորս տարի է

վեր «բարենորոգումներ» կը կատարւին — ճամբաներ, դպրոցներ, տեղահանութիւններ և ձուլումներ, որպէս զի Քիւրտի հետք ալ շմոնայ, ինչպէս չէ մտացած Հայու:

Այժմ իրենք իրենց տան մէջ զգալով, կը խորհին, հարիւր հազար թուրքեր փոխադրել Ենոկոսլիխայէն և Պուլխարիայէն, և տեղաւորել Թրքահայաստանի հողերուն վրա, մասնաւորապէս Վասպուրականի նահանգին մէջ: Այս նպատակով ալ, բանակցութեան մէջ մը-տան են ամերիկեան խմբակի մը հետ, որպէսզի զեղեր շինէ:

Կը յաւոյրին թէ ոչ — հարցումին պատասխանը ամենէն առաջ այդ հողերուն տէրերն են որ պիտի տան, և ոչ թէ թուրքերը:

Այս ծրագրին հետ միաժամանակ, թուրք մամուլը կարծարձէ սուրիական ինդեր մը:

Նոր չէ այս պայքարը,— Սուտերու, խեղաթիւրումներու և միջնդային զբոգութեանց այս խառնի-ճաղանճը, որ դժբախտաբար կոզուի մեր հանրային կեանքի անկերպարան, հակամարտ վիճակէն: Բայց նոր է իր ուժգնութեամբ և թունաքեր մաղձով: Քեմալական «Միլլիէթթը իր «Դաշնակ-Հօյրու» յօդածաշար-քով պատրաստեց գետտիւր: Այս անգամ, նոր յօդածա-շարքով մը, որ յատկապէս ուղղուած է Հայերուն, ոչ միայն կը բերքէ ինդերը, այլև ասպարէզ կը կարգայ:

Իբրև թէ չնդգ «Վազըթթը» իր կարգին կրկէս նետ-ւեցաւ, և անա շարք մը յօդածոներով և գուտումնախ-րութիւններով՝ գոյն ու ձև կուտան պայքարին: Նպա-տակը,— պատրական րունելով 1921ին Սուրիա և Լիբա-նան ապաստանած Հայերու տեղաւորումը, Արաբները գրգռել Հայերուն դէմ, ինդերի յարուցանել Ծրանասյի հետ, և ցրել, մինչև Ալժիր և Թունիսը քշել տակ ճայ գաղթականութիւնը... Դժբախտաբար կարգ մը արարական թերթեր ալ, թէև մտանք տեղեակ տեղա-ւորման ձեռնարկին բոլոր մահրամանութեանց, պար-բերաբար Վուր կուտան թուրքերու շրջադային: Իսկ հայասնուն գործակալներու մասին աւելորդ է խօսել: Աւելորդ է խօսիլ, նաև, խորհրդային թերթերու և ցի-բուցան թափթփուքներու մասին, որոնք բառ առ բառ այն կրսեն ինչ որ թուրքերը, — «Նոր Հայաստան» կը շինել Սուրիոյ մէջ, նախաձեռնութեամբ Դաշնակցու-թեան: Կարողացէ բուլղիկեան ո'րևէ հրատարակու-թիւն, և եթէ հանդիպէ «Սուրիա» անունին, ո'րևէ առթիւ, միշտ ալ ձեր աչքին պիտի գարնէ այս հէ-քեաթը:

«Վազըթթ» Սուրիոյ Հայերուն թիւը կը հաշւէ 2-300,000, այն ինչ հարիւր հազարէն հարիւ թէ ա-ւելի կամ պակաս ըլլայ: (Լիբանանէն 1930ին գաղթած էին 5060 Հայեր, իսկ 1931ի առաջին վեցամսեային՝ 2260): Յետոյ, այն սուտը կը բլրէ թէ տարիներէ ի վեր շարունակ հազարաւոր Հայեր կը փոխադրւին Սու-րիա: Մինչդեռ տարիներէ ի վեր խիստ սեղմումներ հաստատուած են Հայերու դէմ, իսկ անցեալ ամառ ան-հատներու մուտքն անգամ կանոնի տակ առնեցաւ, ան-կարելի դառնալու աստիճան: Թուրքերը չեն գիտեր այս պարագաները: Ի հարկէ գիտեն. բայց ի՞նչ պէտք

ունին աւելի բարեխիղճ ըլլալու, երբ Երևանը ինք ան-դադար իւր կը լեցնէ կրակին վրա, սուտ-իրաւ իրար խառնելով:

Թուրքերը կուզեն այն տպաւորութիւնը ձգել, թէ Ճրանաս կը ձգտի «Նոր Մակեդոնիա» մը ստեղծել Սու-րիոյ մէջ: «Հայերը ամէն կողմէ հաւաքելով և Սու-րիա տանելով, Ճրանաս կուզէ Փրանսացած տարր մը ունենալ, որպէսզի կարենայ պահել հողատարութիւնը, որ անհաճոյ է Սուրիացիներուն»:

Մինչդեռ, Ճրանաս կը պատրասուի ուշ-կանուի Ըանչնալ Սուրիոյ ամբողջական անկախութիւնը, իր շահերն ապահովելով այնպէս ինչպէս Անգլիան՝ Իրաքի մէջ:— Հաստատելով զինակցութիւն և հովանաւորեալ երկիրները կապտելով Ազգերու Դաշնակցութեան, իբրև ազատ պետութիւններ:

Թուրքերու շարժումութիւնը ապացուցանելու հա-մար, կը բաւէ յիշել որ, հովանաւորեալ երկիրներու քնակչութեան թիւն է երկու միլիոնէն քիչ մը աւելի, բաժնած՝ քսան աղանդներու: Այդ մարդահամարին մէջ (պատրաստած՝ Ճրանացիներու կողմէ), սիննի իսլամները կը կազմեն 1,075,000, իսկ շէի իսլամները՝ 110,000: Ալէքիները՝ 228,000. Տիւրքիները՝ *86,000, Իսմայէլեանները՝ 15,000: Քրիստոնեաներու թիւը կը հաշւեն 500,000էն քիչ մը աւելի, որոնց 187,000ը Մա-րոնի, 69,999ը կաթոլիկ Յոյն, 20,000ը կաթոլիկ Հայ, 151,000ը օրթոդոքս Յոյն են: Արդ ի՞նչ կը ներկայա-ցնեն 100,000 — աւելի կամ պակաս — Հայերը, այս ազգաբնական ցուցանադէսին մէջ:

Բայց ի գուր կը վիճինք անուղղայ դաւադիրներու հետ: Տեղաւորումը յառաջ պիտի երթայ և պէտք է որ երթայ, վերջ տալու համար գաղթականներու ող-բերգութեան, որ կը շարունակէ 1915էն ի վեր, բուն իսկ թրքական բարբարոսութեանց հետևանքով: Տեղա-ւորումը անհրաժեշտութիւն մըն է հերթակալ երկիր-ներուն համար, տնտեսական և քաղաքական տեսակե-տով, և եթէ մեր արար բարեկամները լաւ կըմտնեն իրենց շահերը, ամենէն առաջ սահմանամերձ դրացի-ներէն պիտի գոռչանան, ոչ թէ ճայ չարքաշ և շինա-րար աշխատաւորէն: Բոլոր աշխարհակալութիւնները հաւասար են մեզի համար, և ամէն բանէ առաջ տեղա-ցի ժողովուրդին և անոր երկրին շահն է որ արժէք ու-նի: Թիթիղի կտորներով և զուրջերով շինած խոշակ-ները քանդել և ամայն տարածութիւնները չէն գերդէ-րու վերածել՝ չի նշանակուի «նոր Հայաստան» շինել: Զահիճները ցածքեցնել և վարել՝ չի նշանակեր դաւա-դրել Սուրիոյ կամ Լիբանանի դէմ:

Իսկ եթէ թուրքերուն նպատակն է հանդիստ ձգել մեզ ո'րևէ հողի վրա, և զրկել մեզ սպրելու իրաւուն-քէն, ատոր պատասխանն ալ շատոնց տուած ենք: Եւ պատրաստ ենք միշտ ալ տալու:

Այս վերջին պարտականութիւնը կը հարկադրէ մեզ ոչ միայն արթուն հսկել, այլ և զսպել մեր ներքին կեր-քերը, և երկու լարի վրա շխալալ ինչպէս Հայաստանի զորացման, նոյնպէս ազգապահպանման գործին մէջ:

Ի Ն Տ Ե Ր Ն Ա Ս Ի Ո Ն Ա Լ

Ը. Ա. Ինտերնասիոնալի չորրորդ Համագումարը աւարտեց իր աշխատանքները խանդավառ մթնոլորտի մէջ, Օգոստոս 2ին: Ինչպէս գրել էինք, Հ. Յ. Դաշնակցութիւնը եւս մասնակցեց Համագումարին առանձին պատգամաւորութեամբ:

Համագումարի աշխատանքի տեսութիւնը, տեղի սղութեան պատճառով, յետագելով յաջորդ համարին՝ ստորեւ առաջ ենք բերում մյա ընդունած բանաձեւերը օրակարգի հարցերի մասին:

Բ Ա Ն Ա Ձ Ե Ի ՕՐԱԿԱՐԳԻ Ա. ԿԵՏԻ ՄԱՍԻՆ

«Պայքար պատերազմի վտանգների դէմ և
զինաքափութեան համար»

Արհեստակցական Միութիւնների Միջազգային Դաշնակցութիւնը և Ընկերակազմի Աշխատաւորութեան Ինտերնասիոնալը նորից շեշտում են, որ աշխատաւորութեան նիւթական և բարոյական բոլոր ուժերը, ինչպէս և պայքարի բոլոր միջոցները տրամադրւած են խաղաղութեան գործին:

Պայքարելով դրամատիրութեան (կապիտալիզմ) դէմ, որ պատերազմի սաղմն է կրում իր մէջ, աշխատելով կառուցանել մի նոր հասարակարգ, որի մէջ դասակարգային հակամարտութիւններ չպիտի լինեն՝ աշխատաւորութիւնը նախապատրաստում է լիակատար և վերջնական խաղաղութեան իրականացումը: Սակայն, դրա հետ միասին, աշխատաւորական շարժումը անդադար ջանում է զարգացնել խաղաղութեան այն սաղմերը, որոնք գոյութիւն ունին ներկայ հասարակարգի մէջ: Նա միշտ խրախուսել է ժողովուրդներին անտեսական և քաղաքական գործակցութեան բոլոր ձեւերը: Նա միշտ պայքարել է և ապագային էլ պիտի պայքարի՝ զարգացնելու համար միջնորդ դատարանները, միջազգային արդարադատութիւնը և միջազգային ընդհանուրները խաղաղ միջոցներով կարգադրելու ձեւերը: Սակայն, Ա. Մ. Մ. Դաշնակցութիւնը և Ը. Ա. Ինտերնասիոնալը երբեք աչքաթող չեն արել, որ զինաթափութիւնը այս խաղաղութեան գործի էական և անհրաժեշտ տարրն է կազմում, և որ առանց զինաթափութեան մնացած բոլոր միջոցներն ապարդիւն պիտի մնան: Ժամը հասած է այս պարագան վճանկանօրէն յիշեցնելու կառավարութիւններին, որոնց կողմից նա կարծէք մոռացութեան է տրւած:

Զինաթափութիւնը խոստացած է ժողովուրդներին բազմաթիւ անգամներ ամենաորոշակի և ամենահանդիսաւոր ձեւով: Եթէ Քեյլըզի համաձայնագրեր անգործանկութեան դատարկ արտայայտութիւն չէ հանդիսանում, ապա հասկանալի է, որ զինաթափութիւնը պէտք է յաջորդէ նրան: Ազգերի Դաշնակցութեան Կանոնադրի Տրդ յօդւածը յստակօրէն պարտաւորեցնում է կրճատել զինաւորումները: Հաշտութեան որոշանքները՝ հէնց ըստ իրենց տեկստի՝ «բոլոր ազգերի զինաւորումները կրճատուելու» առաջադրութեամբ են պարտաւորել, որ

պարտւած երկրները զինաթափ լինեն: Աւելի քան տասը տարի է, որ Ազգերի Դաշնակցութիւնը, Պարզ Յանձնախումբը, Նախապարտաւորական Յանձնախումբը և անհամար կոմիտէներ ուսումնասիրութիւններ են կուտակում: Շատ երկար սպասել տւին աշխարհին: Թող կառավարութիւնները լաւ իմանան, որ այս մշտական ձգձգումները սպառել են ժողովրդական գանգաձնների համբերութիւնը: Եւ այսօր, երբ Զինաթափութեան Յանձնախումբը հրաւիրւած է, թող զգուշանան մի անգամ եւս խաբելու այն յոյսերը, որոնք հրահրւած են այս ասօրի: Եթէ Պորտուգալիզմը նորից յետաձգի, եթէ նա որոշակի և վճուական արդիւնքների չյանգի՝ սնանկութիւնը ճշտւած կը համարի: Աշխատաւորական շարժումը պէտք է սրանից իր դասն առնի և դրան համապատասխան կատարի իր քայլերը:

Ա. Մ. Մ. Դաշնակցութիւնը և Ը. Ա. Ինտերնասիոնալը յայտարարում են.

1. Զինաթափութեան սիստեմը կարող է կայուն և վերջնական լինել միայն այն ժամանակ, երբ հիմնւած կը լինի իրաւունքների և պարտականութիւնների հաւասարութեան վրա: Ոչ մի բան այնքան կործանարար չէ խաղաղութեան համար, որքան տեւակծօրէն իրաւական տարբերութիւններ դնել յաղթական և պարտւած ժողովուրդների միջև: Ա. Մ. Մ. Դաշնակցութիւնը և Ը. Ա. Ինտերնասիոնալը պահանջում են, որ 1932ի Պորտուգալիզմի ժամանակ իսկ վճուական քայլ կատարելի դէպի հաւասարութիւն:

2. Անթոյլատրելի է մտածելն իսկ, թէ այս հաւասարութիւնը կարելի է վերականգնել՝ վերագինելով այն երկիրները, որոնք հաշտութեան դաշնագրերով զինաթափւած են: Զինաթափութեան դաշնագրերը չի կարող առիթ ծառայել ո՛րեւէ տեսակի զինաւորման համար: Սակայն, նա չի կարող նաև ներկայիս զինաւորումները վաւերացնել, որ կը նշանակէր ձեռնոց նետել աշխատաւոր դասակարգին: Ա. Մ. Մ. Դաշնակցութիւնը և Ը. Ա. Ինտերնասիոնալը պահանջում են զինաւորումների էական, անմիջական և ընդհանուր կրճատում:

3. Այս կրճատումը պէտք է տարածւի բոլոր տեսակի գինւաւորումներէ վրա: Նա պէտք է իր շրջանակէ մէջ առնի խաղաղ ժամանակի գորքի քանակը, գինւորական ծառայութեան տեւողութիւնը, գորակոչի ենթարկելիք պահեստի գորքերը, բոլոր տեսակի ուղիմական նաւատորմիչը, ամրոցները, ցամաքային և ծովային զինքերն ու ռազմամթերքը:

Բիւրիական և մանրէական գինւաւորումներէ արդելքը պէտք է Հաստատուի և իրականացուի:

Օղակին տորմիչը պէտք է անմիջապէս վերացուի: Նա չպէտք է ազգային պաշտպանութեան դեռ ևս թոյլատրելի ուժերի բաղկացուցիչ մասը նկատուի այն Համաձայնագրի մէջ, որը պէտք է խաղաղութեան խորհրդաժողովի արդիւնքը հանդիսանայ:

Սովորական (առևտրական և ճանապարհորդական) սաւառնակների և օդանավերի շինութիւնը պէտք է խիստ հակազդուի տակ դուրս: (Օղակնաւային հաղորդակցութեան դեբերը պէտք է միջազգայնացուի):

4. Կնքելիք ընդհանուր Համաձայնագիրը յարգել տայու Համար, բացի գրանազան երկրներում Հաստատուելիք ազգային հակազդից, որ միմիայն ժողովրդապետութեանը կարելի կը դառնայ, անպայման անհրաժեշտ է Հաստատուի միջազգային խիստ հակազդիչ, որը պէտք է հսկէ ռազմական ծախսերին, գինւաւորումներին, զինքի և ռազմամթերքի Հանրային ու մասնաւոր արտադրութիւններին և զինքի միջազգային առևտուրին: Համաձայնագիրը պէտք է արգելի, որ պետութիւնները նրա խախտումները մերկացնելը անցանք նկատեն:

5. Այս առաջին քայլերը կատարելուց յետոյ, պէտք է շարունակել գինւաւորութեան դործը, մինչև որ նա իր վերջաւորութեանը յանգի, այսինքն մինչև որ ամբողջ Լեկազդիչ վրայ պատերազմի Համար նախապատրաստուիլը դադարի:

Սրա Համար պէտք է ստեղծել գինւաւորութեան մի միջազգային մարմին, որ պէտք է պարբերաբար և կարճատեւ ընդմիջումներով խորհրդաժողովներ գումարի՝ որոշելու Համար գինւաւորութեան այն նոր քայլերը, որոնք պէտք է կատարեն առաջիկայ ժամանակաշրջանում:

ԼՐԱՅՈՒՑԻՉ ԲԱՆԱԶԵՒ

Օրակարգի I կէտի մասին

Համագումարը յայտարարում է .

Անհրաժեշտ է էական կրճատման և ընդհանուր ու ճշտորոշ սահմանափակման ենթարկել բոլոր ծովային ուժերը:

Բացի սրանից, Ձինաւորութեան խորհրդաժողովի մշակելիք Համաձայնագիրը մասնաւորապէս պէտք է Համապատասխան միջոցներ նախատեսի ամբողջովին վերացնելու 10,000 տոնից բարձր ռազմանաւերը, սաւառնակակիր նաւերը և սուզանաւերը՝ հաշի առնելով գինւաւորման նոր ձևերին և ուժեղամասն ուղիմաւորման հրաժեշտութիւնը և նկատի ունենալով որ այս առաջարկները մի ամբողջութիւն են կազմում:

Բ Ա Ն Ա Չ Ե Ի
ՕՐԱԿԱՐԳԻ Բ. ԿԵՏԻ ՄԱՍԻՆ

« Կացութիւնը Գերմանիայում և Միջին Եւրոպայում և աշխատաւոր դասակարգի պայքարը ժողովրդապետութեան համար »

Համաշխարհային դրամատիրական տնտեսութեան տաղանապը իր գաղաթնակտին է Հասել Միջին Եւրոպայի և մասնաւորապէս Գերմանիայի վարկային սխտեմի ցնցումով:

Եթէ չյարձուի Գերմանիայի ներկայ վարկային տաղանապը յաղթահարել միջազգային համերաշխութեան արագ և արատաձեւեն արտայայտութեամբ՝ Գերմանիայում դործազրկութիւնը անդիմադրելիօրէն հասելի չափերի պիտի հասնի, զերմանական բանւորների աշխատավարձը սարսափելի կերպով պիտի ընկնի և զերման ժողովրդական զանգուածները անշափելի թըլառութեան պիտի մատնեն:

Ամենամեծ արդիւնադործական երկրներէ մէկի մէջ երբ տաղանապը այսօրիս սրութիւն ստանայ՝ զործազրկութիւնն ու աշխատավարձի անկումը անխուսափելիօրէն կատաստրոֆային վիճակի պիտի հասնեն ամբողջ աշխարհում:

Դրա Հետ միասին, Գերմանիայի տնտեսական փլու-

զումը պիտի բազմապատկի զերմանական ժողովրդապետութեան քաղաքական փլուզումի վտանգը: Աղգայնական զիկատատուրայի յաղթանակը Գերմանիայում ամենամեծ վտանգին կենթարկէր Հունտական արեւելք գտնուող եւրոպական երկրների ժողովրդապետութիւնը: Նա ուժեղօրէն կը վտանգէր Եւրոպայի խաղաղութիւնը և կը թաղէր գինւաւորութեան միջազգային խորհրդաժողովի յաջողութեան յոյսերը: Նա կը զնէր Եւրոպան մի նոր պատերազմի դէմ հանդիման:

Նկատի ունենալով այս առհէլի վտանգը՝ պէտք է ամէն ինչ անել Գերմանիայի տնտեսական փլուզումը և զերմանական ժողովրդապետութեան ծանր ցնցումը կանխելու Համար:

1. Ներկայ կացութիւնն ապացուցանում է, թէ իւրաքանչիւր երկրի տնտեսական բարեկեցութիւնը ինչ-քան է կախած ամբողջ աշխարհի բարեկեցութիւնից: Նա ապացուցանում է, որ բացարձակապէս անհրաժեշտ է միջազգային ընդհանուր դործողութիւնների դիմել վերջ տալու Համար այն թիւաւորութեանը, որի մէջ ընկած են բոլոր երկրների աշխատաւորները Համաշխարհային տաղանապի Հետեանաբով:

Գերմանիայի ժողովրդական տնտեսութեան փլու-

զուտի առաջը պէտք է առնել միջազգային առատաձեւն վարկային օգնութեամբ: Այս վարկային օգնութիւնը պէտք է տրւի անյապաղ և բաւարար չափերով, եթէ ցանկանում են, որ նա արդիւնաւէտ լինի:

Միջազգային վարկերը չպէտք է կապւած լինեն քաղաքական պայմաններին հետ, կամ անյապաղ պայմանների հետ, որոնք կարող են նսեմացնել Գերմանիայի քաղաքական դերը յայնպէս: Գերմանական ժողովրդի նեղ վիճակը քաղաքական ճնշումի համար օգտագործելու ամէն մի փորձ պիտի զօրացնի ազգայնամուլութեւնը Գերմանիայում և կատարելապէս անարժէք դարձնի օգնութեան գործը:

Միւս կողմից՝ անհրաժեշտ միջազգային օգնութիւն հասցնելը կը դիւրանար, եթէ գերմանական կառավարութիւնը կարողանար ինքնաբերաբար վստահութիւն ներշնչել ժողովրդայնական ազգերին, որ սրանց տրամադրելիք միջոցները ոչ թէ ազգայնամուլ և դիկտատուրային քաղաքականութեան պիտի ծառայեն այլ խաղաղասիրական և ժողովրդայնական քաղաքականութեան:

2. Միջազգային վարկային օգնութեւն անյապաղ հասցնելուց յետոյ, ըստ կարելոյն շուտ նոր կարգադրութիւն անել հատուցումների և պատերազմական պարտքերի մասին: Մինչ այժմայ կարգադրութեւնը, որ ունիւր արժէքի բարձրացման պատճառով արդէն շատ ճնշիչ էր, բացարձակապէս անհնարին է դարձել Գերմանիայի տնտեսական վերելքը: Գերմանիայի պատճառով:

Ինտերնասիոնալը, ղեկ 1922ին Փարիզի Քորտումում, պահանջել է, որ պատերազմական պարտքերը շնչեն և հատուցումների գումարը կրճատուի՝ պատերազմական դրոժողութիւնների շրջանում ազգաբնակչութեան կրած վնասներին համապատասխան չափով:

Պատերազմական պարտքերի ամբողջական շնջումը այսօր աւելի՛ անհրաժեշտ է քան երբ և իցի: Դա հնուրուր կը դարձնի Գերմանիայի վրա բարձւած բեռը հական չափով և ընդմիջտ թէթևացնելու:

3. Պատերազմական պարտքերի և հատուցումների մասին նոր կարգադրութիւն անելու համար մղւելիք պայքարը պէտք է սերտորէն կապուած մնայ այն պայքարին, որ մղւելու է միջազգային դիմաթափութեան համար: Վերջինս մի կողմից կը դիւրացնէր հատուցումների խնդիրը՝ Փիտանական միջոցներ մէջտեղ հանելով՝ իսկ միւս կողմից կը հեշտացնէր որ Միացեալ Նահանգները համաձայնութիւն տան պատերազմական պարտքերը շնջելու:

4. Սրա համար էլ, Համազումարը խտորէն դատապարտում է, որ շատ երկրներում ազգայնական և ֆաշիստական կուսակցութիւնները վտանգաւոր պրոպագանդ են մտրմ՝ ջանալով հրահրել ժողովուրդների կրքերը հարեանների դէմ: Նոյնպիսի վճռականութեամբ, դատապարտում է Համազումարը պատերազմի և ընդհարումների մասին լուրեր տարածելը, որոնք նրա համոզմամբ պիտիզարմ կարեկներն անխղճ զործակալների կողմից են շրջանառութեան մէջ դրուում: Համազումարը կող է անում կառավարութիւններին դիտակցելու, որ Եւրոպայի տնտեսական վերաշինութիւնը ներկայի ամենահրատապ խնդիրն է: Ուստի նա պահանջում է կառավարութիւններից, որ նրանք իրենց բոլոր ճիւղերն այս խնդրի վրա կենտրոնացնեն:

Համազումարը նաև պահանջում է կառավարութիւններից, որ նրանք անյապաղ ձեռք պարզեն միջազգային մի տնտեսական և շինարար ծրագրի, որ կարողանար անմիջական օգնութիւն հասցնել Գերմանիային և մեղմել Համաշխարհային տնտեսական տաղանայը:

II

Որքան էլ անհրաժեշտ լինի միջազգային օգնութիւնը Գերմանիային, այնուամենայնիւ, գերմանական ժողովրդատիրութիւնը (դեմոկրատիա) պաշտպանելու դրոժում, ամենազլխաւոր հոգսը ընկնում է գերման աշխատաւորութեան վրա: Համազումարը կատարեալ վստահութիւն ունի, որ գերման աշխատաւորները կը ջանախնին ֆաշիզմը: Սրանով նրանք ոչ միայն իրենց սեփական ազատութիւնը, այլ և Միջին Եւրոպայի ազատութիւնը և ամբողջ աշխարհի խաղաղութիւնը կը փրկեն: Ամբողջ աշխարհի ընկերակարգի աշխատաւորները իրենց բոլոր ուժերով պերմանական աշխատաւոր դասակարգի կողքին կը կանգնեն այս պայքարի մէջ:

Միջին եւրոպական ստեռութիւնների մէջ, երիտասարդ ժողովրդատիրութիւնը կարող է պաշտպանել և յարատեւել միայն աշխատաւոր դասակարգի ուժով: Սակայն, ժողովրդատիրութիւնը միայն այն ժամանակ կարող է աշխատաւոր դասակարգի ամբողջ եռանդը և՛ դրա հետ միասին՝ ամբողջ ուժը իրեն ի սպաս դնել, երբ նա տնտեսութիւնը աշխատող դասակարգի իրական հակադէմ տակ կը դնի և երբ ինքը մի գործիք կը դառնայ աշխատաւորական զանգուածների ձեռքին՝ ընկերային բարեփոխութեան համար: Ուստի, ժողովրդատիրութեան պաշտպանութիւնը պէտք է սերտորէն կապուած լինի ընկերակարգի համար մղուող պայքարին:

Փաշիզմը և կոմունիզմը յանձնարարում են պարտւած ժողովուրդներին՝ բռնի ուժով պատուել հաշտութեան դաշնագրերը: Սակայն, դաշնագրերը ինքնակամ դրժելու կամ բռնի ուժով փոփոխելու ամէն մի փորձ կարող է միայն տնտեսական տաղանայը զօրացնել եւ դէպի պատերազմ տանել: Հայտնութեան դաշնագրերում տեղ գտած անորոշարութիւնները կարող են վերացնել միմիայն ժողովրդատիրութեան և միջազգային իրաւունքի միջոցներով: Նրանք կը վերանան աշխատաւոր դասակարգի վերելքի հետ միասին: Ինչպէս որ Ը. Ա. Ինտերնասիոնալը պայքարել է մինչև հիմա պարտւած ազգերին բռնութիւնների նկատմամբ դէմ, այնպէս էլ ընկերակարգի կուսակցութիւնները, երբ նրանք իշխանութիւնը նսանեն և ինչ չափով որ նսանեն, պէտք է քայլ առ քայլ և խաղաղ միջոցներով սրբազան դաշնագրերն այն իմաստով, որ բոլոր ժողովուրդները կատարելապէս հասնաւոր լինեն ժողովուրդների խաղաղ համայնակցութեան մէջ, որ ազգերի ինքնորոման իրաւունքը խաղաղամտ Եւրոպայում և ազգային փոքրամասնութիւնների պաշտպանութիւնն ու մշակութային ինքնավարութիւնը ապահովեն:

III

Ը. Ա. Ինտերնասիոնալը ջանում է իր ամբողջ ուժով հնարաւորութիւն ստեղծել բոլոր երկրների աշխատաւոր դասակարգի համար, որ նա իր պայքարը:

մղէ ժողովրդատիրական հողի վրա, ժողովրդատիրական միջոցներով և նւաճած իշխանութիւնը օգտագործի ժողովրդատիրական մեթոդներով:

Սակայն, եթէ հակառակ բոլոր երկրների ընկեր-վարական կուսակցութիւնների ճնշումին և հակառակ Անգլիայի աշխատաւորական կառավարութեան ճիգերին — որոնց հանդէպ՝ խաղաղութիւնը և ժողովրդատիրութիւնը ապահովելու գործում՝ Ինտերնասիոնալը լիակատար վստահութիւն ունի — դրամատէր դասակարգերը, որոնք այսօր գեռ իշխում են ժողովրդատիրութիւնների վրա, թողնելու լինեն, որ Միջին Եւրոպայի տնտեսութիւնն ու ժողովրդատիրութիւնը խորտակեն:

Եթէ գերմանական տնտեսութեան փլուզումի հետեւանքով, Հոենոսթեց արեւելք գտնուող ամբողջ Եւրոպայում, Փաշխտական բռնակալութիւնը հանի աշխատաւոր դասակարգի ոտքի տակից ժողովրդատիրական պայքարի հողը —

Այն Գամանակ աշխատաւոր դասակարգին այլ բան չի մնալ անել, քան թէ Փաշխտական բռնութեան դէմ ծառանալ իր տրամադրութեան տակ գտնւած բոլոր միջոցներով:

Աշխարհը դրւած է երկնորտանքի առջև. կամ անմիջական և լայնախոր միջազգային պահիոն՝ փրկելու:

Բ Ա Ն Ա Չ Ե Ի ՕՐԱԿԱՐԳԻ Գ. ԿԵՏԻ ՄԱՍԻՆ

«Համաշխարհային տնտեսական տագնապը
և գործազրկութիւնը»

1928ին Բրիւսելի Համագումարի հանած որոշումներով և 1931 ի յունւարին Յիւրիխում Միջազգային Արհեստակցական Միութիւնների Ինտելիցութեան հետ միասին մշակած բանաձևերով, Ը. Ա. Ինտերնասիոնալը ստիպողաբար մատնանշել է Համաշխարհային տնտեսական տագնապն ու գործազրկութիւնը և ուշադրութիւն հրահրել դրանց ճակատագրական հետեւանքների վրա՝ տնտեսական, քաղաքական և ընկերային տեսակէտներէ:

Այս որոշումներէից ի վեր, տնտեսական տագնապը գրեթէ բոլոր երկրներում հակայական չափով սրւել է: Արդիւնաբերութեան և սպառման աննորզանակութիւնը մեծացել է, շուկաները քայքայւած են, արդիւնաբերութեան փլուզումին յաւրդել են վարկերի կատասարդֆիլ ցնցումներ:

Դրամատիրական տնտեսութիւնը գտնուում է այսօր ամենաճաւաղուն և ամենախոր ճգնաժամի մէջ, որպիսին նա երբեք չէ ունեցած:

Դրամատիրութիւնը ծայր աստիճանի հասցրեց (արդիւնաբերական) բացդիտալիզատիոնը՝ աշխարհին անբաւ հարստութիւններ խոտտանալով: Հետեւանքը՝ չահագործման աստիակցում և յարաճիւն գործազրկութիւն բացամիջիոն մարդկանց, որոնք կարիքի և թշուառութեան են մատնւած:

Դրամատիրութիւնը ազատ մրցութիւնը դալալիօրէն սահմանափակեց՝ կարտելները միջազգային հողի վրա

համար տնտեսութիւնը, ժողովրդատիրութիւնը և խաղաղութիւնը, կամ փլուզում և քաղաքացիական կռիւ:

ՅԱԽԵԼԻԱԾՄԱԿԱՆ ԲԱՆԱՁԵԻ ՕՐԱԿԱՐԳԻ Ի ԿԵՏԻ ՄԱՍԻՆ

Համագումարը հաստատում է, որ Եւրոպայի մէջ շարք պետութիւնների մէջ, մասնաւորապէս արեւելեան և հարաւարեւելեան երկրներում, ազգային փոքրամասնութիւնները գեռ ևս չեն տիրացել այն իրաւունքներին, որոնք հաստատիւած են նրանց հաշտութեան գոյնազրեքով: Ոչ զպրոցական և ոչ էլ ազգային մշակոյթի մարդի մէջ, ազգային փոքրամասնութիւնների տարրական պահանջները չեն յարւած: Այնպէս որ այս փոքրամասնութիւնները՝ դրկւած քաղաքացիական և քաղաքական իրաւունքներից՝ ճնշւած վիճակի մէջ են գտնուում:

Ուստի, Միջազգային Ընկերվարական Համագումարը առաջարկում է իրեն յարած կուսակցութիւններին, որ, խորհրդարանային միջոցներով կառավարութիւնների վրա ճնշում բանեցնելով և հանրային կարծիքի վրա ազդելով, օգնեն ազգային փոքրամասնութիւններին տիրանալու իրենց իրաւունքներին:

դնելով: Նա անշափ բարձրացրել է մաքսերը և դժուարացրել առեւտրական փոխանակութիւնները՝ ազգային շուկաները պաշտպանելու համար: Արդիւնքը՝ քաղաքական բարդութիւններ, տնտեսական պատերազմներ և միջազգային տնտեսական շրջանառութեան ծանր խնդրումներ:

Դրամատիրութիւնը փորձեց կայունացնել վարկային սխտեմը՝ դրամանիշ հանող դրամատների գործակցութիւն հաստատելով, թղթադրամը ոսկեդրամի վերածելով և միջազգային վճարումների համար աւանձին դրամատու հիմնելով: Կայունացման փոխարէն ստացեցին՝ բորսայական խաղերի (սպեկուլյատիոն) վայրենի թռչկոտումներ, աներևակայելի սնանկութիւններ ամենամեծ դրամատների, դրամական արժէքների ծանր ցնցումներ, համատարած անպահանջութիւն և վստահութեան տաղնապ:

Ամէն մի միջոց, որին դիմեց դրամատիրութիւնը տաղնապը վերացնելու համար, նրա տիրապետութեան տակ նորից դարձաւ աշխատաւոր դասակարգի համար: Դրամատիրութիւնը անընդունակ հանդիսացաւ կազմակերպելու տնտեսութիւնը և գործադրելու իր իւրացրած նիւթական բարիքներն այնպէս, որ նրանք ընդհանուր բարեկեցութեան ծառայեն:

II

Դրամատիրական տնտեսութեանը իւրայատուկ անիշխանութիւնը անկարելի է վերացնել, առանց դրամատիրական սխտեմը վերացնելու: Աչքի առաջ ունենա-

լով չտեսնւած թշուառութեան մեծութիւնը՝ նոյն իսկ աշխատաւորութիւնից դուրս դնուող ժողովրդական լայն շրջանակները այն համոզման են եկած, որ դրամատիրութեան տնտեսութեան փոխութիւն պէտք է հաստատուի մի ծրագրաւ համաշխարհային տնտեսութիւն: Ընկերավարական կուսակցութիւններն ու միջազգային աշխատաւորական կազմակերպութիւններն իրենց իւր-պիւրը պէտք է դարձնեն խորացնել այս համոզումը՝ յրատարակելով մերկացնելով դրամատիրական անկարգ տրնտեսութեան պատճառները: Նրանք պէտք է ցոյց տան ընկերավարական համայնատնտեսութիւնն իրականացնելու ուղիները և պէտք է օգտագործեն ներկայ տազնապարհ աշխատաւորութիւնը սխտեմատիք պայքարի մը: Դեռ ընդդէմ բուրժուազիայի դասակարգային տիրապետութեան:

Աշխատաւորութեան այսօրայ շահերն աչքի առաջ ունենալով՝ պէտք է դրամատիրական տնտեսութեան սխտեղ վերացնելու և ընկերավարական տնտեսութիւն հիմնելու համար մղուող այս աշխատաւորական պայքարը զուգորդել տնտեսական տազնապարհ մեղմացնելու և տազնապի գոհերի կարիքը թթեւացնելու պայքարի հետ:

Ը. Ա. Ձորորդը Համագումարը հաստատում է Բրիւսելի և Յիւրիիի որոշումները, որոնք սպառիչ ուղեգծեր և նպատակներ են դնում այս զուգորդած պայքարի համար, և հրահանգում ընկերավարական կուսակցութիւններին՝ ամենայն վճռականութեամբ հետապնդել վերոյիշեալ որոշումների մէջ առաջարկուած պահանջների իրականացումը:

Համագումարը որոշումում է Անգլիայի աշխատաւորական կառավարութեան ստանձնած պարտականութիւնը՝ մինչև 1931ի վերջը վաւերացնել տալու Վաշինգտոնի համաձայնագիրը աշխատանքի տեւողութեան մասին: Այս վաւերացումը վերջնական կը դարձնի այլ պետութիւնների մէջ կատարուած պայմանական վաւերացումներ և հնարաւորութիւն կը ստեղծի, որ վերջապէս մնացած երկրներում էլ յիշեալ համաձայնագիրը վաւերացուի:

Վաշինգտոնի համաձայնագիրն ուժի մէջ մտնելով, պէտք է իթան դառնալ կազմակերպուած աշխատաւորութեան համար՝ աշխատանքի տեւողութիւնը աւելի և և կրճատել տալու: Ա. Մ. Մ. Գաշակցութեան և Ը. Ա. Ինտերնասիոնալի առաջադրած պահանջը՝ քառասուն ժամեայ շաբաթական աշխատանքի մասին՝ շատ ստակ է դորձագրելիների մի մասը նորից տեղափոխելու արդիւնազործութեան մէջ և, յայտնով, հակազդելու այն վտանգներին, որոնք առաջանում են աշխատաւորութեան համար շնորհիւ այն հանգամանքի, որ նրա մի մասը տեւականօրէն վտարուած է մնում ամէն մի տնտեսական գործունէութիւնից:

Առաջիկայ քաջատեւ այն օգուտները, որոնք կարող են ստացուի Ազգերի Դաշնակցութիւնից, Համագումարը հարկադրուած է հաստատելու, որ նրա բոլոր ջանքերը՝ տնտեսութիւնը հանուրի շահերին համապատասխան դարձնելու՝ մինչև այժմ սպարդիւն են անցել: Ազգերի Դաշնակցութիւնը իր հիմնական կազմակերպութեամբ չէ կարող իրեն առաջադրուած խնդիրը լուծել: Մի նոր տնտեսութիւն կառուցանելու համար, նա այն ժամանակ կը դառնայ պիտանի օրգան, երբ աշխատա-

ւորութիւնը ղեկավարող զեր կապահովի իր համար նրա վարչութեան մէջ:

Համագումարը պահանջում է ամենայն վճռականութեամբ, որ տնտեսութեան վրա և մասնաւորապէս ամէն տեսակի մենաշնորհային միութիւններն վրա հրապարակային և ժողովրդատիրական հակակշիռ հաստատուի: Սրա համար նախապայման է հանդիսանում արդիւնաբերական միջոցների սեփականատիրութիւնը և տնտեսութեան մեթոդներ փոխակերպելը: Այս ուղղութեամբ իբրև մի կարևոր քայլ և իբրև ընկերավարական ծրագրուած տնտեսութեան անցնելու մի միջոց է նկատուած Համագումարը սկզբնական նիւթերի արդիւնաբերութեան համայնացումը, դրամատներին և վարկային հաստատութիւններին պետականացումը և առևտուրը պետութեան կամ գործակցական միութիւնների մեծաշնորհ դարձնելը, որպէսզի սա ընդհանուր շահերին համապատասխան ձևով կատարուի: Համագումարն առաջարկում է ընկերավարական կուսակցութիւններին, որ նրանք այս պահանջները տազնապի դէմ մղուող պայքարի առանցքը դարձնեն: Այս պահանջներն ազգային կենտրոն իրականացնելը նախապայման պէտք է դառնայ տնտեսութեան վրա հրապարակային և միջազգային հակակշիռ հաստատելու և ընկերավարութեան իրականացման համար հող պատրաստելու:

III

Աշխատաւոր դասակարգի պայքարը տազնապի դէմ հանդիսանում է, միաժամանակ, պայքար քաղաքական իշխանութիւնը նւաճելու համար: Կազմակերպուած աշխատաւորութիւնը կարող է տազնապի հետևանք հանդիսացող կարիքն ու թշուառութիւնը ամբողջ աշխարհում մեղմացնել և, դրամատիրական տնտեսութիւնը վերացնելով, վերացնել տազնապիները այն չափով միայն, ինչ չափով որ նա իւրաքանչիւր երկրում կամբարայիդէ և կրեցարձակ էր դիւրեքը դասակարգային կուլի մէջ: Քաղաքականութեան և տնտեսութեան իրար հիււաւած լինելը երբեք այնքան պարզ չէ եղել, որքան ներկայիս: Սե երբեք այնպէս անհրաժեշտ չէ եղել, ինչպէս այս արտասփիլի վայրկեանին, որ միջազգային աշխատաւորութիւնը լարի իր բովանդակ ուժերը, միանայ և խտացնի իր շարքերը:

Դրամատիրական անիշխանութեան գոհերը միայն արդիւնազործական և երկարգործական բանտները չեն: Դրամատիրական կենտրոնացումը սեփականացրել և աղքատացրել է միջին խաւերը և անյայս կացութեան մասունը մտաւորականութիւնն ու երկրասարդութիւնը: Աշխատաւորութիւնը կող է անում դրամատիրական տնտեսութեան այս նոր գոհերին՝ վճռական պայքար մղելու ընդհանուր հակառակորդի դէմ:

Ընկերավարութիւնը մարդկային համերաշխութեան գերագոյն արտայայտութիւնն է: Նա կող է անում հոգեկան և բարոյական բոլոր ուժերին, որոնք ընդվզում են ընդդէմ դրամատիրութեան և ընդդէմ ամէն մի տրնտեսական սխտեմի, որ բացառապէս անձնական շահով է ղեկավարուում, որ անարդարանալի դասակարգային առանձնաշնորհումների վրա է հիմնուած և որ արելիք է հանդիսանում մարդկութեան ջախջախիչ մեծամաս-

նութեան համար՝ ազատ անհատականութիւն զարգացրելու:

Տնտեսութիւնը փոխակերպելու հսկայական դործի ժամանակ, ոչ մի կողմնակի ուժ չէ օգնելու աշխատուոր դասակարգին: Բայց ոչ մի կողմնակի ուժ էլ ի վիճակի չէ լինելու կատարելու այս դործը: Աշխատուոր

դասակարգը պէտք է օգտագործէ դասակարգային կըրօի բոլոր կարելիութիւնները, որպէսզի, տնտեսական շտեմբեակ տազնապի ճնշման տակ, կարողանայ միջնագոյնորէն անդրադարձնել ընկերային ղեկախոնի յարձակումները և իրականացնել ընկերավարութիւնն ու ժողովուրդները իսկական խաղաղութիւնը:

Բ Ա Ն Ա Ջ Ե Ի Ե Ր ՕՐԱԿԱՐԳԻ Դ. ԿԵՏԻ ՄԱՍԻՆ

«Կանանց Միջազգային Խորհրդաժողովի
Տեղեկագիրը»

Ը. Ա. Համադումարը հաստատում է Ընկերվարական Կանանց Չորրորդ Խորհրդաժողովի հանած բանաձևերը:

Այս բանաձևերը բաղկացած են երեք մասից: Առաջին մասի նիւթն է «Ընկերվարական կանանց շարժման յառաջդիմութիւնները Բրիտանի Խորհրդաժողովից ի վեր»։ Յառաջդիմութիւնները վերաբերում են 1. Կանանց ընտրական իրաւունքին, 2. Կանանց կազմակերպութիւններին, 3. Ամուսնացած կանանց քաղաքացիական իրաւունքներին և 4. Մայրութեան հետ կապւած հարցերին:

Երկրորդ մասի խնդիրն է կազմում «Քաղաքական յետադիմութեան (ղեկախոն) ազդեցութիւնը կնոջ ազատութեան վրա»:

Երրորդ մասը նւերւած է «Կանանց աշխատանքի խնդիրներին», որոնք են. 1. Կնոջ աշխատանքի իրաւունքը. 2. Կինը արդիւնազորութեան և առևտուրի մէջ. 3. Կինը գիւղատնտեսութեան մէջ և 4. Տնային սպասարկութիւն:

Այս բոլոր հարցերը ճնշւած և բանաձևւած են համաձայն ընկերվարութեան սկզբունքների և Ը. Ա. Ինտերնասիոնալի քաղաքական ուղեգծի:

Նմոյշի համար առաջ են բերում Կանանց Խորհրդաժողովի ընդունած և Ը. Ա. Ինտերնասիոնալի կողմից վաւերացւած բանաձևերից երկուսը.

Կանանց ընտրական իրաւունքը

Խորհրդաժողովը ողջունում է այն քաղաքական յառաջդիմութիւնները, որոնք, կանանց քաղաքական իրաւահասարակութեան ճանապարհի վրա կատարւած են Կանանց Միջազգային վերջին Խորհրդաժողովից ի վեր, որ կայացաւ Բրիտանիում, 1928 ին: Առանձնապէս ողջունելի է այս յառաջդիմութիւնն Անգլիայում, ուր, չնորհիւ կանանց իրաւահասարակութեան, Աշխատուորական Կուսակցութիւնը ընտրական յաղթանակ տարաւ. 1929ի մայիսին և որի հետևանքով երկու աչքի ընկնող ընկերակցութիւնը կառավարութեան մէջ մտան:

Միևնոյն ժամանակ Խորհրդաժողովին իր ցատումն է արտայայտում, որ Ֆրանսայի, Իեյլիի և Զւիցերիայի պէս խիստ զարգացած, քաղաքակիրթ և վաղուց ի վեր ժողովրդատիրական կարգեր ունեցող երկրները խայտառակօրէն չեն մնում այս տեսակէտից: Խորհրդաժողովը ցատում է նաև, որ մէ քանի ուրիշ երկրներում, ինչպէս Լատվիան, կանայք, չնորհիւ դուրսէն ունեցող աննպաստ ընտրական սխառեմի, գործ-

նականապէս զրկւած են ընտրելու իրաւունքից, թէև այդ երկրներում ընտրական իրաւունքը ընդհանուր է: Խորհրդաժողովը նորից մի անգամ էր անվերապահ համերաշխութիւնն է յայտնում այս երկրների ընկերակցութիւններին, որոնք քաղաքական և տնտեսական իրաւահասարակութեան համար կրկնակի պայքար են մղում, և կոչ է անում Ը. Ա. Ինտերնասիոնալին յարած կուսակցութիւններին մէջ գտնուող ընկերակցութիւններին և ընկերներին՝ բարոյապէս և քարոզչութեամբ նեցուկ հանդիսանալ իրաւագուրդ բողոքելին մասնաւոր այն երկրների մէջ, որոնք ժողովրդատիրական կարգեր չունին: Խորհրդաժողովը ողջունում է Իեյլիի, Ֆրանսայի և Զւիցերիայի կուսակցական համադումարների որոշումները, որոնք ընկերվարական կուսակցութիւններին խղիւր են դարձնում կանանց քաղաքական իրաւահասարակութեան նաճումը, և կոչ է անում ընկերներին, որ նրանք, աւելի մեծ շարժով քան մինչև հիմա, տրամադրեն իրենց ուժերը իրականացնելու արջարութեան այս համեստ մասնիկը:

Առ այս, Խորհրդաժողովը ողջունում է նաև, որ Սլոակիական Հանրապետութեան սահմանադրութիւնը մշակող Յանձնախումբը, սպանիական ընկերվարականների ազդեցութեան շնորհիւ, կանանց ընտրելու և ընտրելու իրաւունքը մտցրել է սահմանադրութեան նախագծի մէջ:

Ա. Ը. Ինտերնասիոնալի Համադումարի ներկայացուցչութիւնները յայտնում են իրենց հաճախանքը և ընկերվարական համերաշխութեան ուխտը բոլոր կանանց որոնք անագատ և ճորտային կեանքի են մատնւած, և գոչում — Պաշտպանեցէ՛ք! Միացէ՛ք! Խոսքեր Ը. Ա. Ինտերնասիոնալի դրօշի տակ տակ պայքարող կանանց շարքերը!

Քաղաքական յետադիմութեան ազդեցութիւնը
- Կնոջ ազատութեան վրա.

Փաշիդը սպասում է ոչ միայն ընկերային և քաղաքական ընդհանուր նաճումներին, որոնք կատարւած են միջազգային ընկերվարութեան զարգացման և ազդեցութեան շնորհիւ, այլև առանձնապէս վտանգում է կնոջ քաղաքական իրաւունքները և նրա անկախութիւնը հասարակութեան և պաշտօնավարութեան մէջ: Բռնութեան և ինքնակալութեան վրա հիմնւած Փաշիդը նշանակում է վերջնական կասեցում և մինչև իսկ ոչնչացում այն յառաջդիմութեան, որ երևան է դալիո կանանց իրաւահասարակութեան և ազատութեան համար մղուող պայքարի մէջ, աշխարհի բոլոր կողմերում: Փաշիդը ծայր աստիճանի հրահրում է մարդկային այն յոռի յատկութիւնները, որոնք խիստ

ընդդիմակայ են կնոջ բարեկեցութեանը ընտանիքի, ընկերային կեանքի, տնտեսութեան և պաշտօնավարու-թեան մարզերի մէջ:

Նա բողջավառում է ազգայնական կրքերը, թունաւորում երիտասարդութիւնը շղջէն և բռնապաշտական մտայնութեամբ և Փաշխատական ընթացի դէմ բարձրացող ներքին դժգոհութիւնները ուղղելով դէպի արտաքին աշխարհակալութիւն և տիրապետութիւն՝ նոր պատերազմ է նախապատրաստում:

Սրա համար էլ, Ը. Ա. Ինտերնասիոնալի մէջ միացած կանայք դիտակցում են, որ իրենք պարտակալութիւն ունին անաջին գծի վրա կանգնել Փաշիզմի և յետադիմութեան դէմ ընձեռուած պայքարում: Ինչպէս մինչև հիմա, նոյնպէս և այսուհետև նրանք հաւատարիմ պիտի մնան ընկերավարութեան հին ուսմունքի վրա՝ թէ աշխատաւոր դասակարգի ազատագրութիւնը կարող է դուրս դալ միմիայն այրերի և կանանց միահամուռ դասակարգային պայքարով:

Մարդկութիւնը դէպի ժողովուրդների մի նոր քաւանդանոց առաջնորդելու Փաշխատական միտումները յետ մղելով, ընկերավարութիւնը կող է անուռ կանանց, որ իրեն նոր կեանքի բաշխողներ և պաշտպաններ՝ ճարկատ յարդարեն պայքարող աշխատաւորութեան հետ միասին՝ ընդդէմ Փաշիզմի և պատերազմական գրգռութիւնների:

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ն Ե Ր
ՕՐԱԿԱՐԳԻ Վ ԿԵՏԻ ՄԱՍԻՆ

Կազմակերպական հարցեր

Ինչպէս նախորդ համազումարներում, Վեննայի Համազումարում ևս Ը. Ա. Ինտերնասիոնալը, օգուտե-

լով վերջին տարիների փորձերից՝ մի քանի փոփոխութիւններ կատարեց իր Կարձակերպական Կանոնագրի մէջ:

Կատարած փոփոխութիւնները հետեւեալներն են.

1. Մինչև արժ մեծ կուսակցութիւնները կարող էին առ առաւելն 80 պատգամաւորով մասնակցել Համազումարին: Հիմա այդ թիւը իջնում է 60ի:

2. Ըստ հին Կանոնագրի, կուսակցութիւնները մասնակցում էին Գործադիր Կոմիտէին հետեւեալ ձևով. Համազումարում 21 և աւելի պատգամաւոր ունեցող կուսակցութիւնը Գործադիր Կոմիտէին տալիս էր երեք ներկայացուցիչ, 11-20 պատգ. ունեցողը՝ 2 ներկայացուցիչ, 2-10 պատգ. ունեցողը՝ մէկ ներկայացուցիչ, 1 պատգ. ունեցող կուսակցութիւնները, իրար հետ Համաձայնութեան գաղով՝ երկուսով միասին տալիս էին 1 ներկայացուցիչ:

Սրա փոխարէն, հիմա հաստատուած է հետեւեալ կարգը. 27 և աւելի պատգ. ունեցող կուսակցութիւններ տալիս են Գործադիր Կոմիտէին 4 ներկայացուցիչ, 16-26 պատգ. ունեցողները՝ 3 ներկայացուցիչ, 8-15 պատգ. ունեցողները՝ 2 ներկայացուցիչ, 2-8 պատգամաւոր ունեցողները՝ 1 ներկայացուցիչ, 1 պատգ. ունեցողների համար մնում է հին կարգը: Սակայն, սրանցից ամէն մէկին իրաւունք է տրուում խորհրդակցական ձայնով ներկայացուցիչ ուղարկել Գործադիր Կոմիտէի նիստերին, եթէ փոխադարձ համաձայնութեամբ ընտրուած պաշտօնական ներկայացուցիչը իր կուսակցութեանը չէ պատկանում:

3. Ըստ նախկին Կանոնագրի՝ Գործադիր Կոմիտէի Բիւրօն բաղկացած էր 9 անդամից: Հիմա նա պիտի բաղկանայ 11 անդամից:

Թ Ղ Թ Ա Կ Ց ՈՒ Թ Ի Ի Ն Ն Ե Ր
ԱՐԵՒԵԼԵԱՆ ՆԱՀԱՆԳՆԵՐԷՆ

(Սեփական թղթակցութիւն)
..... 6 Յունիս.

Թիւրքիոյ ներսերէն ստացւող լուրերը ցոյց կուտան, որ կացութիւնը բնաւ այն չէ որ կաշխատին ներկայացնել զեմպական Թիւրքիոյ ներկայացուցիչները: Դրութիւնը, մասնաւորապէս, խառնակ է ու ձգւած Արևելեան Նահանգներու՝ Հայաստանի և Գիւրջիստանի մէջ: Կառավարութիւնը միշտ կը պահէ զսպողական ուժեր և բացառիկ միջոցներու կը դիմէ երկիրը անիշխանութենէ փրկելու համար...

Արևելեան Նահանգներու դիւրորական ոյժը կը կազմէ Դրդ գորբաբանի Բէնան փաշայի հրամանատարութեամբ: Ապա՝ տեղական զէրգերէ կազմուած միլիտներ: Եւ Ուրբայի ու Մարտինի մէջ գտնուող երկու միւսայի ալայները: Զինուորական անջուր ուժեր չկան: Զօրքերը համախումբ կը մնան՝ վախճանով յարձակման հնթարկելէ ու մաս-մաս ջարդելէ: Ո՛չ մէկ վայրի մէջ մոքքաներ կամ բարաբոյներ գոյութիւն ունին: Զինուորական ուժերը կը գտնուին միայն զիսուր քաղաքներու մէջ:

Յուլիսի սկիզբներէն Դրդ գորբաբանակի մեծ մարշալը շարժեցաւ Վան-Մուշ-Արարատ ուղղութիւններով: Ամբողջ ձեզիրէն մինչև Սղբրդ բացարձակ ամայութիւն կը տիրէ. ո՛չ մէկ զինուորական ոյժ կամ կայան: Նոյն վիճակը նաև Տիւրքիանի կրտէն մինչև Սասուն: Այս վերջինը կիսանկար զիճակ ունի:

Մուշի շրջանի մէջ կը դործէ համբաւաւոր զէրդ Սէիտ խանը, որն իր մարդոցմով այս զարուհն է վեր 12 մեծ ճակատամարտ է ունեցած: Թիւրքերը զինքը ընկճելու ամէն փորձ ընելէ և անյաղողութեան մասնակցել վերջ, կը սկսին ամէն օր Մշոյ շրջանի մէջ դիւրդեր այրել և կամ ամէն դիւրի մէջ 8-10 այրեր հրացանադարկ ընել իրրև Սէիտ խանի ժամանակողներ: Այս պատրաստով 80 հոգի սպանուած են: Հրդեհուած են Սէիտ խանի դիւրդեր և այդ հրդեհին մէջ այրուած է Սէիտ խանի վեց տարեկան Բիւզպայա անուն աղջիկը: Ըսպանուածները ամբողջ, ի հարկէ, ծերերն են, որովհետև երիտասարդները կապաստանին լեռները: Կիները կենթարկին բռնաբարութեան ու զանազան խոշտանգումներու...

Այս անտանելի կացութիւնը կը ստիպէ Մէիտ խանը իր մարդոցմով հետանալ շրջանէն: Կուզան Տիգրանակերտի շրջանը: Մուշէն մինչև Տիգրանակերտ, ծածկն տեղ, կը վայելէ քիւրդերու անխորտ օտանդակութիւնն ու զուրկութիւնը: Տէլիլիէ պտորը 10 գինւորներէ բաղկացած թիւրքական ջոկատ մը կը փճացնեն: Թիւրքերը կը տեղեկանան, 4000 գինւոր շարժման մէջ կը դառնի, Տիգրանակերտի և Մարտինի միջև Մէիտ խանը օղակի մէջ կանուխ: տեղի կունենայ անհաւասար և հերոսական ճակատամարտ մը: Ըմբոստները կը գործածեն իրենց հետ ունեցած «մաքիմալը քիւֆէնկները»: Կոխը կը տե՛ն մինչև երեկոյ: Օղտելով դիւրեւայ մութէն, Մէիտ խանը և իր զինակիցները, զիւրջ միլիոններու օտանդակութեամբ, կը յաջողին ճեղքել պաշարման շղթան և երկու գերի ստելով՝ խոյս կուտան՝ սպանելով աւելի քան 40 գինւոր: Պաշարման վայրը անձնապէս փութացող 7ըզ զօրբարձնակի հրամանատար Քէնան փաշան զինուորական հրամանատարի երեսին կը թքնէ՝ այսքան անպատու պարտութեան մը մատուած ըլլալուն համար և անմիջապէս պաշտօնանկ կրնէ:

Տնտեսական կացութիւնը ընդհանրապէս ամբողջ թիւրքերի և մասնաւորաբար Արևելեան Նահանգներու մէջ չափազանց վատ վիճակ մը կը ներկայացնէ: Հակառակ տուրքերու վերաբերմամբ զօրծաղբւած անտանելի միջոցներուն և բարբարոսական ձեւերուն, փաստ է, որ Արևելեան Նահանգներու պետական ծախսերը Անգլիան կը հագայ:

Հակառակ թիւրք կառավարութեան վերջին որդեգրած փաղաքշական քաղաքականութեան և կաշառելու զանազան միջոցներու զիւրջ ցեղապետներու վերաբերմամբ՝ զիւրջ ժողովուրդի ատելութիւնը աւելի ու աւելի կը սաստկանայ թիւրքերու հանդէպ: Երկու ամիս ստալ Տիարպէշերի շրջանին մէջ Նապպատական ահազին կալածներ զիւրջ պէյերու իբր նէէր տուած են, բայց ոչ ոք չէ տեղաւորած:

Վերջին ամսայ ընթացքին գրեթէ մէկը միւսի ետե՛ն տեղի ունեցան երկու նշանաւոր տորոներ, որ հողերանական ահազին նշանակութիւն ունեցան: Յունիս 10-ին, երեկոյան, Տէրիկի մէջ, ատրճանակի երկու հարածներով սպանւած է իր թիւրքատիրութեամբ ծանօթ զաւաճան զիւրջ Սալիհ աղան: Ահարեկի՛՛՛ը ազատ է:

Այս Սալիհ աղան, հայերու տեղահանութեան շրջանին, եղած է միլիոններու պետ և կազմակերպած է

հայերու շարքը: Երեսփոխան և նախկին հանրօգուտ շինութեանց նախարար տիարպէշերցի հայտնաց Բիրինճի գառիի ալ բազուկն էր, Միլիական շարժման շրջանին եղած է Տէրիկի միլի ուժերու պետ և Քրանայցիներու Բասիւ-Այն մտնելու ժամանակ կազմակերպած է դիմադրութիւնը: Ստացած է հարապ մետալիաւր: Շէյխ Սալիհի ապստամբութեան օրերին, իր հրամանին տակ ունենալով 400 մարդ, գնաց պաշտպանելու: Տիարպէշերը զիւրջ ըմբոստներու դէմ: Շէյխ Սալիհի զագաներէն 9 հոգի ձերբակալելով՝ տարած-յանձնած է պատերազմական ատեանին, որը բոլորն ալ դատապարտեց կախաղանի: Մինչև վերջերս ալ, իր շրջանին մէջ, պատուհաս էր իր ազգակիցներու գլխին, կատաղի թըշնամի զիւրջ ազատազրկան զորոճնէութեան:

Սալիհ աղայի ահաբեկումէն շարաթ մը յետոյ, Մէվլէի մէջ, սրճարանի մը առջև, օրը ցերեկով, ատրճանակի հարածներով զետնի կը տապալւի ու կը մեռնի՝ սէվէրէկցի յայտնի դահիճ Մէհմէտ Էմէնը: Ասոր ահաբեկիչն ալ կազատի:

Այս Մէհմէտ Էմինը տղան է սէվէրէկցի յայտնի օտանը պաշը դասէ Մահմուտ Բֆէնտիի, որ տեղւոյն երեսփոխանն է: Տրանսպիներու Ուրֆան զբաւած ժամանակ միլիլ ուժերու պետ էր և զործակից նշանաւոր Ալի Սաիպի և ուրֆացի Հաճի Քեամիլզատէ Պէլտոյի՛՛ Ռէիաի Հաճի Մուսթաֆայի: Տրանսպի զինուորներու շարքաւարներէն մէկը: Շէյխ Սալիհի ապստամբութեան օրերուն իր չէթնակներով զործակցած է թիւրք բանակին: Նոյնպէս ստացած է հարապ մետալիաւր: Մագու՛մով զիւրջ, բայց ապրելակերպով ու զործով իսկական թիւրք՝ տիրական դէմք էր Ուրֆայի և Մէվլէի շրջանին մէջ: Կատաղի թըշնամի էր զիւրջ յեղափոխական զործուճէութեան:

Մէկը միւսի ետե՛ն կառարւած այս ահաբեկումները ա՛ն ու սարսափի մատնած են թիւրքատէր զիւրգերը և շրջանի պաշտօնէութիւնը:



Ա Ր Տ Ա Ք Ս Ո Ւ Մ

Հ. Յ. Դաշնակցութեան Եւրոպայի շրջանի կազմի անդամ Մարտիրոս Սարեան արտաքուստ է Հ. Յ. Դաշնակցութեան շարքերէն, իր եակակարգապահական և պառակալիչ արարքներու պատճառով:

Հ. Յ. Դ. ԲԻԻՐՕ

Ք Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Ի Թ Ի Ի Ն

Ներգաղթ (Ռմբազարկան)	193
Խօսքեր և վիպակներ (Սիզմա)	195
Անգլիական տազնապը (Ս. Մաւ.)	201
Ընկերակարկան շարժումը քուսով (Ա. Արիւսեան)	203
Մարքսիզմ և ազգային հարցը (Գ. Գիւզալեան)	207

Ինտերնասիոնալի Համագումարները (Պատգամաւոր)	212
Թուրքիոյ շուրջ	213
Ինտերնասիոնալ	217
Թղթակցութիւններ	223

« Գ Ր Օ Շ Ա Կ » - Ի

Թիւմ արժէ 2 ֆր. 50 սանիւն .

Gerante: Delacourville Hambartoumian.

« Գ Ր Օ Շ Ա Կ » - Ի հարցնէ՛

M-le S. AGOPIAN
5, rue des Gobelins, PARIS (13^e)

Imp. de Navarre, 5, rue des Gobelins, PARIS (13e)